

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Հեռու մասնք մեր կեանքը ապականող մոլութիւնները	89
--	----

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՂԱԿ

ԽՄԲ. — Վեհափառ Հայրապետին ցարդ հրապարակած Կոնդակներուն եւ Օրհնութեան Գիրերուն հաւաքածոն	94
--	----

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Կիպրոսի մէջ	107
Հրաւերով Զաթարի Էմիրին Վեհափառ Հայրապետը Զաթարի մէջ	111
Սուրիոյ Դեսպանին կողմէ ճաշ ի պատիւ Վեհափառ Հայրապետին	117

ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ

ԹԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ — Հայ Սուրբեր մինչեւ ԺԵ. դար (վաւերագիրներ)	118
---	-----

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

ՉԱՐԵՅ ԱՐՔ. ԱՉՆԱԴՈՐԵԱՆ — Սերտողութիւն Մատթեոսի Աւետարանին	123
Տ. Ա. — Ներածութիւն Սուրբ Գիրքի սերտողութեան	128

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԵՄԷՉԵԱՆ — Եկեղեցւոյ պատմութիւն (Թրգմ.)	135
--	-----

ԱՐԽԻՄՅԻՆ ՆԻԹԵՐ

ԽԱԶԻԿ ԸՅՆՅ. ԳՈՌԻՉԵԱՆ — Սո՛ւրբ, թե՛ սո՛ւր դատաւոր	139
ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ — Կրթութեան մարդը Գեորգ Դ.ի մէջ (մանկավարժական աւարտաճառ)	144
ՎԱՅԷ ՕՇԱԿԱՆ — Սփիւռքահայու տաճնապետ	150

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆ — «Ես այդ ոչինչն եմ»	159
ՄԱԿԱՐ ՎՐԴ. ԱՇԳԱՐԵԱՆ — Մարդուն վիճակը անկումէն առաջ եւ ետք, Մարիամ, Մարթա եւ լաւ բաժինը	162
ԳԱՌՆԻԿ ԸՅՆՅ. ԳՈՅՈՒՆԵԱՆ — Դրախտի մասին	167

ՏՕՆԱԿԱՆ	170
---------------	-----

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	183
-----------------------------	-----

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	184
----------------------	-----

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	188
-------------------	-----

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	192
------------------------------	-----

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ	205
--	-----

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՀԵՌՈՒ ՄՆԱՆՔ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ԱՊԱԿԱՆՈՂ ՄՈԼՈՒԹԻՒՆՆԵՐԷ

Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Հայրապետական պատգամին, տրուած Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, Միջինքի առթիւ, 30 Մարտ, 2011-ին: Ձայն կը հրատարակենք փոխան խմբագրականի, Վեհափառ Հայրապետին շօշափած այնքան այժմեական նիւթերը մեր ընթերցողներու ուշադրութեան յանձնելով:

Հայ եկեղեցոյ կեանքէն ներս Մեծ Պահօր ինքնահայեցողութեան ու ինքնաբնութեան կարեւոր շրջան մըն է: Արդարեւ, մեր եկեղեցին հոգեթով մեղեդիներու ու խոգեխոով աղօթքներու ցամբով հաւատացեալը կը հրաւիրէ ինքզինք ըլլալու իր աստուածաստեղծ պատկերին ու աստուածատուր կոչումին համաձայն եւ իր անձը, կեանքը ու գործը վերանայումի ենթարկելու՝ անկեղծ մօտեցումով, իոր ապաշխարութեամբ ու ինքնասրբագրումի յանձնառութեամբ: Հո՛ւ կը կայանայ ճշմարիտ իմաստը ու նպատակը Մեծ Պահօին:

Քրիստոնէական կեանքը դէպի Քրիստոս ուղղուած ընթացք մըն է, որ կ'ենթադրէ կեանքի ու գործի իւրայատուկ ոճ ու որակ: Դէպի Քրիստոս ընթացող այս ցանապարհին վրայ մարդը, որպէս անկատար արարած, պիտի

մոլորի ու մեղանչէ՛ դաւաճանելով իր նուիրական կոչումին: Դիւրին չէ Քրիստոսի հետեւիլը. սակայն մկրտութեամբ ու Քրիստոսի խորհրդական մարմնոյն՝ եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մեր մասնակցութեամբ ուխտած ենք հաւատարմօրէն հետեւիլ Քրիստոսի:

Մեծ Պահիւր դէպի Քրիստոս առաջնորդող ճամբուն վրայ հանգրուան մըն է, ուր անհրաժեշտ է կանգ առնել ու վերաճնութեան ենթարկել մեր թէ՛ անձնական ու թէ՛ հաւաքական կեանքը՝ խոստովանութեան ու ապաշխարութեան ճամբով: Քիչ առաջ դարձեալ լսեցինք դարեր շարունակ մեր եկեղեցւոյ սրբազան կամարներուն տակ կարդացուող ու մարդու ահաւոր մեղքերը ու մոլութիւնները պարզող խոստովանանքը: Մարդու կեանքը որքա՛ն սարսփազդու մոլութիւններով է լեցուն. մարդը որքա՛ն երեւելի ու աներեւոյթ սատանաներու կողմէ յարձակումի կ'ենթարկուի շարունակ... Քրիստոսի պայծառակերպող ներկայութեամբ եւ անկեղծ ոգիով ու մաքուր սրտով կատարուած խոստովանանքը՝ ինքնաբիրեղացման առաջնորդող ու մարդը հոգեպէս հզօրացնող առաջին քայլն է:

* * *

Միջինի այս առաւօտուն հայրական Մեր խօսքը կ'ուղղենք Լիբանանի հայութեան ճամբով մեր ժողովուրդի բոլո՛ր զաւակներուն: Այս առիթով կ'ուզենք ընդհանուր գիծերով անդրադառնալ մեր անհատական թէ՛ հաւաքական կեանքին առնչուած կրօնական ու ազգային իմաստով չորս յոռի երեւոյթներուն, որոնք սկսած են իրենց ներկայութիւնը զգալի դարձնել մեր ազգային կեանքէն ներս:

Ա) Եսասիրութիւն: Ընկերութիւն մը, ազգ մը կամ կազմակերպութիւն մը բաղկացած է անհատներէ: Անհատը արժէք է: Քրիստոնէութիւնը յատուկ շեշտ կը դնէ անհատ-արժէքին վրայ: Քրիստոս թելադրեց ինքսուսինը ոչխարները թողուլ եւ մէկ ոչխարին ետեւէն երթալ (Մատթ. 18, 12): Անհատն է որ իր հաւատով, ստեղծագործ ուժով, գործօն մասնակցութեամբ ու ամբողջական նուիրումով կը հզօրացնէ ազգը, ընկերութիւնը կամ կազմակերպութիւնը: Սակայն, անհատը արժէք է երբ իր ունեցածը ու ի պահանջել հարկին նոյնիսկ իր անձը ի սպաս կը դնէ հաւաքականին: Անհատը արժէք է երբ իր անձէն վեր ընդհանրականին ու հաւաքականին մէջ կը տեսնէ գերագոյն արժէքը: Ընկերութիւնը, պետութիւնը կամ կազմակերպութիւնը նահանջի ճամբան կը բռնեն երբ զանոնք բաղկացնող անհատները հաւաքականը անտեսելով իրենց անհատական շահերը գերիվեր կը նկատեն ընդհանրական շահերէն:

Մեր կեանքին ներս նման երեւոյթներու առկայութիւնը սկսած է զգալի դառնալ բոլոր մակարդակներուն վրայ: Զմոռնանք երբեք որ եկեղեցւոյ տէրը հոգեւորականը չէ, այլ Քրիստոսն է. պետութեան մը տէրը նախագահը չէ, այլ Ժողովուրդն է. կազմակերպութեան մը տէրը դեկավարը չէ, այլ կազմակերպութեան անդամներն են հաւաքաբար: Անհատը ծառան է միայն եւ համարատու հաւաքականին: Եսակեդրոն մօտեցում ու գործունէութիւն մարդը կ'առաջնորդեն մեծատիրութեան: Նման մտածելակերպ ու գործելակերպ համամարդկային բարոյական արժէքներու համակարգը եւս կը մերժէ: Հետեւաբար, մեր կեանքին պէտք է վանենք ամէն տեսակ մտայնութիւն ու վիճակ, ուր «ես»ը կը տիրապետէ՝ ի հեճուկս հաւաքականին ու ընդհանրականին:

Բ) Օտարամոլութիւն: Ազգային ու բարոյական իմաստով այլ մոլութիւն մըն է սա, որ սկսած է մեր կեանքը ներսէն կրծել, մաշեցնել ու մեզ հեռացնել մեր ինքնութենէն ու արմատներէն: Մեր ազգը ցեղապաշտ չէ. ան երբեք ինքզինքն չեւէ ազգէ գերադաս չի նկատեր: Սակայն մենք ունինք մեր իւրայատուկ ինքնութիւնը, մեր աւանդութիւնները, արժէքները, ըմբռնումները: Աշխարհի վրայ գտնուող յետեւ անհատ կոչուած է հաւատարիմ մնալու իր պատկանելիութեան ու անոր խարիսխը նկատուող հայրենիքին, կրօնին ու ազգին: Օտարամոլութիւնը ախտ մըն է, որուն նկատմամբ անտարբեր չի կրնար մնալ յետեւ ազգ:

Այսօր, փաստօրէն, մեր կեանքին ներս ամենուրեք օտարին հետզհետէ ծաւալող ներկայութիւնը նկատելի է մասնաւորաբար մեր երիտասարդ սերունդին մօտ ու մեր ընտանիքներէն ներս: Եւ այս դառն կացութեան որպէս արդիւնք ամուսնալուծումներու եւ օտար դպրոց յաճախող աշխակերտներուն թիւը սկսած է զգալի ան արձանագրել: Օտարը չենք ատեր, հեռու մեզմէ նման ոգի: Միաժամանակ չենք ընդունիր, որ օտարասիրութիւնը դառնայ վնասաբեր մեր ինքնութեան՝ հեռու պահելով մեզ մեր հաւաքական կեանքէն: Եթէ մեր կեանքի այս հանգրուանին բարձրագոյն աստիճանի խստապահանջութիւն չցուցաբերենք այս մեծապէս մտահոգիչ երեւոյթին նկատմամբ, մօտ ապագային, նոյնիսկ հայաւիտ գաղութներէն ներս օտարին օտարացնող ներկայութիւնը պիտի տիրապետէ մեր կեանքին:

Գ) Թմրամոլութիւն: Մարդկային կեանքի ամենէն սարսափազդու ախտերէն մէկն է թմրամոլութիւնը, որ դարձած է արդի ընկերութեան մեծագոյն չարիքներէն մէկը: Ցաւով ու ընդվզումով կ'իմանանք, որ յիշեալ մոլութիւնը սկսած է մուտք գործել նաեւ մեր երիտասարդութեան կեանքէն ներս: Կ'անդրադառնա՞նք արդեօք թմրամոլութեան կրօնական, բարոյական, ազգային ու ֆիզիքական լուրջ հետեւանքներուն...:

Արդարեւ, անցանկապատ աշխարհի մը կը պատկանինք, գոյնզգոյն չարիքներով ու մոլութիւններով լեցուն ընկերութեան մը մէջ կ'ապրինք: Բնականաբար այդ բոլորին ազդեցութեան տակ են նաեւ մեր գաւակները: Սակայն, մեր կրօնական սկզբունքները, մեր բարոյական չափանիշները ու ազգային ըմբռնումները թոյլ պէտք է տան որ մեր գաւակները կոյր կերպով որդեգրեն նման ախտավարակ կենցաղակերպեր՝ դառնալով գերին մարդը բարոյապէս ու ֆիզիքապէս քանդող ներկայ ժամանակներու մոլութիւններուն: Մեր եկեղեցին ու կառոյցները իրենց գերագոյնը պէտք է ընեն փրկելու համար կամայ թէ ակամայ նման վտանգալից կացութիւններու մէջ գտնուող մեր երիտասարդները: Միաժամանակ, բարոյական ու ազգային դաստիարակութեան ցամաքով մեր ընտանիքներն ու դպրոցները պէտք է նախազգուշական ամէն ճիգ ի գործ դնեն առաջին առնելու համար նման մոլութիւններու տարածման մեր կեանքէն ներս:

Գ) Փառամոլութիւն: Մեր հասարակական կեանքէն ներս ներկայութիւն սկսած է դառնալ նաեւ մարդկային այս մոլութիւնը, որուն նկատմամբ աշխարհի բոլոր կրօններու ուսուցումները մերժողական կեցուածք ունին: Քրիստոս իր կեանքով ու գործով եղաւ տիպար խոնարհութեան: Ան իր հետեւորդներուն թելադրեց ըլլալ խոնարհ, հաւաքական վայրերու մէջ առաջին տեղերը չգրաւել:

Փառասիրութիւնը մարդկային կեանքին մէջ բնական երեւոյթ մըն է: Իւրաքանչիւր անձ պիտի ուզէ նոր իրագործումներ կատարել, նոր յաջողութիւններ ձեռք գտնել, իր շրջապատէն յարգուիլ ու գնահատուիլ: Փառամոլութիւնը հակառակն է փառասիրութեան: Ան արժէքը, ցշմարտութիւնը կը տեսնէ անհատի անձին մէջ միայն: Փառասիրութիւնը կը կառչի մակերեսին՝ ո՛չ խորքին, կեղեւին՝ ո՛չ իրաւին, գնայունին՝ ո՛չ մնայունին: Այլ խօսքով, ան հետամուտ է միայն տեսքին, ձեւին, ժամանակաւորին: Արդարեւ, ուր փառամոլութիւն կայ, հոն նաեւ մակարդակի անկում, արժէքի նուազում եւ որակի նահանջ գոյութիւն ունի:

* * *

Բնականաբար, մեր կեանքին մէջ կան նաեւ բազմաթիւ դրական երեւոյթներ, Մեզի ուրախութիւն ու հպարտութիւն պատճառող իրագործումներ: Սակայն միայն դրականին չանդրադառնանք, անով միայն չհպարտանանք. այլ, մեր կեանքը աւելի կազմակերպելու ու մեր կառոյցներուն գործը աւելի կենսաւորելու նպատակապայց մօտեցումով անհրաժեշտ է նաեւ որ

մեր անհատական թէ հաւաքական կեանքի ախտաբանաչումը կատարենք, մեր թերութիւնները տեսնենք, որպէսզի կարենանք միասնաբար սրբագրումի ու վերականգնումի քամբաներ որոնել: Եկեղեցին, որպէս Քրիստոսի փրկագործական խորհուրդին շարունակութիւնը ստանձնած առաքելութիւն, «մարգարէական կոչում» ունի՝ զգաստութեան հրաւիրելու իր գաւակները, անհրաժեշտութեան պարագային գնահատելու ու քննադատելու, եւ իր կեանքի օրինակով ցոյց տալու դէպի Քրիստոս առաջնորդող ճշմարիտ քամբան:

Քրիստոսի գալուստը սպասող Սաղմոսերգուն ըսաւ՝ «Ո՛վ Տէր, *քու քամբաներդ ցոյց տուր ինծի*» (Սղ 25.4): Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ ու ըսաւ «*ես եմ քամբան*» (Յհ 14.6): Այո՛ Քրիստոս ի՛նքն է քամբան, իր անունով մկրտուած մարդոց, ինչպէս նաեւ ողջ մարդկութեան ճշմարիտ քամբան: Այդ քամբան փրկութեան քամբան է: Սակայն չկայ փրկութիւն առանց խոստովանութեան ու ապաշխարութեան: Խոստովանութիւնը Քրիստոսի ներկայութեամբ մեր անձին ու գործին քննութիւնն է. իսկ ապաշխարութիւնը՝ Բեթղեհէմով աշխարհին յայտնուած արժէքներով, սկզբունքներով ու ճշմարտութիւններով մեր կեանքին վերանորոգումն է:

Հետեւաբար, եկէք դառնանք Քրիստոսի, մեր սրտին բովանդակ անկեղծութեամբ ըսելով՝

Ո՛վ Տէր, մեղանչեցի մտածումով, խօսքով եւ գործով, կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ: Օգնէ ինծի ո՛վ Տէր, հեռու մնալու կեանքի տեսանելի թէ անտեսանելի մեղքերէ ու մոլութիւններէ: Մեղայ Աստուծոյ...:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

30 Մարտ, 2011

Անթիլիաս, Լիբանան

ԿՈՆԴԱԿՆԵՐ

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱԲԱՔԱԾՈՆ*



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

(Տիար Նազարեթ Էմիլքեանին, Ս. Մեսրոպ Մաշտոցի շքանշան շնորհելուն առիթով)

Կիպրոսի Հայոց թեմի Կաթողիկոսական Փոխանորդ, Գերաշնորհ Տ. Վարուժան Եպսկ. Հերկելեանի Մեզի ուղղած նամակէն իրագեկ դարձանք, որ չորս տասնամեակներ շարունակ անսակարկ նուիրումով ուսուցչական պաշտօն վարած էք Մելքոնեան Կրթական Հաստատութենէն ներս, Նիկոսիա:

Սփիւռքահայ կեանքի պայմաններուն մէջ Հայ Եկեղեցին եւ Հայ Դպրոցը եղան եւ կը շարունակեն մնալ մեր ժողովուրդի ազգային, կրօնական, կրթական, մշակութային եւ ընկերային կեանքը ամուր եւ անսասան պահող հիմնական երկու սիւները: Դուք, որպէս կրթական մշակ, Ձեր երկար տարիներու ծառայութեամբ մասնակից դարձաք Կիպրահայ մատղաշ սերունդի դաստիարակութեան անդաստանէն ներս կատարուած ջրտուքին: Դժուար է, բնականաբար, մշակին աշխատանքը. սակայն անփոխարինելի է անոր բարոյական վարձքը՝ տեսնել հայ երիտասարդութիւնը զինուած հայեցի դաստիարակութեամբ եւ հայկական բարքերով ու ասանդութիւններով:

Արդ, ընդառաջելով Կաթողիկոսական Փոխանորդ Սրբազանի խնդրանքին, եւ անոր միացնելով Մեր բարձր գնահատանքը, այսու Հայրապետական Կոնդակա Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ՇՔԱՆՇԱՆՆԸ

«Արդար եւ իրաւ» վարձատրութիւն՝ մշակին, որ «արժանի է իր վարձքին»:

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: ԽՄԲ.

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր ընտանեկան պարագաներուն պարգեւէ քաջառողջ եւ երկար տարիներ, որպէսզի վայելէք ուրախութիւնը՝ ի տես Ձեր սերմանած հունտերու պտղատրման Կիպրահայ «փոքր ածու»էն ներս:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տանարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 11-ն Ապրիլի, 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:
Ընդ համարաւ Շ/ՃԼԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

(Դուկտ. Չաւէն Եկատեանին, Կիլիկեան Ասպետի շքանշան շնորհելուն առիթով)

Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնին խորհուրդով զեղուն եւ մեր յարուցեալ ժողովուրդի նահատակաց յիշատակի ոգեկոչման այս օրերուն, հոգեկան ուրախութիւն է Մեզի համար ողջունել Ձեզ, որպէս մեր ժողովուրդի վերազարթօնքին սատարող անձնատրութիւններէն մէկը:

Արդարեւ, սփիւռքահայ պատմութեան վերջին տասնամեակներուն, Ձեր անունը անջնջելի կերպով առնչուած է Սփիւռքի մշակութային ու կրթական կեանքին: Հայ մշակոյթի ծաղկումը ու մարդակերտումի եւ հայակերտումի մեր ճիգին հզօրացումը գրաւականն են մեր ժողովուրդի գոյատեւման: Ձեր ձեռք ձգած նուաճումները մշակոյթի ու կրթութեան բնագաւառներէն ներս ուրախութիւն ու հպարտութիւն կը պատճառեն Մեզի: Այս արագընթաց յառաջդիմութեան մէջ, մեծ եղաւ դերը *Գալուստ Կիլիպէնկեան Հիմնարկութեան* նիւթական անսակարկ օժանդակութեան:

Դուք, որպէս նուիրեալ ծառայողներէն մէկը *Գալուստ Կիլիպէնկեան Հիմնարկութեան*, եւ որպէս Ընդհանուր Տնօրէնը այս բազմօգուտ Հիմնարկութեան Հայկական Գործերու Բաժանմունքին, կը գործէք հետեւողական ծրագրումով, անխոնջ եւ անաղմուկ կերպով: Դուք կը հետապնդէք նուիրական հետեւեալ նպատակները.- Առաջին, զարկ տալ հայ երիտասարդի ուսման ու զարգացման, յօգուտ մեր ժողովուրդի հոգեմտաւոր արժէքներու հարստացման: Երկրորդ, կազմակերպ, կենսունակ ու արդիւնաւէտ դարձնել հայ դպրոցը իր ուսումնական մակարդակով ու հայեցի դաստիարակութեամբ: Երրորդ, միշտ ծաղկեալ պահել հայ մշակոյթի անդաստանը Սփիւռքի տակաւ խոպանացող կեանքին մէջ:

Որպէս շօշափելի արտայայտութիւն Ձեր անձին ու ազօգուտ ծառայութեանց նկատմամբ Մեր ունեցած խոր գնահատանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏԻ ՇՔԱՆՇԱՆՆԸ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր ընտանիքին շնորհէ քաջառողջութեան, յաջողութեան եւ երջանկութեան բարիքներով լեցուն երկար կեանք:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուա կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դռնն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 22-ն Ապրիլի, 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուի Հայոց ՌՆԽԹ:
Ընդ համարաւ Շ/ՃԽԸ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Դոկտ. Միքայէլ Եսայեանին, Իշխանի Կարգի շքանշան շնորհելուն առիթով)

Հայրապետական օրհնութեամբ ու հոգեկան անհուն ուրախութեամբ կ'ողջունենք Ձեր ներկայութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքին մէջ: Արդարեւ, դուք, հիւր չէր այս յարկէն ներս, այլ անոր հարազատ զաւակներէն մէկը: Դուք շառաւիղն էք ԿԻԼԻԿԵԱՆԿԵԱՆ նահապետական ընտանիքին, որուն անունը սերտ առնչութիւն ունի Կիլիկեան Ս. Աթոռի պատմութեան հետ:

Սրտի պարտք կը զգանք այստեղ նշել, թէ *Գալուստ Կիլիկեան Հիմնարկութեան* ներդրումը հայ ժողովուրդի կեանքէն ներս վերջ չգտաւ անոր հիմնադիրներու այս աշխարհէն առյաւէտ մեկնումով, որովհետեւ անոնց շառաւիղները հաւատքով շարունակեցին սկսուած առաքելութիւնը: Ահաւասիկ Դուք, որպէս Պատուոյ Նախագահ *Գալուստ Կիլիկեան Հիմնարկութեան*, եւ հակառակ այն իրողութեան, որ կեանքի պայմաններու բերումով հեռու էք եղած հայ ժողովուրդի առօրեայ կեանքէն, Ձեր սիրտը միշտ տրոփած է հայութեամբ եւ հետամուտ եղած էք տրոփուն պահելու նաեւ *Գալուստ Կիլիկեան Հիմնարկութեան* սիրտը, որպէսզի ան շարունակէ իր աւիշը ներարկել աշխարհասփիտ հայ գաղութներու կեանքէն ներս: Այստեղ կ'ուզենք յատկապէս նշել այն նախանձախնդիր վերաբերումը, զոր ցուցաբերած էք միշտ Կիլիկեան դարատր Սուրբ Աթոռին եւ անոր հովանաւորութիւնը վայելող կրթական-մշակութային Հիմնարկութիւններուն նկատմամբ: Հոգեկան ուրախութեամբ կ'ուզենք հաստատել, թէ *Գալուստ Կիլիկեան Հիմնարկութիւնը* անմարջահ մըն է հայութեան կեանքէն ներս, եւ հայութեան լուսաւոր դիմագիծ մը՝ յաչս աշխարհի օտար ժողովուրդներուն:

Ի գնահատութիւն երկար տարիներ շարունակ մեր ժողովուրդին սատար հանդիսանալու Ձեր տարած ազգօգուտ գործունէութեան, այսու Հայրապետական Կոմիտէի կողմէն կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԻՇԽԱՆԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՆԸ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր ընտանիքին շնորհէ քաջառողջութիւն, Ձեր մէջ միշտ վառ պահէ Կիւլպէնկեան եւ Եսայեան ազնուական ընտանիքներու բոլոր անդամներուն յիշատակը, որպէսզի միշտ վառ մնայ նաեւ Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութեան ջանք հայոց պատմութեան մէջ:

Ողջ լերոսք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դռուն Մայր Տանարիս Սրբոյն Գրիգորի Լուսատրչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 29-ն Ապրիլի, 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:
Ընդ համարաւ Շ/ՃԽԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Հ.Բ.Ը.Մ.-ի Գարուի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանին հիմնադրութեան 60-ամեակին առիթով)

Հայրական սիրոյ ջերմ զգացումներով կ'ողջունենք ՀԲԸՄ-ի Գարուի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանին 60-ամեակը, որ լուսարձակի տակ կը բերէ այս «Փոքր ածու»ին կրթական վաստակը՝ վաթսուն տարիներու վրայ տարածուած:

ՀԲԸՄ-ի Գարուի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանին վաթսուն տարիներու բոլորումը ինքնին վկայութիւն մըն է ուսումնական բնագաւառէն ներս տարուած աշխատանքի մը, որ եղած է հետետողական ու անստուեր: Ընդհանրապէս սփիւռքահայութեան կեանքին մէջ դժուար է հայ դպրոց պահելը: Լիբանանի մէջ այդ դժուարութիւնը առաւել եւս սուր հանգամանք ստացաւ երկրին մէջ տիրող տագնապալից շրջանին: Դժուարութիւններ, զորս այլապէս յաղթահարել կարելի պիտի չըլլար, եթէ հայ դպրոցէն ներս տարուած կրթական գործը չկատարուէր նուիրումով, զոհողութեամբ ու անձնուրացութեամբ: Այս հաւատքով գործեց ՀԲԸՄ-ի Գարուի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանը, որուն պատասխանատուները արդար հրճուանքը կ'ապրին այսօր անոր հիմնադրութեան 60-ամեակին նշումով:

Այս առթիւ, բարձր կը գնահատենք Գարուի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանի վաստակաշատ սպասաւորները՝ ՀԲԸՄ մեծ ընտանիքէն սկսեալ մինչեւ վարժարանի նախկին թէ ներկայ տնօրէններն ու ուսուցիչները: Թող Աստուած օրհնէ անոնց նուիրեալ ծառայութիւնը՝ յօգուտ մեր պարմանուիներու կրօնական ու հայեցի առողջ դաստիարակութեան:

Ի գնահատութիւն ՀԲԸՄ-ի Դարուիի Յակոբեան Աղջկանց Երկրորդական Վարժարանի 60-ամեայ կրթական վաստակին, այսու կը շնորհենք Հայրապետական Օրհնութեան Մեր Գիրը եւ կը մաղթենք, որ ան գօտեպնդէ վարժարանի բոլոր պատասխանատուները ու դառնայ նոր խթան առաւել նուիրումով շարունակելու իրենց կրթական-դաստիարակչական աշխատանքը՝ նորանոր «ամեակ»ներու հեռանկարով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 5-ն Մայիսի 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԾ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Հ.Բ.Ը.Մ.-ի Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարանի հիմնադրութեան
25-ամեակին առիթով)

Հոգեկան գոհունակութեամբ իմացանք, որ այս տարի Հ.Բ.Ը.Մ.-ի Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարանը կը բոլորէ իր հիմնադրութեան 25-ամեակը: Առաջին հերթին յարգանք կ'ընծայենք Վարժարանի բարերար Գեորգ Պօղոս Կարմիրեանի յիշատակին, որ հակառակ Լիբանանի մէջ տիրող դժուար պայմաններուն, հաւատաց հայ դպրոցի կենսական առաքելութեան եւ հիմնադիրը հանդիսացաւ այս վարժարանին: Բարձր կը գնահատենք վարժարանին մէջ ծառայած ու այժմ ծառայող բոլոր կրթական մշակները, որոնք եղան «յաղթահասակ սերմանողներ»ը այս «փոքր ածու»ին:

Տարիները արագ կը թաւալին, եւ մենք յաճախ առիթը կ'ունենանք «ամեակ»ներ նշելու եւ կատարուած աշխատանքի մը գնահատանքը կատարելու: Քսանրհինգ տարիները համեմատաբար կարճ ժամանակաշրջան մը կը կազմեն հաստատութեան մը կեանքէն ներս, սակայն անոնք կրնան յստակ պատկերացում տալ անոր որդեգրած ուղիին, որ դէպի ապագայ պիտի առաջնորդէ զինք: Ուրախ ենք այստեղ հաստատելու, որ քսանրհինգ տարիներ բոլորած Հ.Բ.Ը.Մ.-ի Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարանը լատենտութիւն կը ներշնչէ մեզի, որովհետեւ մարդակերտումի ու հայակերտումի իր առաքելութեամբ արդիւնաշատ դաշտ մը հանդիսացաւ ան Լիբանանահայութեան կեանքէն ներս:

Ի գնահատութիւն Հ.Բ.Ը.Մ.-ի Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարանի 25-ամեայ կրթական վաստակին, այսու կը շնորհենք Հայրապետական Օրհնութեան Մեր Գիրը եւ կը մաղթենք, որ ան գօտեպնդէ Վարժարանի բոլոր պատասխանատուները՝

նոյն խանդով ու նուիրումով շարունակելու իրենց աշխատանքը մեր նոր սերունդի հայեցի առողջ դաստիարակութեան ի խնդիր: Թող Հ.Բ.Ը.Մ.-ի Պողոս Գ. Կարմիր-եան Վարժարանի քառորդ դարու պատմութիւնը դառնայ դարերու պատմութիւն՝ մեր ժողովուրդի տարեգրութեան մէջ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տոաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 17-ն Մայիսի 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Ուրֆայի Հայրենակցական Միութեան հիմնադրութեան 85-ամեակին առիթով)

Հոգեկան ուրախութեամբ կ'ողջունենք Ուրֆայի հերոսական դիցազնամարտի 85-ամեակը, որ բնականաբար մեր աչքերուն դիմաց կը պարզէ էջերը ութսունըհինգ տարիներ առաջ արձանագրուած պատմութեան մը: Պատմութիւն մը, որ 1700-ամեայ հաւատքի արմատներ ունի, եւ որուն թանաքը լեցուն է եղած հաւատքով ու արցունքով, ապա՝ քրտինքով, եւ ահա այսօր հայութեան կեանքը իմաստաւորող ազգային ոգիի անսպառ աւիշով:

Լեցուն է մեր պատմութիւնը դիցազնական պայքարի դրուագներով, որոնցմէ իւրաքանչիւրը կ'արտացոլացնէ պայքարողներու ոգին ու նկարագիրը: Ուրֆայի դիցազնամարտին ընդմէջէն մեզի ներկայացող Ուրֆայի հայութիւնը կարելի է բնորոշել որպէս քաջ, չարքաշ ու տոկուն ժողովուրդ: Երբ կը կարդանք «Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները» մեծածաւալ հատորը, հոն հերոսներու կողքին կը հանդիպինք մեծ թիով հերոսուհիներու, երիտասարդ թէ տարեց, որոնք կռուեցան իրենց հայրերուն ու ամուսիններուն կողքին, եւ իրենց անունները ցարդ մեր շրթներուն վրայ են, որպէս խորհրդանիշ հայ կնոջ յանդգնութեան ու գոհաբերութեան ոգիին: Այո՛, տոկուն է ու հեռատես ուրֆացին: Հայաստանի մէջ թէ Սփիւռքի, ուրֆացին ունի իր Հայրենակցական Միութիւնը, որովհետեւ կը հաւատայ, որ ծննդավայրէն դուրս հարկ է հիմնել հոգետր ծննդավայր՝ պահելու հողէն մեր պապերու երակներուն անցած հաւատքն ու բարքերը, բարբառն ու աւանդութիւնները:

Ուրֆայի հերոսամարտի 85-ամեակի նշման առթիւ, յարգանք կ'ընծայենք բոլոր ուրֆացիներուն: Անոնց՝ որոնք պայքարեցան ու նահատակուեցան ի խնդիր իրենց ազգային իտէպներուն, եւ անոնց՝ որոնք գիտցան պահել նահատակներու կտակը, եւ Ուրֆայի Հայրենակցական Միութիւններ հիմնեցին հոն, ուր քանի մը ուրֆացի քով-քովի եկան՝ Լիբանանի, Սուրիոյ, Եւրոպայի, Ամերիկայի եւ Նոր Եղեսիոյ մէջ, Հայաստան:

Մեր ջերմ մաղթանքն է, որ Ուրֆայի Հայրենակցական Միությունները մնան կանգուն, մեծնան՝ առանց ծերանալու, որպեսզի շարունակեն իրենց ազգամուէր ծառայությունները, միշտ վառ պահեն իրենց հերոսներուն ու հերոսուհիներու ոգին եւ զանոնք փոխանցեն մեր ներկայ ու գալիք նոր սերունդներուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տոաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 3-ն Յունիսի 2000 թուին Զրիարոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Տիար Վահրիճ Դերձեանին, անոր գործունէութեան 60-ամեակին առիթով)

Ուրախութեամբ իմացանք որ 8 Յունիսին Լոս Անճելըսի մէջ յատուկ հանդիսատրութեամբ պիտի նշուի Պրն. Վահրիճ Դերձեանի հասարակական գործունէութեան 60-ամեակը: Ջերմօրէն կ'ողջունենք այս գնահատելի նախաձեռնութիւնը լուսարձակի տակ բերելու անձն ու գործը մարդու մը, որուն ողջ կեանքը եղած է նուիրում, աշխատանք ու ծառայութիւն Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ճամբով մեր ազգին ու հայրենիքին:

Արդարեւ, այսպէ՛ս ճանչցանք Մենք Վահրիճ Դերձեանը անցնող շուրջ 25 տարիներու ընթացքին: Որպէս Առաջնորդ Լիբանանի Հայոց, ու ապա որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ոչ միայն մօտէն ճանչցանք Վահրիճը, այլ նաեւ սերտօրէն գործակցեցանք իր հետ: Երբ սա պահուն որպէս գաղափարակից ընկերներ ու բարեկամներ հաւաքուած էք իր կատարած գործը արժեւորելու, իր ծառայութիւնը գնահատելու, Մեր կարգին Մենք ալ պիտի ուզէինք մի քանի ընդգծումներ կատարել որպէս վկայութիւն ու գնահատանք Վահրիճին երկար տարիներու ծառայութեան:

Ա) Վահրիճ Դերձեան եղաւ ու մնաց *վաւերական* հայ: Ոչ սովորական հայ մը՝ անտարբեր մեր կեանքի տխուր ու ուրախ երեւոյթներուն, մեր կեանքի ելեւէջներուն դիմաց. ոչ անտարբեր հայ մը՝ իր կեանքը իր անձի ու ընտանիքի նեղ շրջագծին մէջ ապրող. ոչ մակերեսային հայ մը՝ ժամանակաւոր զգացումներէ տարուող եւ անկայուն տեսակէտներով իր կեանքը առաջնորդող: Վահրիճ Դերձեան եղաւ այն ճշմարիտ հայը, որ ոչ միայն իր կեանքը ապրեցաւ մեր ժողովուրդի հաւաքական կեանքին մէջ, ոչ միայն գործնապէս մասնակից դարձաւ մեր հաւաքական կեանքի զարգացումներուն ու տագնապներուն, այլ նաեւ իր ողջ կեանքը շաղախեց ու իրագործեց մեր ժողովուրդին արժէքներով, աւանդութիւններով, ձգտումներով ու երազներով: Եղաւ տագնապող հայ, պայքարող հայ. այլ խօսքով՝ վաւերական հայ:

Բ) Վահրիճ Դերձեան եղաւ ու մնաց *գաղափարական* մարդ: Չ'եղաւ կուսակցական՝ բառին նեղ հասկացողութեամբ, չ'եղաւ նաեւ կուսակցամոլ: Փոքր տարիքին

մասնակից դարձաւ Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան մայր Կուսակցութեան, եւ իր ամբողջ կեանքը թրծեց ու արժեւորեց իր կուսակցութեան գաղափարներով, իտեալներով ու տեսիլներով: Իրեն համար, սակայն, կուսակցութեան մը, կազմակերպութեան մը գոյութեան պատճառն ու արժէքին չափանիշը ազգին ու հայրենիքին ընդհանրական ու գերագոյն շահերուն ծառայութիւնն էր: Այս ոգիով ու յանձնառութեամբ ան գործեց, նոյնիսկ իր կուսակցութեան, մեր գաղութներուն ու ընդհանրապէս հայ ժողովուրդի պատմութեան ամենէն տագնապալից ժամանակներուն մէջ:

Գ) Վահրիճ Երեւեան եղաւ ու մնաց *միասնականութեան* մարդը: Ոչ միայն ան ջատագովը հանդիսացաւ մեր ժողովուրդի միասնականութեան, այլ նաեւ տագնապեցաւ ու աշխատեցաւ, որպէսզի միասնականութիւնը դառնար իրականութիւն մեր ժողովուրդի կեանքէն ներս, Լիբանանէն մինչեւ Հայաստան ու ի սփիւռս աշխարհի: Ան միասնականութիւնը ըմբռնեց որպէս աղբիւր գործութեան ու ճանապարհ յաղթութեան: Ան հաւատաց որ մեր ազգի ու հայրենիքի փրկութեան ճամբան միասնականութիւնն է: Թէ՛ իր պատկանած կուսակցութենէն ներս եւ թէ՛ այլ կուսակցութիւններու ու կազմակերպութիւններու մօտ եղաւ ջերմ ջատագովը միասնականութեան:

Դ) Վահրիճ Երեւեան եղաւ ու մնաց *Հայ Եկեղեցոյ առաքելութեան ջերմ հաւատացողը*: Ան հաւատաց մեր եկեղեցոյ ազգային մեծ դերակատարութեան: Եւ ճիշդ այս տեսանկիւնէն դիտած, ջերմ ջատագովը եղաւ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անվերապահ ու ամբողջական գործակցութեան: Ջերմ հաւատացողը եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կենսական առաքելութեան սփիւռքահայ կեանքի ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ ընկերային, մշակութային ու ազգային պահանջատիրութեան բնագաւառներէն ներս:

Վստահ ենք որ անցնող վաթսուն տարիներու իր հարուստ փորձառութեամբ, իր մեծ վաստակով, իր բազմաբեղուն ու բազմերես գործունէութեամբ գորացած Վահրիճ Երեւեանը պիտի շարունակէ իր ծառայութիւնը մեր ժողովուրդին:

Այս ուրախ առիթով Տիար Վահրիճ Երեւեանին կը յայտնենք Մեր ջերմ գնահատանքը այն նուիրեալ ծառայութեան համար, գոր ինք մատոյց մեր ժողովուրդին: Այս առիթով նաեւ կը գնահատենք իր կողակիցը՝ Տիկին Վերժինը, որ միշտ թիկունք կանգնեցաւ իրեն իր ազգային գործունէութեան մէջ:

Թող Աստուած Իր առատ բարիքներով լեցնէ ու հարստացնէ Ձեզ, ինչպէս նաեւ Երեւեան մեծ ընտանիքը՝ ի Լիբանան եւ ի սփիւռս աշխարհի: Ընտանիք մը, որ իր ազգային, քաղաքական ու մշակութային գործունէութեամբ իւրայատուկ դրոշմ մը ձգած է մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան մէջ:

Հայրապետական օրհնութեամբ եւ սիրոյ ջերմ ողջունիւ

Աղօթարար

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՃԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 7-ն Յուլիսի 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Տիար Հրաչ Տասնապետեանին Իշխանի Կարգի շքանշան շնորհելուն առիթով)

Հոգեկան անհուն ուրախութիւն է Մեզի համար այսու Կոնդակա լուսարձակի տակ բերել ընդհանրապէս սփիւռքահայութեան եւ յատկապէս Լիբանանի հայութեան կեանքին մէջ Ձեր մատուցած ծառայութիւնները՝ ազգային, կրթական, մշակութային, ընկերային, հասարակական մարզերէն ներս:

Արդարեւ, դուք կը պատկանիք խումբին այն մարդոց, որոնք իրենց աշխատանքին ու ծառայութիւններուն վարձատրութիւնը կը գտնեն տալուն մէջ: Վարձատրութիւն մը, որ աստուածահաճոյ է, եւ որ յատուկ է բոլոր ազնուահոգի ու վեհանձն մարդերուն: Այս վարձատրութեան հետամուտ եղաք Դուք եւ տուիք անսակարկ, տուիք առատ: Եթէ նշան Փալանճեան Ճեմարանի տեսչութեան պատասխանատուութիւնը թոյլատու չեղաւ Ձեզի հասնելու հոն, ուր կարիքը կար Ձեր գիտութեան, փորձառութեան եւ ուղղութիւններուն, դիմեցիք գրիչին: Եւ առատ եղաւ Ձեր գրչին պտուղը, որ գիտական, հասարակական, մշակութային, ընկերային, ազգային արժէքներու վաւերական հատորներով հարստացուց մեր գրադարանները: Եղաք մշակ՝ բառին ամբողջական իմաստով. քանզի մշակը լիաբուն կը սերմանէ ու քաղածէն քիչ կ'առնէ շատը բաշխելով շրջապատին:

Ձեր կեանքին մէջ յատուկ տեղ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, որուն առաքելութեան բերիք Ձեր անսակարկ մասնակցութիւնը՝ յատկապէս ազգային եւ մշակութային բնագաւառներէն ներս:

Ձեր անձին հանդէպ Մեր ունեցած խոր համարումին եւ Ձեր գործին ու ծառայութեան նկատմամբ Մեր ունեցած բարձր գնահատանքին որպէս արտայայտութիւն, այսու Հայրապետական Կոնդակա ուրախութիւնն ունինք Ձեզի շնորհելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ի ՇԽԱՆԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆՆԸ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի, Ձեր դուստրերուն՝ Շուշիկին եւ Թամարին շնորհէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ երջանկութեան բարիքներով լեցուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուալ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տանարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 8-ն Մեպրեմբերի, 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:
Ընդ համարաւ Շ/ՃՁԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Մայր Եկեղեցոյ
100-ամեակին առիթով)

Ուրախութեամբ իմացանք Ամերիկահայոց Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Եպս. Մարտիրոսեանէն, որ այս տարի կը լրանայ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցոյ հիմնադրութեան 100-ամեակը:

Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցոյ հիմնադիր անդամներուն, Հոգաբարձութեան, Հոգեւոր Հովիւին ու հաւատացեալներուն, որոնք կրցան Միացեալ Նահանգներու համեմատաբար դժուարին պայմաններուն մէջ կանգուն ու գործօն պահել Աստուծոյ այս տունը՝ Իր օրհնութեան ներքեւ: Թող Աստուած երկնային երանական խաղաղութեան մէջ հրճուեցնէ հոգիները բոլոր անոնց, որոնք որպէս անխոնջ ծառայ գործեցին այս եկեղեցոյ անդաստանին մէջ եւ այժմ յաւիտենապէս մեկնած են այս աշխարհէն: Թող Աստուած զօրացնէ հաւատքը ու պրկէ կամքը բոլոր անոնց, որոնք լծուած են Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցոյ ծառայութեան՝ Հայց. Եկեղեցոյ արարողութիւններուն եւ մեր ժողովուրդի ազգային-եկեղեցական բարբերուն ու ասանդութիւններուն անաղարտ պահպանումով:

Արդարեւ, Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցոյ 100-ամեակին նշումը վկայութիւն մըն է այն իրողութեան, որ Ֆրեզնոյի հայութիւն ոչ միայն պահեց իր եկեղեցին, այլ դարձաւ հոգեղէն եկեղեցի: Եկեղեցի մը, որ չգոյատեւեց որպէս նիւթեղէն շէնք, այլ որպէս քրիստոսահիմն կառոյց, որ իր սրբազան կամարներուն ներքեւ կենդանի պահեց Աւետարանը՝ Քրիստոսի, բարոյական արժէքները քրիստոնէական հաւատքին եւ դարատր ասանդութիւններն ու սրբութիւնները մեր ժողովուրդին:

100-ամեակին նշումը, սակայն, գրաւական մը չէ Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցոյ կենդանի ու առողջ պահպանման ու զոյատեւման: Իրաւ գրաւականը՝ ընդհանրապէս երթալն է այն մարտահրաւերներուն որոնց դէմ յանդիման կը գտնուինք այսօր՝ աշխարհի մը մէջ, ուր մարդիկ կլանուած են նիւթով ու փառքով, իշխանութեամբ ու աթոռով, շատ քիչ տեղ տալով կրօնին եւ մեր հոգեմտաւոր արժէքներուն: Պատմութիւնը կը կերտուի հաւատքով ու նուիրումով, յանձնառութեամբ ու տեսիլքով, հոգեւոր ու ազգային ժառանգութեանց պահպանումով: Ուստի, Մեր թելադրութիւնն է Ձեզի, որ առաւել պայծառացնէք Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցին, որպէսզի առաւել պայծառանաք Դուք՝ Աստուծոյ կենդանի ներկայութեամբը ձեր կեանքին մէջ:

Հայրապետական Օրհնութեան Մեր այս Գիրը թող դառնայ Ձեր յանձնառութեան անընելի յուշարարը՝ նոյն հաւատքով ու առաւել նուիրումով շարունակելու Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցոյ ջրտուքը՝ Աստուծոյ փառքին եւ մեր ժողովուրդի պայծառութեան ի խնդիր:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Սէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 4-ն Հոկտեմբերի 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Կլենտելյի Հայ Կրթական Հիմնարկության Հիմնադրության 50-ամեակին առիթով)

Հոգեկան անհուն ուրախությամբ իմացանք Հիսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Եպս. Մարտիրոսեանէն, որ այս տարի պիտի նշուի ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ յիսնամեակը:

Մենք անձնապէս հետեւած ենք եւ քաջածանօթ՝ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ կրթանպաստ գործունէութեան: Ինչպէս անհատի մը, նոյնպէս եւ հիմնարկութեան մը ճշգրիտ արժեւորումը կարելի է կատարել անոր գործին ընդմէջէն: Եւ ահա 50 տարիներու իր հետեւողական ու արդիւնաշատ գործունէութեամբ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆը կու գայ հաստատել, որ իր գործը եղաւ հաւատքի գործ, նուիրումի գործ, անխոնջ ծառայութիւն՝ հայ ժողովուրդի կրթական անդատանէն ներս: ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆը իր գործունէութիւնը չսահմանափակեց աշխարհագրական տարածքներով: Հետապնդեց մէկ նպատակ զարկ տալ հայկական ուսմանց ծրագիրներուն, անուս չձգել ուսումնատենչ հայորդին, ուր որ ալ գտնուի ան՝ Միացեալ Նահանգներէն մինչեւ Լիբանան, Սփիւքի բազմաթիւ գաղթօճախներէն մինչեւ հայրենիք:

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ պատասխանատուները գեղեցիկ գաղափարը ունեցան Հիմնարկութեան կէս դարու ծառայութիւնը ծառայութեամբ պսակելու: Եւ ահա իր լրումին կը հասնի նաեւ Հայաստանի եւ Արցախի տարածքին գործող յիսուն դպրոցներու վերանորոգման աշխատանքը: Հիմնարկութեան մը համար կա՞յ միթէ աւելի մեծ գնահատանք քան տեսնել իր ծառայած դաշտին պտղաբերութիւնը, քաջ գիտնալով մանաւանդ, որ անոր բարիքները օր մը պիտի վերադառնան իր ժողովուրդին, իր եկեղեցոյ, իր մշակոյթին:

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆը միշտ զօրավիզ հանդիսացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կրթական առաքելութեան: Արդարեւ, Դպրեվանքը եղաւ մէկը այն բազմաթիւ կրթական հաստատութիւններէն, որոնք վայելած են ու կը շարունակեն վայելել ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ աջակցութիւնը:

Այսու Հայրապետական Օրհնութեան Գիրով կը գնահատենք անխոնջ ծառայութիւնը ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ բոլոր սպասարներուն, եւ կը մատակարարենք որ նոր յիսնամեակներ կերտելու վճռակամութեամբ անոնք շարունակեն իրենց ազգօգուտ ու կրթանպաստ ծառայութիւնները:

Ողջ լերութք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 1-ն Նոյեմբերի 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Կլենտելյի Ս. Աստուածածին Եկեղեցոյ հիմնադրութեան 25 ամեակին առիթով)

Հիսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ

Եյս. Մարտիրոսեանի Մեզի ուղղած 31 Հոկտեմբեր, 2000 թուակիր նամակէն ուրախութեամբ իմացանք, որ այս ամսուան ընթացքին ծրագրած էք նշել Կլէմտէյի Ս. Աստուածածին Եկեղեցոյ հիմնադրութեան 25-ամեակը:

Անցեալ ամիս քրիստոնէական կրօնքի պետականացման 1700-ամեակին հանդիսութեանց նախագահելու համար Ձեր թեմին տուած հովուապետական Մեր այցելութեան ընթացքին, հոգեկան անհուն բաւարարութիւնը ունեցանք հաստատելու, որ Ամերիկահայոց Արեւմտեան թեմի մեր զաւակները հայաՎայել հաւատքով ու նախանձախնդրութեամբ բոլորուած են մեր ազգային-եկեղեցական կառոյցներուն շուրջ:

Արդարեւ, հայ եկեղեցին ամենուրեք, եւ յատկապէս Միացեալ Նահանգներու կեանքի պայմաններուն մէջ զօրաւոր բերդ մըն է, որուն հովանաւորութեան ներքեւ առողջ կը մնայ մեր ժողովուրդի հաւաքական կեանքը՝ ազգային, հոգեւոր, կրթական, մշակութային թէ ընկերային բնագաւառներէն ներս: Ահա այս խոր համոզումն էր որ քսանրիինգ տարիներ առաջ Կլէմտէյի մեր գաղութը մղեց իր սեփական եկեղեցին կառուցելու, անով արծարծ պահելու իր հաւատքը, եւ անոր կամարներուն ներքեւ վերահաստատելու իր հաւաքական ուխտը՝ քրիստոնէական հաւատքով, հայ լեզուով, հայ գիրով, հայ մշակոյթով ու հայու նկարագրով առաւել եւս զօրանալու, եւ խթանելու կեանքերը գալիք բոլոր սերունդներուն: 25-ամեայ Ս. Աստուածածին եկեղեցին եղաւ եւ վստահաբար պիտի շարունակէ մնալ Կլէմտէյի հայութեան ազգային-եկեղեցական կեանքի ամուր խարիսխն ու հաւատքի անխախտ սինը: Մենք կը հաւատանք, որ կերտուած պատմութեան մը ամենադժուար շրջանը անոր սկզբնական հանգրուանն է: Կլէմտէյի Ս. Աստուածածին եկեղեցոյ քսանրիինգամեակը ինքնին վկայութիւն մըն է, որ Կլէմտէյի մեր հաւատացեալները կրցած են շրջանցել բոլոր դժուարութիւնները եւ արդէն իսկ կը վայելեն անոր բարիքները իրենց ամենօրեայ կեանքին մէջ:

Անթիլիասի Մայրավանքէն Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Արեւմտեան թեմի Առաջնորդ Սրբազանը, Ս. Աստուածածին եկեղեցոյ Հոգեւոր Հովիւը, եկեղեցոյ Հոգաբարձութիւնը եւ համայն հաւատացեալները: Կը հայցենք Աստուծմէ որ հաւատքի բոցը արծարծ պահէ միշտ Կլէմտէյի հայութեան հոգիներուն մէջ, որպէսզի 1700-ամեակի խորհուրդով առաւել եւս կռանուած շարունակեն փառաբանել զԱստուած Ս. Աստուածածին եկեղեցոյ կամարներուն ներքեւ:

Այս ուրախ առիթով կ'օրհնենք Ս. Աստուածածին Եկեղեցոյ հոգեւորական թէ աշխարհական սպասաւորները, որոնք իրենց պատասխանատուութեան շրջագծէն ներս գործօն եւ նուիրեալ մասնակցութիւն բերին այս եկեղեցոյ շինութեան ու պայծառութեան: Կ'օրհնենք յիշատակը բոլոր անոնց, որոնք ծառայութեան իրենց լուծման դրին այս եկեղեցոյ պատմութեան մէջ ու այժմ յաւէտ մեկնած են այս աշխարհէն: Կը հայցենք Ամենաբարին Աստուծմէ, որ առաւել պայծառացնէ այս եկեղեցին իր հոգեւոր թէ աշխարհական սպասաւորներով ու իր ժողովուրդով, եւ նորանոր ամեակներ նշելու ուրախութեան արժանացնէ զիրենք:

Ողջ լերութք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կարթղիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 1-ն Նոյեմբերի 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԾ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան հիմնադրութեան
85-ամեակին առիթով)

Սպահանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Կորիւն Արք. Պապեանի Մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ իմացանք, որ Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութիւնը այս տարի կը բոլորէ իր հիմնադրութեան 85-ամեակը:

Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական սիրով կ'ողջունենք Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան անդամուհիները, որոնք 85-ամեայ գործունէութեան մը ծիրէն ներս թրծուած ու ծառայական ոգիով առաւել եւս հարստացած կը շարունակեն այս միութեան երախտարժան ու ազգօգուտ գործունէութիւնը: Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութիւնը Մենք կը նկատենք խտացումը շարք մը միութիւններու, որոնցմէ իւրաքանչիւրը լծուած է Սպահանի թեմի հայութեան տարբեր խաւերու ծառայութեան՝ զանազան մարզերէ ներս: Արդարեւ, Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութիւնը բարերար ձեռք կ'երկարէ անխտիր բոլորին՝ ուսանողին եւ ուսուցչին, որբին ու այրիին, տարեցին ու աղէտեալին, եւ բոլոր անոնց, որոնք կը ջանան արծարծ պահել հայ հոգեմտաւոր արժէքներուն, հայկական մշակոյթին եւ մեր ժողովուրդի տոհմիկ բարքերուն ու ասանդութիւններուն մշտաճանաչ ջահը:

Ի գնահատութիւն Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան 85-ամեայ բազմօգուտ ծառայութեան, Ձեզի կը շնորհենք Հայրապետական Օրհնութեան այս Գիրը: Կը հայցենք Ամենաբարին Աստուծմէ, որ Իր հովանիին ներքեւ պահէ Միութեան նուիրեալ սպասարկուները, եւ իրենց ծառայութիւնը արդիւնատրութեամբ պսակէ՝ «Ընդ միոյ երեսուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր» (Մր 4.20):

85-ամեակի այս հանգրուանին, կ'օրհնենք յիշատակը բոլոր անոնց, որոնք հիմնեցին ու գործեցին Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան անդաստանէն ներս, եւ այժմ յաւերժ հեռացած են այս աշխարհէն: Վերանորոգ ոյժ ու կորով կը մաղթենք բոլոր անոնց, որոնք կը շարունակեն իրենց ներդրումը՝ Միութեան բազմակողմանի գործունէութեան ծիրէն ներս:

Կ'աղօթենք որ Բարձրեալն Աստուած քաջառողջ պահէ Նոր Ջուղայի Հայ Կանանց Գթութեան Միութեան բոլոր անդամուհիները, որպէսզի նոյն նախանձախնդրութեամբ ու մեղուաջան աշխատանքով մասնակից դառնան Նոր Ջուղայի մեր «փոքր ածու»ի դալարագեղ պահպանման:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 5-ն Դեկտեմբերի 2000 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԽԹ:*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ**

Հինգշաբթի 17 փետրուար 2011-ի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս մեկնեցաւ Կիպրոս, ուր մնաց երեք օրեր: Նորին Սրբութիւնը նախագահեց Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի գործադիր վարչութեան ժողովին, եւ ապա հանդիպումներ ունեցաւ Կիպրոսի Հայոց Թեմի պատասխանատուներուն հետ: Սոյն ճամբորդութեան ընթացքին Վեհափառ Հայրապետին ընկերացան Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան եւ գաւազանակիր՝ Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան:

Ստորեւ Վեհափառ Հայրապետին այցելութեան մանրամասնութիւնները, ժամանակագրական հերթականութեամբ.-

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նկատի ունենալով շրջանէն ներս տիրող ընդհանուր կացութիւնը, ինչպէս նաեւ կարգ մը շրջաններէն ներս քրիստոնեայ համայնքներու դիմագրաւած դժուարութիւնները Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Գործադիր



ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վարչութեան բացառիկ հանդիպում մը տեղի ունեցաւ Նիկոսիոյ Հիլիթըն պանդոկին մէջ: Վեհափառ Հայրապետը, որպէս ՄԱԵԽի նախագահներէն մէկը, գործօն մասնակցութիւնը բերաւ յիշեալ հանդիպումին, որու ընթացքին լայնօրէն քննարկուեցան Խորհուրդին վարչական, ծրագրային, տնտեսական ու յարաբերական մարզերուն առնչուած շարք մը հարցեր ու ծրագիրներ: Հանդիպման ընթացքին լուսարձակի տակ առնուեցաւ Խորհուրդի վերակառուցման գործընթացքը ինչպէս նաեւ՝ յառաջիկայ համաժողովի թուականն ու օրակարգի հարցերը:

Ժողովի բացման ներկայ գտնուեցաւ Կիպրոսի եկեղեցւոյ հոգեւոր պետ Խրիստոստոմոս Բ. Արք. եւ իր խօսքը ուղղեց ներկաներուն, յատկապէս ծանրանալով Կիպրոսի Թուրքիոյ կողմէ գրաւեալ հողերուն վրայ եկեղեցիներու դէմ շարունակուող բռնարարքներուն:

Ապա խօսք առաւ Վեհափառ Հայրապետը եւ իր խօսքին մէջ չորս կէտեր շեշտեց.-

ա) Արարական աշխարհին մէջ տեղի ունեցած ժողովրդային յեղափոխութիւնը եւ անոր անդրադարձը թէ՛ Արեւելքի եւ թէ՛ Արեւմուտքի մէջ:

բ) Քրիստոնէայ եկեղեցիները անբաժան մասը կը կազմեն Միջին Արեւելքի հողին, մշակոյթին ու պատմութեան, եւ հետեւաբար՝ հակառակ դժուարութիւններուն պէտք է կառչած մնան շրջանին:

գ) Քրիստոնէական միութեան ամբողջական հրամայականը՝ հեռու մնալով ամէն տեսակ զգայնութիւններէ ու բեւեռացումներէ:

դ) ՄԱԵԽ-ին վերակառուցման անհրաժեշտութիւնը, նկատի ունենալով շրջանէն ներս տեղի ունեցող արմատական փոփոխութիւնները:

Յաջորդաբար խօսք առին նաեւ Խորհուրդի միւս ընտանիքներու նախագահները՝ Երուսաղէմի Յովն Պատրիարք

Թէոֆիլոս Բ., Լիբանանի Մարոնիներու Առաջնորդ Մաթար Արքեպիսկոպոս եւ Մունիպ Եունան Եպիսկոպոս Երուսաղէմի: Բոլորն ալ ընդգծեցին ՄԱԵԽ-ի ծիրէն ներս քրիստոնէական միութեան նոր շեշտ տալու հրամայական: Գործադիր Վարչութիւնը որոշեց Խորհուրդի յառաջիկայ համաժողովը գումարել ներկայ տարուան Օգոստոսին, դարձեալ Կիպրոսի մէջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Կիրակի առաւօտեան Վեհափառ Հայրապետը նախագահեց Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ մատուցուած սուրբ եւ անմահ պատարագին, որու ընթացքին իր հայրապետական պատգամը ուղղեց ներկայ հաւատացեալներուն: Վեհափառին պատգամին բնաբանն էր Քրիստոսի խօսքը՝ «Ես եկայ, որպէսզի կեանք ունենամք»: Վեհափառը նախ յիշեցուց թէ քրիստոնէութիւնը ուսուցում կամ դաւանանք, սիւտեմ կամ բարոյական համարգ չէ սոսկ, այլ կեանքի որակ է Բեթղէհէմի ճամբով աշխարհին յայտնուած: Քրիստոս յաճախակի առիթներով շեշտը դրաւ կենսաբան վրայ. նաեւ յիշեցուց, թէ ինքն է ճշմարիտ կեանքը մարդուն:

Մեկենայիտ այս ճշմարտութենէն, Վեհափառ Հայրապետը չորս կէտերու մէջ պարզեց կեանքի քրիստոնէական ըմբռնումը.- ա) կեանքին աղբիւրը Աստուած է, բ) կեանքը հարկ է ըմբռնել ու ապրիլ որպէս մէկ ամբողջութիւն՝ իր մարդկային, ոչ-բանական եւ կենսոլորտային տարածքներով, գ) կեանքի ստեղծիչը ու աղբիւրը Աստուած ըլլալով, նաեւ անոր սեփականատէրը Աստուած է եւ հետեւաբար, որեւէ չարիք ուղղուած կեանքին՝ մեղք մըն է Աստուծոյ դէմ, դ) կեանքը պէտք է ապրիլ որպէս աստուածակեդրոն ու աստուածանպատակ իրականութիւն:



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԸ ՊԱՏԳԱՄԷ ՆԻԿՈՍԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԵՁ

Իր պատգամի երկրորդ բաժնին մէջ, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ մեր ժողովուրդի անցեալին, յիշեցնելով թէ քրիստոնէութիւնը մեր ժողովուրդին համար եղաւ կեանքի ուրակ, կեանքի իւրայատուկ ճանապարհ, ուրկէ մեր ժողովուրդը հաւատարմօրէն քալեց Քրիստոսի ներկայութիւնը թարգմանելով իր ստեղծագործ ոգիով ու իր խոր հաւատքով: Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձաւ մեր կեանքի ներկայ պայմաններուն, ըսելով թէ մեր առջեւ բացուած բոլոր ճամբաներուն մէջ մենք պիտի ընտրենք ճշմարիտ կեանքի ճամբան, որ Քրիստոսի ճամբան է. այն ճամբան, որուն հրաւիրեց մեզ Քրիստոս: Իր պատգամի աւարտին, Վեհափառ Հայրապետը Կիպրոսի հայութեան ուղղելով իր խօսքը, ըսաւ, թէ Քրիստոսի աշխարհ բերած կեանքը պէտք է ճառագայթող ներկայութիւն

դառնայ մեր ժողովուրդի գաւակներու կեանքէն ներս, մեր ընտանիքներէն ներս եւ մեր համայնական կեանքի բոլոր մարգերէն ներս: Անհրաժեշտ է համախմբուել Քրիստոսի ճշմարիտ կեանքը իր հաւատքի առաքելութեամբ մեր ժողովուրդին տանելու կոչուած եկեղեցւոյ շուրջ, մասնակից դառնալով մեր եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան, եզրակացուց Վեհափառ Հայրապետը:

Սուրբ եւ անմահ պատարագէն յետոյ տեղի ունեցաւ աջահամբոյր Ազգ. Առաջնորդարանի դահլիճին մէջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիպրոս կատարած իր կարճատեւ այցելութեան ընթացքին Վեհափառ Հայրապետը հանդիպումներ ունեցաւ, Կիպրոսի թեմի Կաթողիկոսական Փո-



ԱԶԳԱՅԻՆ ՆԱՐԵԿ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ

խանորդ Գերշ. Տ. Վարուժան Արք. հերկելեանի ներկայութեան Վարչական եւ Թեմական ժողովներու ատենապետներուն, Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչին, ինչպէս նաեւ այլ կառույցներու պատասխանատուներուն հետ: Վեհափառ Հայրապետը նախագահեց ի պատիւ իրեն տրուած ճաշկերոյթին, որուն ներկայ գտնուեցան թէ Կիպրոսի հայ գաղութի թեմական իշխանութեան եւ թէ համայնքային ու կուսակցական կազմակերպութիւններուն ներկայացուցիչները: Ծաշկերոյթի աւարտին, Վեհափառ Հայրապետը խօսք առնելով նախ անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան, շեշտեց Սփիւռքի ու Հայաստանի

առաւել հզօրացման անհրաժեշտութիւնը՝ ներքին գործակցութեան նոր մղում մը տալով. նաեւ ընդգծեց, որ մեր համայնքէն ներս գոյութիւն ունեցող տեսակէտներու տարբերութիւնը պէտք չէ մեզ առաջնորդեն ներքին բեւեռացումներու: Անհրաժեշտ է համայնքին գերագոյն շահերը գերադասել կողմնակի ու անձնական շահերէն, շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Արամ Ա. Կաթողիկոս, Կաթողիկոսական Փոխանորդ Սրբազանին եւ պետական ներկայացուցիչին ընկերակցութեամբ, նաեւ այցելեց Նարեկ վարժարան, ուր հանդիպում մը ունեցաւ դպրոցի հոգաբարձութեան ու տնօրէնութեան հետ:

ՀՐԱԻԷՐՈՎ ՔԱԹԱՐԻ ԷՄԻՐԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԸ ՔԱԹԱՐԻ ՄԷՋ

Հրաւերով Քաթարի էմիր Շէյխ Համատ պըն Խալիֆա Բ-ին, որպէս պետական հիւր, Ն.Ս.Օ.Տ.Տ.Արամ Ա. Կաթողիկոս Երեքշաբթի 22 Փետրուար 2011-ին մեկնեցաւ Քաթար: Վեհափառ Հայրապետին ընկերացան Դպրեվանքի Տեսուչ Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեան, պետական երեսփոխան Յակոբ Բագրատունի եւ Գաւազանակիր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան:

Վեհափառ Հայրապետին պաշտօնական այցելութիւնը տարածուեցաւ երեք օրերու վրայ, որոնց ընթացքին ան հանդիպումներ ունեցաւ Քաթարի էմիրին, պետական բարձրաստիճան պատասխանատուներուն եւ հայ համայնքին հետ: Այս առիթով Վեհափառ Հայրապետը նաեւ դասախօսութիւն մը տուաւ «Ճորճթաուն» համալսարանին մէջ:

Ստորեւ Վեհափառ Հայրապետին այցելութեան մանրամասնութիւնները ժամանակագրական հերթականութեամբ.-

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱԹԱՐԻ ԷՄԻՐԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթիի 23 Փետրուար 2011-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետը հանդիպում մը ունեցաւ Քաթարի էմիր Շէյխ Համատ Պըն Խալիֆա Բ-ին հետ: Հանդիպումին ներկայ էին Դպրեվանքի տեսուչ Գերշ. Տէր Շահէ Եպս. Փանոսեան, հայկական երեսփոխանական պրօքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի, գաւազանակիր Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան եւ Լիբանանի դեսպան Հասան Սատտ- իսկ էմիրի կողքին

ներկայ էր փոխ վարչապետ Ապտալլահ Աթիէ:

Վեհափառ Հայրապետը նախ իր շնորհակալութիւնը յայտնեց իրեն ուղղուած պետական հրաւերին համար եւ ապա էմիրին փոխանցեց Լիբանանի հանրապետութեան նախագահի ողջոյնները: Ողջոյնի եւ բարեմաղթութեան փոխադարձ արտայայտութիւններէն ետք Վեհափառ Հայրապետը Քաթարի ներկայ դերը ու դիրքը նկարագրեց երեք բառերով. չափաւորութիւն, երկխօսութիւն եւ զարգացում: Ապա ան լայնօրէն անդրադարձաւ այն դերին որ Քաթարը կը խաղայ արաբական, իսլամական ու միջազգային համայնքէն ներս:

Խօսակցութեան երկրորդ բաժինը կեդրոնացաւ Լիբանանի ու Լիբանանահայութեան դերակատարութեան շուրջ: Մօտէն տեղեակ ըլլալով Լիբանանի կացութեան, հայ համայնքին, էմիրը գնահատանքով արտայայտուեցաւ յատկապէս վերջին շրջանին լիբանանեան քաղաքական իրադարձութենէն ներս լիբանանահայութեան դերակատարութեան: Այս ծիրէն ներս Պըն. Բագրատունին յիշեցուց այն դերակատարութիւնը որ ունեցաւ էմիրը ի նպաստ հայ համայնքին, Տոհայի ժողովին:

Տեսակցութեան վերջին կէտը կը վերաբերէր ընդհանապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ յատկապէս կազմաւորման ընթացքի մէջ գտնուող Քաթարի հայ համայնքին: Էմիրը բարձր գնահատանքով խօսեցաւ մեր ժողովուրդի գաւակներուն բերած կարեւոր նպաստին Քաթարի զարգացման



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ԲԱԹԱՐԻ ԷՄԻՐԸ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

աշխատանքներուն մէջ: Այս շրջագիծէն ներս Վեհափառ Հայրապետը առաջարկեց որ Էմիրին բարձր տնօրինութեամբ հողաշերտ մը տրուի հայ համայնքին եկեղեցւոյ ու համայնքային կեդրոնի շինութեան համար, որպէսզի հայ համայնքը ինքզինք կարենայ լաւապէս կազմակերպել: Էմիրը ուրախութեամբ ընդառաջեց Վեհափառ Հայրապետի փափաքին:

Արամ Ա. Կաթողիկոս առաջին հոգեւոր պետն է որ որպէս պետական հիւր կը հրաւիրուի Քաթարի Էմիրին կողմէ:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՒՆ «ՃՈՐՃԹԱՌԻՆ»
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՁ

Չորեքշաբթի 23 Փետրուարին կէսօրէ ետք, Արամ Ա. Կաթողիկոս դասախօսեց Քաթարի Ճորճթառն համալսարանին մէջ: Յիշեալ համալսարանը Ուաշինկթոնի Ճորճթառն համալսարանի

մէկ մասնաճիւղն է, որ կը բաղկանայ միջազգային օրէնքի, քաղաքական գիտութեանց եւ մերձաւոր արեւելքի պատմութեան առնչուած բաժանմունքներէ:

Վեհափառ Հայրապետին դասախօսութեան նիւթն էր, «Կրօնքին դերը ներկայ աշխարհի մարտահրաւերներուն ու տագնապներուն դիմաց»: Նախ ընդհանուր գիծերով Վեհափառ Հայրապետը ներկայացուց կրօնքին հասարակական դերը, շեշտելով յատկապէս ներկայ ժամանակներու տարբեր մօտեցումները կրօնքի ինքնահասկացողութեան գծով: Վեհափառ Հայրապետը լայնօրէն անդրադարձաւ միջ-կրօնական երկխօսութեան մասնաւորաբար միաստուածեան երեք կրօններու միջեւ:

Խօսելով երկխօսութեան առաջնահերթութիւններուն մասին, ան ըսաւ որ անհրաժեշտ է երկխօսութիւնը մտաւորական մակարդակէն փոխադրել կեան-



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻԷԼԸ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒՆ

քին: Այլ խօսքով, երկխոսութեան նպատակը պէտք է ըլլայ ոչ միայն աստուածաբանական հարցերու շուրջ համաձայնութեան եզրեր որոնել, այլ մանաւանդ գործակցութիւն յառաջացնել կրօններու միջեւ:

Արամ Ա. Կաթողիկոս յայտնեց թէ նոյն արմատները ունեցող ինչպէս նաեւ հասարակաց արժէքներ ու ճշմարտութիւններ դաւանող միաստուածեան երեք կրօններու միջեւ գործակցութիւն կարելի է՝ մարդկային իրաւանց ինչպէս նաեւ կենսոլորտային ու ընկերային շարք մը հարցերու շուրջ: Վեհափառ Հայրապետը այս շրջագիծէն ներս ծանրացաւ կրօնքի քաղաքական դերակատարութեան՝ մատնանշելով անոր դրական ու ժխտական երեսներն ու հետեւանքները:

Իր խօսքի վերջին բաժնին մէջ Վեհափառ Հայրապետը ըսաւ թէ՛ կ'ապրինք հետզհետէ փոքրացող աշխարհի մը մէջ. «Համաշխարհայնացումը ջնջած է

ամէն տեսակ բաժանման գիծեր ու հեռաւորութիւններ. տարբեր կրօններ, մշակոյթներ ու աւանդութիւններ կ'ապրին միասնաբար նոյն քաղաքին, նոյն գիւղին ու նոյնիսկ նոյն թաղին մէջ: Երկխոսութիւնը այսօր կեանքի ոմ է ու փոխադարձ հասկացողութիւն ու դէպի խաղաղ գոյակցութիւն առաջնորդող միակ նամբան: Բոլոր կրօնները կոչուած են իրենց հետեւորդները առաջնորդելու այս նամբան» եզրակացուց Արամ Ա. Կաթողիկոս:

Վեհափառ Հայրապետի խօսքէն յետոյ իրեն ուղղուեցան շարք մը հարցումներ համալսարանի ներկայ դասախօսներու եւ ուսանողներու կողմէ: Իր պատասխանին մէջ Վեհափառ Հայրապետը աւելի խորացուց իր դասախօսութեան ընթացքին արծարծած շարք մը կէտերը: Ապա համալսարանի նախագահին զլիաւորութեամբ Վեհափառ Հայրապետը եւ իրեն ընկերացող պատուիրակութիւնը այցելեց համալսարանի գանազան բաժանմունքները:



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ՇԱՅԷ ՍՐԲԱԶԱՆ ԽՈՒՄԲ ՍԸ ԱԶԳԱՅԻՆՆԵՐՈՒ ՀԵՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱՆՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԵՏ

Յաջորդող երկու օրերու ընթացքին Վեհափառ Հայրապետը այլ հանդիպումներ եւս ունեցաւ:

1.- Վեհափառ Հայրապետը իր շքախումբին հետ հանդիպում ունեցաւ Քաթարի մէջ հաստատուած մեր ժողովուրդի զաւակներուն հետ: Ազգային Վարչութեան հրաւերով, աւելի քան 200 ազգայիններ հաւաքուած էին ողջունելու Վեհափառ Հայրապետին այցելութիւնը Քաթար: Յաջորդաբար խօսք արին ազգային վարչութեան ատենապետ Արսէն Հարաճեան, Շահէ Եպս. Փանոսեան եւ Յակոբ Բագրատունի: Բոլորն ալ շեշտեցին Վեհափառ Հայրապետին այցելութեան կարեւորութիւնը:

Ապա խօսք առաւ Վեհափառ Հայրապետը եւ ընդգծեց հաւաքական կեանք կազմակերպելու հրամայականը,

ինչպէս նաեւ մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներուն ու աւանդութիւններու կառչած մնալու անհրաժեշտութիւնը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը ուրախութեամբ յայտնեց թէ իր փափաքին ընդառաջելով, Քաթարի էմիրը խոստացած է հողաչերտ նուիրել հայ համայնքին, որպէսզի հոն կառուցուի հայ եկեղեցի: Ապա տեղի ունեցաւ աջահամբոյր:

2.- Քաթարի մօտ Լիբանանի դեսպանը ի պատիւ Վեհափառ Հայրապետին ճաշկերոյթ մը սարքեց նոյն օրը կէսօրին, դեսպանատան մէջ: Ներկայ էին Լիբանանէն երկու նախարարներ, արաբական երկիրներու դեսպաններ ինչպէս նաեւ ազգայիններ:

Լիբանանի դեսպանը բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին, յիշեցուց անոր կարեւոր դերը ո՛չ միայն Լիբանանի մէջ, այլ նաեւ միջազգային մակարդակի վրայ: Իր խօսքին մէջ Վե-



ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ ԲԱՐԻ ԳԱԼՍԵԱՆ ԻՐ ԽՕՍՔԸ Կ'ԱՐՏԱՍԱՆԷ

հափառ Հայրապետը նախ անդրադարձաւ Լիբանանի կարեւորութեան, թէ՛ արաբական աշխարհին մէջ եւ թէ՛ որպէս կամուրջ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ, եւ ապա շեշտեց Լիբանանի հայութեան գործօն մասնակցութիւնը Լիբանանի վերաշինութեան ու վերականգնումի ու անոր միասնականութեան ամրապնդման աշխատանքներուն մէջ:

3.- Նոյն գիշերը, Վեհափառ Հայրապետը նախագահեց ի պատիւ իրեն տրուած ճաշկերոյթին որուն ներկայ գտնուեցան աւելի քան 300 անձեր, թէ՛ Քաթարի հայ համայնքէն եւ թէ՛ Քաթարի մէջ հաստատուած Լիբանանի գանազան համայնքներէն:

Ճաշկերոյթին բացումը կատարելով, Լիբանանի դեսպանատան հիւպատոսը ներկայացուց Վեհափառ Հայրապետը իբրեւ օրուան մեծ հիւրը, ու խօսեցաւ Նորին Սրբութեան գանազան բնագաւառներէ ներս կատարած աշխատանքին մասին: Ապա խօսք առնելով Վեհափառ Հայրապետը, վեր առաւ Լիբանանի իւրայատկութիւնը ներկայաց-

նող արժէքները, այս ծիրեն ներս յատկապէս անդրադառնալով քրիստոնեայ-իսլամ գոյակցութեան: Ան ըսաւ թէ հակառակ երկրէն ներս տիրող տեսակէտներու տարբերութեանց, բաժանման գիծեր գոյութիւն չեն կրնար ունենալ լիբանանցիներու միջեւ: «Այս գիտակցութեամբ կը գործէ Լիբանանի հայութիւնը» յիշեցուց Արամ Ա. Կաթողիկոս: Վեհափառ Հայրապետին խօսքը բազմաթիւ անգամներ ծափողջոյներով ընդմիջուեցաւ յատկապէս Լիբանանի այլ համայնքները ներկայացնող ներկաներուն կողմէ:

4.- Տոհա ժամանման առաջին իսկ գիշերը, ի պատիւ Վեհափառ Հայրապետին ճաշկերոյթ մը սարքեց Ազգային Վարչութեան ատենապետ Արսէն Հալաճեան: Ներկայ էին վարչութեան անդամներու կողքին շարք մը ազգայիններ:

Ճաշկերոյթի ընթացքին խօսք առաւ Տիկին Արշօ Թիւթիւնճեան եւ ողջունելով Վեհափառ Հայրապետը, իր ուրախութիւնը ու հպարտութիւնը արտայայտեց ի տես Մեծի Տանն Կիլիկիոյ Կա-



ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԻՐ ՊԱՏՊԱՆ ԿՈՒՂՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Թողիկոսութեան ծաւարող առաքելութեան ու Վեհափառ Հայրապետին ճառագայթող ներկայութեան՝ ազգային թէ՛ միջազգային շրջանակներէ ներս:

Իր հայրական խօսքին մէջ Արամ Ա. Կաթողիկոս իր զնահատանքը յայտնեց Ազգային Վարչութեան կատարած ծառայութեան ու թերադրեց որ ի տես հետըզհետէ աճող գաղութի կարիքներուն, անհրաժեշտ է կրկնապատկել կազմակերպչական աշխատանքները. եւ այդ գծով Վեհափառը յայտնեց մեր Սուրբ Աթոռին ամբողջական գորակցութիւնը:

5.- Չորեքշաբթի առաւօտեան Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Քուէյթէն եւ Տուպայէն ժամանած ազգային մարմիններու, ինչպէս նաեւ Քաթարի Ազգային Վարչութեան ներկայացուցիչներուն հետ: Սոյն հանդիպման ներկայ էր նաեւ Շահէ Սրբազան: Հանդիպման ընթացքին քննարկուեցան ընդհանրապէս թեմին եւ մասնաւորաբար Քուէյթի, Ապու Տապիի, Տուպայի եւ Քաթարի գաղութներու առնչուած շարք մը հարցեր:

6.- Հինգշաբթի առաւօտ Արամ Ա.

Հայրապետը էմիրի ապարանքին մէջ հանդիպում ունեցաւ փոխ վարչապետ, վառելանիւթի նախարար եւ պալատի ընդհանուր պատասխանատու Ապտալ-լահ Աթիէի հետ: Հանդիպման ներկայ էր նաեւ հայկական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բազրատունի: Փոխ վարչապետը մօտէն տեղեակ ըլլալով Լիբանանի քաղաքական իրադարձութիւններուն, ինչպէս նաեւ Տոհայի ժողովի ընթացքին կարեւոր դեր ստանձնած ըլլալով, աւելի քան ժամ մը տեւող հանդիպման ընթացքին արծարծուեցան առաւելարար Լիբանանի քաղաքական կացութեան ու Լիբանանի հայութեան դերակատարութեան հետ աղերս ունեցող խնդիրներ:

Վեհափառ Հայրապետը փոխ վարչապետին հետ անգամ մը եւս արծարծեց Քաթարի համայնքին հողատարածք նուիրելու հարցը որ էմիրը խոստացած էր օր մը առաջ Վեհափառ Հայրապետին: Փոխ վարչապետը խոստացաւ մօտէն հետապնդել այս ծրագրին իրագործումը: Ապա Վեհափառ Հայրապետը հրաւիրեց փոխ վարչապետը այցելելու

Անթիլիասի Մայրավանքը:

7.- Հինգշաբթի գիշեր Քաթարէն մեկնելէն անմիջապէս առաջ Քաթարի ազգայիններէն Տիար Նազարէթ Նաճարեան ի պատիւ Վեհափառ Հայրապետին ճաշկերոյթ մը սարքեց որուն ներկայ գտնուեցան Ազգային Վարչութեան անդամները, Քաթարի ու Լիբանանի տնտեսական գործակցութեան վարչութեան անդամներ լիբանանեան համայնքի ներկայացուցիչներ ինչպէս նաեւ տնտեսական մարզի պատկանող բարձրաստիճան պատասխանատուներ:

Իր գնահատական խօսքին մէջ Վեհափառ Հայրապետը շեշտեց Լիբանանի եզակի նկարագիրը՝ որպէս քրիստոնեայ

եայ-իսլամ գոյակցութեան երկիր պահելու կարեւորութիւնը, ինչպէս նաեւ սփիւռքի լիբանանեան համայնքներու գորակցութիւնը Լիբանանի վերակազմումի աշխատանքներուն: Բնականաբար Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ հայ համայնքին կարեւոր դերակատարութեան Լիբանանի մէջ:

Քաթար սոյն այցելութիւնը ու յատկապէս Քաթարի էմիրին հետ Վեհափառ Հայրապետին ունեցած հանդիպումը լայն արձագանգ գտաւ տեղական մամուլին ու հեռատեսիլի կայաններուն ճամբով: Յաջորդ օրն իսկ Վեհափառ Հայրապետը իր շքախումբով վերադարձաւ Անթիլիասի Մայրավանքը:

ՍՈՒՐԻՈՅ ԳԵՍՊԱՆԻՆ ԿՈՂՄԷ ՃԱՇ Ի ՊԱՏԻՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ուրբաթ 25 Փետրուար 2011-ի կէսօրին, Լիբանանի մօտ Սուրիոյ դեսպան Ալի Ապտ էլ-Քարիմ ի պատիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ճաշկերոյթ մը սարքեց Պապատայի իր բնակարանին մէջ: Դեսպանին հրաւերով ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Պուրճ Համուտի Առեւտրականներու Միութեան Նախագահ Պրն. Փօլ Այանեան, Ճարտարարուեստի նախարար Աբրահամ Տէտէեան, Հայկական Երեսփոխանական Պրքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի, Զբօսաշրջութեան նախարար Ֆատի Ապպուտ, Ճիպթյի երեսփոխան Ապպաս Հաշէմ, Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Միսիթարեան, եւ այլ հիւրեր:

Ճաշկերոյթի ընթացքին Վեհափառ Հայրապետը խօսք առնելով իր շնորհակալութիւնը յայտնեց դեսպանին ի պատիւ իրեն կազմակերպուած ճաշկերոյթին համար, գնահատանքով անդրա-

դարձաւ հայ ժողովուրդին նկատմամբ Սուրիոյ դերին ու ըսաւ. «Սուրիան մեր ժողովուրդին համար կը մնայ սիրելի բարեկամ մը, որովհետեւ մենք չենք մոռնար այն աշակցութիւնը գոր Սուրիան ընծայեց մեր ժողովուրդին, յատկապէս ջարդերէն յետոյ: Մենք Թուրքիոյ մէջ տեսանք ջարդ ու ախտը, հալածանք ու մահ, իսկ Սուրիոյ մէջ՝ սեր ու եղբայրութիւն: Ժամանակները կրնան անցնիլ, պայմանները կրնան փոխուիլ, սակայն իրաւ բարեկամութիւնը երբեք ստուեր չի՛ տեսներ» ըսաւ Վեհափառ Հայրապետը:

Իր պատասխան խօսքին մէջ Սուրիոյ դեսպանը ջերմ բառերով արտայայտուեցաւ հայ ժողովուրդին մասին: Ան մեծապէս գնահատեց Սուրիոյ հայութեան դրական դերը ու գործօն մասնակցութիւնը Սուրիոյ յառաջդիմութեան: Դեսպանը նաեւ ողջունեց Լիբանանի հայութեան դրական դերը Լիբանանի կողմերուն միջեւ փոխադարձ հասկացողութիւն յառաջացնելու իմաստով:

ՀԱՅՐԱՐԱՆԱԿԱՆ

ՀԱՅ ՍՈՒՐԲԵՐ Մինչև ԺԵ. Գար (Վաւերագիրներ)

15. ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ

1025-1105

Աւելիք 3 = Օգոստոս 8

15.1 Ղ. ԱԼԻՇԱՆ, Հայապատում, Հ. 2, 1901, էջ 243-247:

ՄՀԲ

ԳՐԻԳՈՐ (Բ) ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԿԱՅԱՍԷՐ (ՄԵԾ)¹

Մնեալ եւ վարժեալ ի մանկական տիրոց ուսմամբ աստուածային գրոց եւ զարդարեալ ամենայն բարութեամբ-որոյ Հասեալ ի հայրենին իշխանութեան աստիճան² գեղեցիկ եւ պարկեշտ քաղաքավարութեամբ զարդարէր զանձն: Ապա զմտաւ ածէր զտիրականն հրաման որ ասէ, թէ, «Որ ոչ առնու զխաչ իւր եւ ուրասցի զանձն եւ եկեսցէ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել»: Եւ վաղվաղակի ի բաց մերկանայր զաշխարհական ձեւ, եւ լուծանէր զիշխանականն կամար, եւ հրաժարեալ յիւրայոցն՝ հետե-

ւէր ի միայնաստանս, զգեցեալ զխոնարհութիւն. եւ հնազանդեալ անգրադական կենաց՝ ճգնէր պահօք ի տուէ եւ ի գիշերի. հանգոյն մեծին Յովհաննու, եւ աստուածաշունչ տառից միշտ ընթերցմամբ՝ կերակրէր զբանական հոգին: Այլ քանզի ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին շինեալ իցէ. ընդ այն ժամանակս բարձեալ լինէին հովուապետքն Հայոց՝ յաշխարհէ, եւ պակասեալ տունն Տեառն Պետրոսի³ յարժանաւոր ժառանգաւորէ՝ որպէս ծերացեալն Հեղեայ, եւ մնայր տունս թորգոմեան զեւթն ամ առանց հայրապետի: Քանզի աշխարհս՝ ընդ այն ժամանակս անկեալ էր ի ձեռս այլազգեաց, եւ աթոռ կաթողիկոսութեանն վտարեալ ի Սերաստիա, եւ այն ընդ իշխանութեան Հռոմոց. եւ վասն այնորիկ թագաւորք Յունաց ոչ տային թոյլ զնել զոք կաթողիկոս, սակս անառաջնորդ մնալոյ ազգիս մերոյ, եւ այնր

¹ Իր եղբորորդին եւ յաջորդն եւս Վկայից վարքեր հաւաքել տալով՝ իրմէ որոշուելու համար Փոքր Վկայասէր կոչուած է: Հեղինակ բանիս է գրող վարուց Նեքս. Շնորհալուոյ (տես Յօդուած 287). որ գրեթէ այս Սրբոյս Վիպասանութեամբ ոտանաւոր գրածը՝ արձակ փոխեր է:

² Իբրեւ անդրանիկ որդի Գր. Մագիստրոսի՝ ժառանգ էր իր հօր մեծագոյն պատուոյ աստիճանի եւ ընչից:

³ Գետադարձի, որ վախճանեցաւ ի 1058:

աղաղակ յինքեանս դառնալոյ: Յայնժամ արքայն Հայոց Գագիկ⁴ մեծաւ ջանիւ եւ բազում աշխատութեամբ գուն գործեալ՝ առաքէր առ թագաւորն Յունաց մեծաւ ծախիւք. եւ գամուրն զՎարսալսմ խնդրելոյ փոխանակեալ՝ տայր ի ձեռս Հոռոմոց, եւ առնոյր հրաման ի թագաւորէն՝ ոսկի մատանեաւ կնքեալ, նստուցանել զո եւ կամեսցին յաթոռ հայրապետութեանն Հայոց: Ապա թագաւորն Հայոց Գագիկ ժողովէր զհարս Հայոց առ հասարակ. եւ միաբան համակամութեամբ գտեալ զարժանաւոր խնդրոյն, որպէս ի վերուստ ակնարկութեամբ Հոգւոյն Սրբոյ յայտնեալ զգանձն ծածկեալ յագարակի, եւ ամենեցուն համաձայնութեամբ յառաջ կոչեն զՎահրամ որդի Գրիգորի մագիստրոսի՝ զորմէ վերագոյն ասացաք. որոյ ծանուցեալ՝ հրաժարէր ի պատուոյն, անարժան վարկանելով զինքն մեծի կոչմանն, եւ Աստուծոյ եւ մարդկան միջնորդ յինելոյն: Որոց ամենեցուն բռնադատեալ՝ կոչեն զնա յանուն նախնոյն իւրոյ Սրբոյն Գրիգորի՝ Գրիգորիոս. եւ արժանաւոր ձեռնադրութեամբ եւ հոգեւոր օժմամբ նստուցանեն յաթոռ կաթողիկոսութեան Հայոց եւ Թորգոմայ: Որ Վիմին հաւատոյ եւ Անթոնոյ ընտրութեան⁵ համեմատ՝ հաստատեաց զհիմունս եկեղեցւոյ Հայաստանեայց, եւ վերստին յուսագարդեալ պայծառացոյց համանման Սուրբ Լուսաւորչին եւ Սրբոց Թարգմանչացն՝ Սահակայ եւ Մեսրոպրայ: Քանզի ունէր շնորհս թարգմանութեան, եւ միշտ քննէր զգիրս ամենայն ազգաց, եւ զպիտանիսն՝ զոր ըստ մերս թերի գտանէր՝ թարգմանէր աշխատասիրաբար, ինքեամբ եւ այլովք ոմամբք ճարտարօք, եւ աւանդէր եկե-

ղեցւոյ սրբոյ: Կարգէր տօնս վկայից եւ արանց սրբոց, եւ պատուէր զնոսա՝ պայծառագոյն տօնախմբութեամբ, եւ նորագոյն թարգմանեալ ճառիւք: Եւ ինքն վառեալ ի հուր սիրոյ նոցին՝ խառնէր զիւրն մշտաթոր արտասուս՝ ընդ սուրբ եւ պատուական արիւնս նոցա. որ եւ ըստ ջերմեռանդն սիրոյն զոր ունէր առ սուրբ վկայսն՝ զՎկայաւէր անուն ընկալաւ. զոր միշտ վերագոչէ եկեղեցի յամենեցուն յսելիս՝ զպարծանաց յորջորջումն: Հովուէր զհօտս յանձն արարեալս նմա ի Տեառնէ՝ ըստ օրինի քաջ հովուապետին, եւ տածէր զամենեսեան ի վայրս դալար եւ ի ջուրս հանգստեան, յաստուածային պատուիրանացն պահպանութիւն. տքնէր հանապազ վասն փրկութեան հոգւոց նոցա. եւ ոչինչ էր նմա փոյթ՝ բայց եթէ անվնաս մնալն նոցա յապականիչ գայլոց. շրջէր միշտ առ նոսա եւ խրատէր զամենեսեան զնալ յօրէնս եւ ի պատուիրանս Տեառն անարատութեամբ: Աշխատէր յընթացսն երբեմն յովանակաւ երբեմն ի հետիոտս. եւ քաղցրագոյն էր նմա աշխատութիւն մարմնոյն առ սէր աստուածայնոցն: Արհամարհեալ էին ի նմանէ իրք մարմնականք, եւ ոչ էր փոյթ ինչ նմա յաղագս փառաց անցաւորի, այսինքն հեծանելեաց, փափկերախ երիւարաց կամ զարդարեալ կիսիչէից⁶. կամ զգեստուց խենչուութեան⁷ որով բազումք արտաքուստ զարդարին, որպէս յայտնի է ամենեցուն. նա եւ ոչ գոյր նմա տուն հանգստեան կամ տեղի բնակութեան, որով հանգիստ տայր տկարութեան մարմնոյ՝ ի բազում աշխատութեանցն, կամ ժառանգութիւն ինչ մարմնական ստացեալ, կամ ի միում վայրի բնակութիւն կալեալ. այլ պանդխտաբար շրջէր

⁴ Թագազուրկ թագաւորն Վանանդայ կամ Կարսի:
⁵ Պետրոսի եւ Պողոսի Առաքելոց:

⁶ Զորիներ:
⁷ Մեղադրէ եկեղեցական անձանց նոխազարդ հագուստ սիրելի:

յերկրի, եւ զբաղցեալ հոգիան կերակրէր աստուածային բանիւն:

Գնայր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ երկիր պագանէր սուրբ տեղեացն որ անդ. եւ հասանէր յարեմուտս⁸, ուր ազգ բազում Հայոց իջեալ էին, եւ լուսաւորեալ զհոգիս նոցա, եւ հաստատեալ ի հաւատս, զայր հասանէր ի թագաւորեալ քաղաքն Կոստանդինուպօլիս, եւ յանդիման լինէր թագաւորին եւ պատրիարքին. որոց տեսեալ զայնպիսի աստուածագգեաց հայրապետ՝ զարդարեալ շնորհօք եւ իմաստութեամբ Հոգւոյն Սրբոյ, մեծաւ պատուով ընկալան զնա. մանաւանդ յորժամ խօսեցան ընդ միմեանս ի հարց եւ ի փորձ բանի, ըստ օրինի իմաստնոց, եւ գտին զնա անթերի լրամբ լցեալ ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ. քանզի քաջ տեղեակ էր յունական լեզուին եւ դպրութեանն, եւ յիրս ի բանս ըստ ամենայնի վարժ եւ կիրթ. ի հարցուածսն խոհեմ, ի պատասխանիսն՝ զզօն եւ հանդարտ. զեղ երեսացն բարետեսիլ եւ հեզահայեաց. եւ բանք աստ-

ուածաներկ լեզուին՝ համեստ եւ քաղցրագոյն. յորս կապեցան սիրով թագաւորն եւ բովանդակ իմաստնոցն ժողով: Յայնժամ սուրբն Աստուծոյ ըստ խորագէտ իմաստութեանն իւրոյ՝ խնդրէր ի թագաւորէն եւ ի պատրիարքէն դադարել ժամանակս ինչ առ նոսա եւ ընթեռնուլ զմատեանս նոցա եւ օգտել: Յօժարեալ կարգեցին ամենեցուն որոց ընդ նմա՝ կերակուրս եւ ռոճիկս յարքունուստ, եւ հրամայեցին անխնայ տալ զմատեանսն ամենայն՝ նմա: Որոյ դարեալ անդ բազում ժամանակս եւ առեալ թարգմանէր զՎարս սուրբ հարց եւ գՊատմութիւնս վկայից, եւ զմատեանս ուղղափառ վարդապետաց, եւ զճառս ներբողենից որ ի տօնս տէրունիս եւ յիշատակս Սրբոց. եւ տայր ցայնոսիկ որ ընդ նմայն էին՝ արք ճարտարք եւ իմաստունք՝ յարագազիր գրչութիւն եւ ի գիտութիւն բանի. զոր առեալ վաղվաղակի փոխարկէին, սրբաբանեալ ըստ մերումս բայի՝ զորկս ամենեւին եւ քերեալս ըստ քերթողացն արհեստի:

15.2 Անդ, Հայապատում, 2, էջ 250-252:

ԳՐ. ՎԿԱՅԱՍԷՐ ԵՒ ՔԵՆՈՐԴԻ ԻԻՐ ՅԵԳԻՊՏՈՍ

¹ Խորհուրդ զմտաւ ածեալ (Գրիգորի Վկայասիրի), պատրաստէր զոր ընդ նմայն էին ազգայինքն իւր եւ ընտրելոց արանց ժողով, եւ զորդի քեռն իւր զարդարեալն երկոքումք զեղեցկութեամբ՝ ըստ մարմնոյ քաջագեղութեան եւ ըստ

հոգւոյ պարկեշտութեան եւ սրբութեան, զարքեպիսկոպոսն զՏէր Գրիգորիոս, հանդերձ ամենայն կահիւն իւրեանց, մտանել ի նաւ, եւ յառաջագոյն անցանել զսահմանս Պաղեստինացոց. եւ ինքն զկնի սակաւ աւուրց առեալ հրաման յարքայէ՝, եւ ողջունիւ բաժանեալ յամենեցունց, զի թեթեակի բացանաւեալ հասցէ նոցունց: Որոց մտեալ ի նաւ, հնչեալ ուժգին հողմոյ՝ վարէր

⁸ Փոքր Ասիոյ եւ Յունաց կողմերն. թէ եւ թուի ոմանց ի Հոռով եւս երթալն. եւ չէ հաւանական թէ այն ատեն յԽալիս այլ սփռուած ըլլան Հայք, ինչպէս յետոյ յժԳ եւ ժԴ դարս. բայց ստուգիւ Հոռովայ Պապից հետ թղթակցութիւն ունեցեր է Վկայասէրն:

⁹ Ի կայսերէն Յունաց ի Կ. Պոլիս՝ ուր գնացեր էր:

բռնութեամբ գնաւն, ձգէր յԵզրիպտոս: Եւ քանզի աշխարհն Եզրիպտացւոց ընդ իշխանութեամբ Արարացւոց էր, երկեան երկիրը մեծ, եւ ակն ունէին վարիլ յաւար եւ ի գերութիւն: Յայնժամ խորհուրդ իմաստութեան գմտաւ ածէր Տէրն Գրիգորիոս, եւ զգենոյր գեկեղեցական զգեստն իւր եւ զգեցուցանէր զարսն եկեղեցականս՝ իւրեանց զգեստութեալ: զարդարեցան եւ աշխարհայինք իւրեանց ոսկիակուռ պատմուճանօք, զորս ընկալեալ էին պարգեւ ի թագաւորէն Յունաց. եւ ամենեքեան պաճուճեալք նստան, մեծամեծքն ըստ իւրաքանչիւր աստիճանի, եւ փոքունքն կանգնեցան ի սպասու առաջի:

Իսկ որպէս սովորութիւն էր՝ առաքեաց կարգեալ իշխան տեղւոյն տեսանել եւ իմանալ թէ զինչ իցէ որ կայ ի նաւին, կամ ուստի իցեն եկեալ. գնացին առաքեալքն եւ տեսին արս պատուականս եւ գեղեցկատեսիլս, զարդարեալս պէսպէս զգեստութեալ. եւ հիացան ընդ սքանչելատեսիլն տեսիլ, ափ ի բերան եղեալ դարձան առ իշխանն եւ պատմեցին նմա: Յայնժամ իշխանն յարուցեալ զայր առ նոսա յողջոյն, պատուով եւ հնազանդութեամբ, եւ հարցանէր հեզութեամբ, թէ ո ոք իցեն. եւ տուեալ պատասխանի, եթէ ազգականք եւ սպասաւորք կաթողիկոսին Հայոց եմք, եւ առաքեաց գմեզ յառաջագոյն, զի եւ ինքն եկեսցէ, որպէս զի տեսցուք զսուրբ լեառնն Սիւս, եւ զմիայնարանս նախնի Սրբոցն որ աստ, եւ երկիր պազեալ դարձցուք յաշխարհ մեր: Ապա ընկալեալ իշխանն զնոսա պատուով եւ հանգուցանէր մարդասիրաբար, եւ առաքէր վաղվաղակի ազգ առնէր ամիրապետին իւրեանց՝ մեծ խալիֆային, որ էր յառաջնորդական աթոռ ազգին իւրեանց. որ էր այր բարի եւ իմաստուն, առատաձեռն ի պարգեւս, քաղցր եւ ողորմած առ ամենեսեան: Որ իբրեւ ծանեալ՝ յոյժ

ուրախ եղեւ, եւ փութանակի առաքեաց ածել զնոսա առ ինքն մեծաւ պատուով: Ջոր տեսեալ՝ համբուրէր ըղձական սիրով, եւ տեղեկացեալ հարցմամբ ի նոցանէ զպատճառս զայստեանն՝ ուրախ լինէր. մանաւանդ յորժամ ծանեալ թէ սուրբ հայրապետն զայլոց էր անդրէն. եւ հրամայեաց հանգուցանել զնոսա ի պատշաճաւոր տեղւոյ, եւ տալ զպէտս նոցա առատապէս: Իսկ արքեպիսկոպոսն Տէր Գրիգորիս վաղվաղակի առաքէր առ սուրբ հայրապետն եւ ծանուցանէր նմա զիւրեանցն պատահումն, եւ հայցէր փութապէս հասանել առ նոսա: Եւ լուեալ սրբոյն Աստուծոյ զայսոսիկ, վաղվաղակի մտեալ՝ ի նաւ՝ անդր հասանէր. եւ բարեբարոյ խալիֆայն ամենայն մեծամեծովք իւրօք ելանէր ընդ առաջ նորա, եւ առեալ զսուրբ ձեռնն համբուրէր եւ դնէր ի վերայ աչաց եւ երեսաց իւրոց, եւ տայր մեծաւ գոհութեամբ օրհնութիւն Աստուծոյ, որ այնպիսի մեծի փարթամութեան արժանի արար զինքն. եւ հրամայէր պատրաստել նմա իջեւանս պատուականս, եւ հանգուցանէր զնոսա որպէս արժանն էր. եւ կարգէր նոցա սպասաւորս, պատրաստական առնել զամենայն պէտս նոցա մեծածախս եւ առատատուր պարգեւօք. եւ լցոյց զնոսա ի մեծամեծաց մինչեւ ի փոքունս՝ օժտապարգեւ ընծայիւք, ոսկւով արարացուով եւ այլօք պատուականօք, զոր աշխարհն այն մատուցանէր տիեզերաց:

Ապա յետ բազում աւուրց տեսանելոյ զմիմեանս եւ յոգնակի խօսակցութեան, խնդրէր հայրապետն հրաման դառնալոյ յաշխարհն իւր. իսկ նա ոչ առնոյր յանձն իւր ամենեւիմբ, թէպէտ սուրբ հայրապետն պատճառէր եւ դնէր առաջի գերկիւղն Աստուծոյ, յաղագս բազում ժամանակաց անտէրունչ թողլոյ գթողովորդն իւր. ասէր. Յայսպիսի մեծագոյն պարգեւէ առաքելոյ ինձ յԱս-

տուժոյ՝ ոչ երբէք զրկեալ աղքատացայց-
դնէր եւ այլ պատճառս բանի յաղագս ոչ
լինելոյ անդ յազգէս Հայոց՝ ունայն զհո-
վուելն իւր: Իսկ նա բառնայր զպատճա-
ռանս եւ երդմամբ հաստատէր ընուլ
զաշխարհն իւր: Իսկ նա ոչ առնոյր
յանձն իւր ամենեւիմբ, թէպէտ սուրբ
հայրապետն պատճառէր եւ դնէր առա-
ջի գերկիւղն Աստուծոյ, յաղագս բա-
զում ժամանակաց անտէրունչ թողոյ
զժողովուրդն իւր: ասէր. Յայսպիսի
մեծագոյն պարգեւէ առաքելոյ ինձ յԱս-
տուծոյ՝ ոչ երբէք զրկեալ աղքատացայց-
դնէր եւ այլ պատճառս բանի յաղագս ոչ
լինելոյ անդ յազգէս Հայոց՝ ունայն
զհովուելն իւր: Իսկ նա բառնայր
զպատճառանս եւ երդմամբ հաստատէր
ընուլ զաշխարհն՝ Հայաստանեայց ազ-
գօք, զոր եւ արար իսկ, եւ բազմացոյց

անդ բազմութիւն յոյժ իբր տասն հազա-
րաց. եւ ի նոցանէ բազում իշխանս եւ
հեծելագօրս պատուեալս: Եւ տեսեալ
սրբոյ հայրապետին զՋերմեռանդն եւ
զգորովալիւր սէր նորա, թողոյր փոխա-
նակ իւր անդր գորդի քեռն իւր, եւ ձեռ-
նադրէր գնա կաթողիկոս¹⁰ Եգիպտոսի.
Եւ այսու հաւանեցուցանէր զբարեբարոյ
խալիֆայն՝ թողուլ գնա ելանել յաշխար-
հէն իւրոյ: Այլ մեզ ոչ է ժամանակ պատ-
մել զբարէկրթութիւնս ի նմանէ եղեալս
առ նորակերտ հայրապետն եւ առ ժողո-
վուրդն իւր. քանզի նախկի յայոց ճառե-
ցաւ մանրապատում երկարագոյն ճա-
ռագրութեամբ:

ԹԱՄԱՐ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

(Շար. 38)

¹⁰ Թէ արդարեւ այդ գերագոյն կոչումը տուած է, կրնայ տարակուսուիլ:

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

**Ս Ե Ր Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ն**

Ժ Ե . Գ լ ու խ *

Ք Ա Ն Ա Ն Ա Յ Ի Կ Ն Ո Ջ Հ Ա Ի Ա Տ Ք Ը
(21-28)

Ապա Յիսուս հոնկե ելլելով գնաց Տիւրոսի եւ Սիդոնի շրջանները: Եւ ահա Քանանացի կին մը, որ այդ կողմերէն էր, եկաւ Յիսուսի մօտ եւ բարձրաձայն ըսաւ.

– Տէ՛ր, Դաւիթի՛ որդի, ողորմէ՛ ինձի, աղջիկս չար ոգիէն սաստիկ կը տանջուի:

Բայց Յիսուս չպատասխանեց անոր: Ասոր վրայ աշակերտները մօտեցան եւ աղաչելով ըսին.

– Ճամբէ՛ գիմֆ, որովհետեւ մեր Բոնեւէն կ'աղաղակէ:

Յիսուս պատասխանեց.

– Ես միայն Իսրայէլի ժողովուրդին կորսուած ոչխարներուն համար զրկուեցայ:

Սակայն կինը մօտեցաւ, ծունկի եկաւ ու ըսաւ.

– Տէ՛ր, օգնէ՛ ինձի:

Յիսուս պատասխանեց.

– Ճիշդ չէ՛ մանուկներուն ձեռքէն հացը առնել եւ շուններուն նետել:

Կինը ըսաւ.

– Այո՛, Տէ՛ր, բայց նոյնիսկ շունները իրենց տիրոջ սեղանէն ինկած փշրանքներով կը կերակրուին:

Այն ատեն Յիսուս անոր պատասխանեց.

– Ո՛վ կին, մեծ է հաւատքդ. թող ուզածիդ պէս ըլլայ:

Եւ նոյն վայրկեանին անոր աղջիկը բժշկուեցաւ:

Պարզ գրուագ մըն է:

Տիւրոսը եւ Սիդոնը Լիբանանի այժմուց Սուր եւ Սայտա քաղաքներն են:

Յիսուս Գեննեսարէթէն է, որ կ'անցնի Տիւրոս եւ Սիդոն: Այն ատեն իր մօտ կին մը կու գայ եւ կ'աղաչէ, ըսելով. «Տէ՛ր, Դաւիթի՛ որդի, ողորմէ՛ ինձի, աղջիկս չար ոգիէն սաստիկ կը տանջուի»:

Յիսուս չի պատասխաներ: Իսկ աշակերտները կ'ըսեն, որ գայն ճամբէ:

Աշակերտներուն ճամբելու խօսքը ոմանք ժխտականօրէն կը հասկնան, ըստ որուն՝ անոնք ըսել կ'ուզէին, թէ Յիսուս իր գլուխէն հեռացնէ քանանացի կինը: Բայց այս ընկալումը արդար չէ: Աշակերտներուն միտքը ուրիշ բան էր: Անոնք Յիսուսի դիմած են աղաչելով, որ աղերսուած բժշկուեցան շնորհէ, որ պէսզի կինը մխիթարուած երթայ:

Աշակերտներու աղաչանքին վրայ է, որ Յիսուս կը պատասխանէ. «Ես միայն Իսրայէլի ժողովուրդին կորսուած ոչխարներուն համար զրկուեցայ»:

Արդեօ՞ք Յիսուս եկած էր Իսրայէլի

* Շար. նախորդ թիւի ԺԵ. գլուխէն:

ժողովուրդի կորսուած ոչխարներուն համար միայն:

Ոչ: Եւ իր առաքելութեամբ ալ Յիսուսու ցոյց տուաւ, թէ ինք չէր զրկուած մէկ ցեղի փրկութեան համար: Իր առաքելութիւնը տիեզերական փրկութեան համար էր: Ուստի աշակերտներուն տրուած պատասխանին «միայն»ը պէտք է հասկնալ իբր «նախ», եւ ոչ թէ իբր նշան խորականութեան: Աստուծոյ ընտրած ժողովուրդը մոլորած էր, հետեւաբար նախ պէտք էր զա՛յն վերադարձնել հաւատարմութեան:

Յիսուս, ինչպէս իր աշակերտները մեծ ճիգ թափեցին, որ Իսրայէլի ժողովուրդը ընդունի փրկութեան աւետիսը, եւ անոնց մերժումին վրայ՝ դարձան դէպի հեթանոսները: Առաջին հերթին Աստուծոյ կորսուած ոչխարները պէտք է լսէին եւ ընդունէին փրկութեան աւետիսը, որովհետեւ Ան գիրենք պատրաստած էր այդ ուղղութեամբ: Սակայն անոնք նախընտրեցին մերժել Աստուծոյ դարաւոր դաստիարակութիւնը, քան թէ ընդունիլ զայն:

Կինը դարձեալ աղաչական կը դիմէ Յիսուսի: Ան կը հաւատար, ուստի չորկարացաւ եւ Յիսուսի աղաչեց. «Տէ՛ր, օգնէ՛ ինձի»:

Յիսուս կը պատասխանէ. «Ճիշդ չէ՛ մանուկներուն ձեռքէն հացը առնել եւ շուններուն նետել»: Խօսքը մակերեսային ձեւով առնելու պարագային՝ գայթակղեցուցիչ է: Շատեր որոնք չեն հասկցած Յիսուսի ոգին՝ այս խօսքը անընդունելի գտած են:

Անկասկած, Յիսուս երբեք ալ խրատական չէր եղած, եւ ոչ ալ վիրաւորական:

Հին աշխարհին մէջ տարածուած էր առածներով խօսիլը: Առածները իմաստութեան խիտ եւ պզտիկ խօսքեր են: Մեզի շատ ծանօթ է հետեւեալ առածը: Երբ խօսակցութեան առարկայ մէկը

յանկարծ յայտնուի խօսողներուն դիմաց, սովորութիւն է ըսել՝ «Շունը յիշէ՛ փայտը քաշէ»: Ասիկա առած մըն է, որ անպայման վիրաւորական չէ՛, թէեւ այդ առումով ալ կրնայ գործածուիլ: Յիսուսի ըսածն ալ առած մըն էր, որուն նպատակը ժխտական չէր, գէթ իր միտքին մէջ: Կինն ալ շատ լաւ հասկնալով Յիսուսի միտքին ժխտական չըլլալը՝ փոխանակ վիրաւորուելու՝ կ'ըսէ. «Այո՛, Տէ՛ր, բայց նոյնիսկ շուները իրենց տիրոջ սեղանէն ինկած փշրանքներով կը կերակրուին»: Յիսուսի միտքն էր՝ «Մարդ իր սեփական մանուկներէն կտրելով հացը՝ ուրիշներուն չի տար»:

Արդ, նկատի ունենալով, որ ժխտական չէր Յիսուսի նպատակը, եւ հաւանաբար ալ կ'ուզէր տեսնել, թէ ի՞նչ պիտի ըլլայ կնոջ վերաբերումը, ահա կ'ըսէ. «Ո՛վ կին, մեծ է հաւատքդ. թող ուզածիդ պէս ըլլայ»:

Հաւատքին առջեւ որեւէ անկարելիութիւն եւ դժուարութիւն չկայ: Հաւատքը միշտ կը վարձատրուի Աստուծոյ կողմէ: Աստուած կը կատարէ հաւատքով աղերսուածը:

ՅԻՍՈՒՍ ՇԱՏԵՐ ԿԸ ԲԺՇԿԷ (29-31)

Յիսուս այդտեղէն մեկնելով գնաց Գալիլիայի լիճին եզերքը եւ լեռը ելլելով՝ հոն նստաւ: Մեծ բազմութիւն մը մօտեաւ իրեն. անոնք իրենց հետ ունէին կաղեր, կոյրեր, համրեր, հաշմանդամներ եւ ուրիշ հիւանդներ, որոնք բերին եւ դրին Յիսուսի ոտներուն առջեւ: Եւ Յիսուս բժշկեց զանոնք: Բոլորն ալ կը զարմանային, տեսնելով որ համրերը կը խօսին, կաղերը կը քայն, հաշմանդամները կը բժշկուին եւ կոյրերը կը տեսնեն, եւ կը փառաւորէին Իսրայէլի Աստուծոյ:

Բժշկութեան գրուագ մըն է ասիկա: Այստեղ Յիսուս շատեր կը բժշկէ: Սկզբնաւորութեան՝ ուշագրաւ է

«լեռը ելլելով՝ հոն նստաւ» նկարագրութիւնը: Նոյնին հանդիպեցանք նաեւ Ծորդ գլխուն սկիզբը: Անոր հետեւած էր Լերան Քարոզը: Այդ առիթով ըսինք, որ լեռ ելլելը կը յիշեցնէր Մովսէսի լեռ բարձրանալն ու աստուածային Օրէնքը ժողովուրդին տալը: Յիսուս ալ մարգարէին պէս լեռ էր ելած՝ հոնկէ աստուածային Նոր Օրէնքը տալու: Իսկ նստելով ուսուցանելուն մասին՝ թէ խորհրդանշան է հեղինակաւոր ուսուցման:

Այս դրուագին մէջ ուսուցում չենք տեսներ, այլ՝ բժշկութիւն: Բայց «լեռը ելլելով՝ հոն նստաւ» պատկերը կը թելադրէ, որ Յիսուս նախ ուսուցանեց, ապա բժշկեց: Անոր ուսուցանելուն մէկ այլ նշան է հիւանդներուն բերուելը եւ ոտքերուն առջեւ դրուելը: Հին ժամանակ ուսուցումները կը կատարուէին վարդապետողներու ոտքերուն առջեւ:

Յիսուս իրեն բերուած հիւանդներուն վրայ մեքենականօրէն բժշկութիւն չէր ընէր, այլ նախ անոնց կը սորվեցնէր՝ հաւատքը ամրապնդելու համար, եւ ապա կը բժշկէր:

Մեկնիչներ այս դրուագին անդրադառնալով, ենթադրած են որ Յիսուսի մօտ եկած այս բազմութիւնը հեթանոս պէտք է եղած ըլլար: Թէ ինչո՞ւ:

Օրինակ մեկնիչ մը բացատրած է, թէ այս աւետարանին մէջ երկու տեղ կը գտնենք «Գալիլիայի լիւնի եգեբքը» նշումին. մէկը 4.13-ի մէջ, միւսն ալ այստեղ: Առաջինի պարագային՝ Եսայի մարգարէէն մէջբերումը՝ ուղղակի հեթանոսներուն կը վերաբերի:

Մեր այս հատուածի «բազմութիւն» բառին անդրադառնալով, ցոյց տուած է, որ Մատթէոս աւետարանիչ «ժողովուրդ» բառը գործածած է իսրայէլացիներուն համար միայն: Ուստի, ենթադրուած է թէ «բազմութիւն»ով աւետարանիչը ակնարկած է հեթանոսներու:

Հատուածի եզրակացութեան մէջ

տարր մըն ալ կայ, որ բազմութեան հեթանոս ըլլալը ցոյց կու տայ. բոլոր բժշկուածները, գրուած է, կը փառաւորէին Իսրայէլի Աստուածը:

Կարծէք այս բազմութիւնը լսելով Յիսուսի ուսուցումները եւ տեսնելով կատարած բժշկութիւնները՝ հիացաւ եւ ամէն տեսակ կապանքներէ ազատուելով՝ վերանորոգուեցաւ եւ փառաւորեց Յիսուսով յայտնուած Աստուածը:

ՉՈՐՍ ՀԱԶԱՐԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ
(32–39)

Յիսուս իր մօտ կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց.

– Կը խղճամ այս բազմութեան, որովհետեւ ահա երեք օր է որ մօտս են եւ ա՛յ ոչինչ ունին ուտելիք: Չեմ ուզեր գիրենմ անօթի տուն դրկել, որպէսզի չըլլայ թր մամբու ընթացքին մարին:

Աշակերտները ըսին.

– Հիմա ամայի այս վայրին մէջ ուրկէ՞ այսչափ բազմութիւն կշտացնելու չափ հաց գտնենմ:

Յիսուս հարցուց անոնց.

– Քանի՞ հաց ունիք:

Անոնմ պատասխանեցին.

– Եօթը հաց եւ քիչ մըն ալ մանր ձուկեր:

Յիսուս հրամայեց ժողովուրդին որ գետին նստին: Ապա առաւ եօթը հացը եւ ձուկերը, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, կտրեց եւ աշակերտներուն տուաւ, ու ասոնմ ալ բաժնեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աշակերտները կտորները հաւաքելով եօթը զամբիւղ լեցուցին: Իսկ ուտողները շուրջ չորս հազար հոգի էին, կիներն ու մանուկները չհաշուած:

Դրուագը շատ նման է Հինգ հազարի կերակրումի դրուագին:

Տեսանք որ Յիսուս հեթանոս քաղաքներ այցելեց եւ ապա վերադարձաւ

Գալիլիա:

Դէպի Հեթանոս քաղաքներ այցելութիւնը այս հանգրուանին՝ ցոյց կու տայ թէ մօտեցած է այն պահը, որ Աստուած պիտի ընտրէ իր նոր ժողովուրդը:

Նախորդ հատուածին առիթով ըսինք, որ իր շուրջ հաւաքուած բազմութիւնը մեծաւ մասամբ հեթանոսներէ բաղկացած էր: Ուրեմն, Չորս հազարին կերակրումը մեծաւ մասամբ հեթանոս բազմութեան մը կերակրումն է:

«Կը խոնամ այս բազմութեան, որովհետեւ ահա երեք օր է որ մօտս են եւ ա՛յ ոչինչ ունին ուտելիք: Ձեմ ուզեր գիրեմք անօթի տուն դրկել, որպէսզի չըլլայ որ քամբու ընթացքին մարին»:

Յիսուս աստուածային իր գուժը եւ խնամատարութիւնը կը յայտնէ, տեսնելով որ իր մօտ հաւաքուած բազմութիւնը ուտելիք չունի:

Աշակերտները կ'ըսեն.

«Հիմա ամայի այս վայրին մէջ ուրկէ՞ այսչափ բազմութիւն կշտացնելու չափ հաց գտնենք»: Այս խօսքը կը թելադրէ, որ անոնք փոխանակ վստահելու Յիսուսի՝ կը շարունակեն շփոթի եւ շուարումի մատուցիլ:

Սակայն Յիսուս անոնց կասկածամիտ տրամադրութեան դիմաց չի նահանջեր անշուշտ, այլ կը հարցնէ. «Քանի՞ հաց ունիք»:

Աշակերտները Յիսուսի կու տան եօթ հացեր եւ քիչ մըն ալ մանր ձուկեր: Յիսուս զանոնք առնելով՝ շնորհակարութիւն կը յայտնէ Աստուծոյ, ապա աշակերտներուն կու տայ՝ որպէսզի բաժնեն: Աւետարանիչը կը վկայէ թէ՛ «բոլորն ալ կերան ու կշտացան, եւ աշակերտները կտորները հաւաքելով եօթը գամբիւղ լեցուցին»:

Այս հրաշքէն ետքը Յիսուս կ'արձակէ ժողովուրդը՝ երթալու համար Մագդալայի սահմանները:

Մեկնիչներ Հինգ հազարի եւ Չորս

հազարի կերակրումի տարբերութիւններուն մէջ միտքեր կը տեսնեն:

Առաջինը՝ հրեայ տեսնուած է, եւ Հինգ հացերը մեկնուած են իբր Հնգամատեանին խորհրդանշան, որ ամէն մէկ հրեայի համար Աստուածաշունչին ամէնէն կարեւոր բաժինն էր, հիմքը՝ որուն վրայ պիտի կառուցուէին բոլոր միւս գիրքերը:

Երկրորդը՝ հեթանոս տեսնուած է, ուստի եօթ հացերը մեկնուած են իբր

խորհրդանշան աշխարհի բոլոր ժողովուրդներուն: Ինչպէ՞ս.-

1.- Ն. Ք. մօտաւորապէս 250 տարիներ առաջ, Հին Կտակարանը երբայեւրէնէ թարգմանուեցաւ յունարէնի: Չայն թարգմանեցին եօթանասուն անձեր: Ինչո՞ւ այնքան թարգմանիչներ այդ գործին լծուեցան: Որովհետեւ այն ժամանակ հաւատալիքը կար, որ աշխարհի ժողովուրդները թիւով եօթանասուն են: Ուրեմն, իւրաքանչիւր թարգմանիչ՝ խորհրդանշանորէն տեսնուած էր իբր ներկայացուցիչ ժողովուրդի մը: Կը խորհէին թէ՛ թարգմանութիւնը աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար պիտի ըլլար: (Ճիշդ է որ իբր թիւ եօթանասունը եօթ չէ, սակայն հիմքին ունի զայն, աւելորդ է ըսել՝ թէ անոր բազմապատկումն է տասով): Արդ, եօթը հացերը աշխարհի ժողովուրդները կը խորհրդանշէին:

2.- Առաքեալներուն Գործերը գիրքին 6-րդ գլխուն մէջ կը տեսնենք, թէ եօթ սարկաւազներ ընտրուեցան, որոնք օտարազգիներուն կամ հեթանոսութենէ դարձածներուն ծառայութեան համար էին: Եօթը սարկաւազներու ընտրութիւնը պատահական չէր. եօթը ընկալուած էր նաեւ աշխարհի ժողովուրդներուն խորհրդանշան:

Հինգ հազարի եւ Չորս հազարի կերակրումին պատգամն է, որ Յիսուսի բաշխած կերակուրը չէր սահմանուած

միայն Իսրայէլի ժողովուրդին, այլեւ աշխարհի բոլոր ժողովուրդներուն:

Հինգ հազարին կերակրումը տեղի ունեցած էր ժողովուրդին Յիսուսի մօտ եկած օրն իսկ, եւ արձակումը՝ երեկոյեան, մինչդեռ Չորս հազարին կերակրումը տեղի ունեցած է բազմութեան իրեն գալէն երեք օրեր ետքը եւ արձակումը՝ ցերեկ ատեն:

Այս տարբերութիւնը մեկնուած է իրր առաջինին պատրաստուած ըլլալը՝ ընդունելու աստուածային կերակուրը, իսկ երկրորդին՝ պատրաստուելը:

Հրեայ ժողովուրդը պատրաստուած էր, հեթանոսները կը սկսէին պատրաստուել: Սակայն հինգ հազարին երեկոյ ժամանակ արձակուելը մտածել տուած է նաեւ, թէ Յիսուս մարգարէականօրէն կը յայտնէր, որ հակառակ Հին Իսրայէլի պատրաստուածութեան՝ անի-

կա պիտի նախընտրէր մնալ ուշացած ժամանակին մէջ՝ քան թէ անցնէր գալիք օրուան: Մինչդեռ այն հեթանոսները որ Յիսուսի պիտի յարէին՝ դառնային Աստուծոյ Նոր ժողովուրդը, ցերեկի որդիները:

Չորս հազարի կերակրումին կատարումը երեք օրեր ետքը՝ բացայայտօրէն մեզ կը յղէ նաեւ Յիսուսի յարութեան, որ տեղի ունեցաւ յետ երեքօրեայ թաղման: Հասկնալի է, ուրեմն, որ ըսել ուզուած է, թէ Աստուծոյ Նոր ժողովուրդին հաւատքը եւ ժողովուրդը ինք՝ պիտի հիմնուէր Յիսուսի յարութեան դէպքին վրայ:

Խմբագրեց՝

Գառնիկ Քինյ. Գոյունեան

ԶԱՐԵՀ ԱՐԲ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

(Շար. 24)



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ

Գլուխ 11*

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՄԵԿՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

* Ս. Գիրքին մէջ, շատ անգամ միեւնոյն անունը տրուած է այլ եւ այլ տեղերու: Երկու քաղաքի անուն Կեսարիա է: մէկը՝ Փիլիպպոսի Կեսարիա, որ Գալիլիայի մէջ էր (Մտ 16.13), միւսը, Միջերկրականի ծովուն եզերքը: Այս վերջինն է այն Կեսարիան, որ Գործք Առաքելոցին մէջ կը յիշուի: Հրէաստանէն Հռոմ գացող ճամբորդները, ընդհանրապէս այս քաղաքի նաւահանգիստէն կ'ելլէին: Նոյնպէս, երկու քաղաքի անուն Անտիոք է: մէկը, Ասորիքի մէջ, եւ այն քաղաքն է, ուր Պողոսն ու Բառնաբասը սկսան իրենց գործունէութեան, եւ ուր Քրիստոսի հետեւողները առաջին անգամ Քրիստոնեայ կոչուեցան: Իսկ Պիսիդեայի կամ ներկայի Գարամանի մէջ էր Անտիոքը, որ կը յիշուի (Գրծ 13.14-ի եւ Բ.Տմ 3.11):

Գաղաազի լերան վրայ Մասիա (որ դիտանոց կը նշանակէ) անունով քաղաք կար. այնտեղ կը բնակէր Յեփթայէն, այնտեղ Յակոբն ու Լաբանը կնքեցին իրենց դաշինքը (Ծն 31.49, Դտ 11.29,34): Այլ Մասիա քաղաք կար նաեւ Մովաբի մէջ (Ա.Թգ 22.3). թերեւս ասիկա առաջինին հետ նոյնը ըլլայ: Բենիամինեաններու շրջանին մէջ եւս կար Մասիա անունով քաղաք, ուր Սաւուղ թագաւոր

ընտրուեցաւ (Ա.Թգ 10.17-27): Դարձեալ, ուրիշ Մասիա քաղաք կար Յուդայի երկրին մէջ (Յես 15.38):

Աստուածաշունչին մէջ երբեմն տարբեր անուններով կը յիշուին նոյն անձերը եւ նոյն տեղանունները. օրինակ. Մովսէսի աները Յոբաբ եւ Յոթոր կոչուած է (Դտ 4.11, Ել 3.1). Ղեւին Մատթէոսն է. միեւնոյն անձն են Թովմասն ու Երկուորեակը, եւ Թովմաս կը նշանակէ Երկուորեակ. Թադէոս, Ղերէոս եւ Յուդա միեւնոյն առաքելին անուններն են: Քորեբն ու Սինան միեւնոյն լեռնաշղթային այլեւայլ ծայրերու անուններն են, եւ այս երկու անուններէն մէկը երբեմն ամբողջ լեռնաշղթային կը տրուին: Գալիլիայի Կեսարիան հինէն ի վեր Լայիս կոչուած է, ապա Դան (Դտ 18.29): Գեննեսարէթի ծովակը (Ղկ 5.1) կը կոչուի նաեւ Գալիլիացիներու կամ Տիրերիայի ծով (Մտ 4.18, ՅՀ 21.1):

Ներկայի Հապէչիստանը կոչուած է Եթովպիա եւ երբեմն Քուշ. թէեւ այս վերջին անունը նաեւ տրուած է Հընդկաստանի եւ Արարիոյ: Յունաստանը, երբեմն կոչուած է Ելլադա եւ երբեմն Յաւան (Ես 66.19): Եգիպտոսը թէ՛ Քամ եւ թէ՛ ալ Ռահար կոչուած է (Սղ 78.51, Ես 51.9): Մեռեալ ծովը կոչուած է Դաշտի ծով (Դ.Թգ 14.25), որովհետեւ այս ծովուն մօտ տափարակ տեղ մը կար,

* Շար. նախորդ թիւի 11-րդ գլուխէն:

որով վրայ շինուած էին Սողոմ ու Գոմոր քաղաքները: Նոյն ծովը, Երուսաղէմի հետ դրացնութիւն ունենալուն պատճառով կոչուած է նաեւ Արեւելեան ծով (Յվ 2-20), եւ երբեմն ալ կոչուած է Ադի ծով (Մն 14.3): Նեղոս Գետը Ս. Գիրքին մէջ կոչուած է Եգիպտոսի Գետ եւ Միովրի ջուր (Մն 15-18, Եր 2-18): Միջերկրական ծովը երբեմն Փղշտացիներու ծով կոչուած է, Փղշտացիներու անունով, որոնք այդ ծովուն եզերքը կը բնակէին, եւ երբեմն ալ Արեւմտեան ծով, եւ շատ յաճախ Մեծ ծով (Ել 23.3, Բ-Օր 11.24, ԹԼ 34.6,7): Քանանու երկիրը՝ Փղշտացիներու երկիր (Ել 15.14), Երբայեցիներու երկիր (Մն 40.15), Իսրայէլի երկիր (Եզ 11.17), Սուրբ երկիր (Ձք 2.12), եւ Աւետեաց երկիր (Երբ 11.9) կոչուած է:

Յատուկ անուններու այս տարբեր գործածութիւնը երբեմն կը լուծէ Սուրբ Գիրքին աւերելոյթ հակասութիւնները: օրինակ. Յովրամի որդին՝ Ոքոզիան (Դ.Թգ 8.29), Ագարիա կոչուած է Բ.Մն 22.6)-ի մէջ. Յովսիայի որդին՝ Յովաքազ (Դ.Թգ 23.30), Յօհանան կոչուած է (Ա.Մն 3.15)-ի մէջ, եւ՝ Սեղղոմ (Եր 22.11)-ի մէջ: Ոգիան՝ Ագարիա, Նաթանայէլը՝ Բարթողիմէոս, կոչուած են: Այս տարբեր անունները յաճախ նոյն իմաստը ունին:

Նախորդ էջերով տուած ենք Ս. Գիրքի բառերը մեկնելու առաջին եւ ամէնէն ընդհանուր կանոնը, այսինքն, Ս. Գիրքին խօսքերը պէտք է հասկնանք իրենց ընդհանուր կամ սովորական իմաստով, եթէ մասնաւոր պատճառ չկայ անոնց ուրիշ իմաստ տալու: Սակայն, երբեմն կը պատահի որ մէկ բառ միեւնոյն գիրքին մէջ տարբեր իմաստ կ'ունենայ. հետեւաբար, հասկնալու համար թէ տարբեր իմաստ ունեցող այդ բառը ինչ իմաստով գործածուած է նախադասութեան մէջ, պէտք կ'ունենաք մեկնութեան երկրորդ կանոնի:

Այդ երկրորդ կանոնը, հետեւեալն է. խնդրոյ առարկայ բառին հետ, նաեւ նախադասութեան պարունակած միւս բառերը եւս նկատի ունենալով, պէտք է որոշել թէ հեղինակը ինչ բան հասկցնելու գաժ է այդ բառով: Օրինակ. Հաւատք բառը Սուրբ Գիրքին մէջ տարբեր իմաստներ ունի. եւ ամէն անգամ պէտք է ուշադրութիւն դարձնել անոր հետ կապուած միւս բառերուն, որպէսզի հասկցուի թէ ինչ իմաստով գործածուած է այսինչ կամ այնինչ տեղ: Օրինակ (Գղ 1.23)-ի այս նախադասութիւնը կարդալով, «Հիմա ինչ ալ կը քարոզէ այն հաւատքը, որ ժամանակին արմատախիլ կ'ընէր», եթէ ուշադրութիւն դարձնենք «քարոզել» եւ «արմատախիլ ընել» բառերու իմաստին, դիւրաւ կը հասկնանք, թէ այստեղ հաւատք բառը՝ կրօնք կը նշանակէ, այսինքն՝ հաւատալիք: Տէս նաեւ (Ա.Տմ 3.9, 4.1, Գրծ 24.24): Այս կանոնին համեմատ կը հասկցուի թէ (Հռ 3.3)-ի մէջ գրուած այս նախադասութեան մէջ, «միթէ անոնց անհաւատարմութիւնը¹ արգելի պիտի ըլլար որ Աստուած ինչ հաւատարիմ մնայ», այստեղ հաւատք բառը ճշմարտութիւն կամ հաւատարմութիւն կը նշանակէ, եւ (Հռ 14.23)-ի մէջ, նոյն հաւատք բառը խիղճի միջոցաւ պարտաւորութիւնը ճանչնալ կը նշանակէ: Նոյն կանոնով կը հասկնանք թէ (Եբր 11)-րդ գլուխին մէջ հաւատք բառը կը նշանակէ սրտանց ընդունիլ Աստուծոյ յայտնուած վարդապետութիւնները եւ հնազանդիլ անոնց, եւ թէ ուրիշ տեղ, օրինակ, (Հռ 3.28)-ի մէջ, հաւատք կը նշանակէ յոյս դնել այն փրկագործութեան վրայ, որ Քրիստոս կատարեց, եւ զայն հիմք համարեց մեր թողութեան եւ միջոց՝ մեր սրբութեան:

¹ Գրաբարի թարգմանութեան մէջ անհաւատարմութիւն ու հաւատարիմ բառերը՝ անհաւատութիւն եւ հաւատք գրուած են:

Դարձեալ, նոյն այս կանոնով, այսինքն՝ ուշադրութիւն դարձնելով յարակից այլ բառերու իմաստին, եթէ որոշենք մարմին բառին այլեւայլ իմաստները քննել, պիտի տեսնենք, թէ այս բառը երբեմն փափուկ եւ դիւրաթեք իմաստ ունի, ինչպէս (Եզ 11.19)-ի մէջ, «անոնց մարմնեղէն սիրտ պիտի մնամ», ուր մարմնեղէնը դրուած է, քարեղէնին հակառակ իմաստը տալու նպատակով: Երբեմն ալ, մարմին կը նշանակէ մարդկային բնութիւն, առանց նկատի առնելու անոր մեղաւորութիւնը (ՅՎ 1.14, Հռ 1.3, 9.3), սակայն աւելի յաճախ կը գործածուի մարդկային ապականեալ եւ մեղաւոր բնութեան փոխարէն (Հռ 8.5, Եփ 2.3): Դարձեալ, ուրիշ իմաստ եւս ունի, որով կը հասկցուին այն բաները, որոնք կրօնքի մէջ արտաքին եւ արարողական ըլլալով, ամբողջովին տարբեր են անոր ներքին եւ հոգեւոր բաներէն. այս իմաստով գործածուած է (Գղ 3.3, եւ 6.12)-ի մէջ, ուր կ'ակնարկուին մանաւանդ Մովսիսական արարողութիւններուն: Տէս նաեւ (Փլպ 3.3):

ՓԻԿՈՒԹԻՒՆ բառը երբեմն կը նշանակէ արտաքին չարիքէ ազատութիւն, ինչպէս (Ել 14.13)-ի մէջ: Նաեւ, կը նշանակէ բժշկութիւն, ինչպէս (Յկ 5.15)-ի մէջ, ուր Առաքեալը, քրիստոնեայ անհատի հիւանդութեան մասին խօսելով, կ'ըսէ թէ՛ «եւ հաւատով կատարուած աղօթքը պիտի (փրկէ²)», այսինքն՝ պիտի բժշկէ «հիւանդը»: Սակայն, փրկութիւն բառը ընդհանրապէս կը վերաբերի այն օրհնութեանց, զոր հաւատացեալները կը վայելեն հոգեպէս, եւ երբեմն ալ այն օրհնութեանց՝ զորս կը վայելեն երկրի վրայ (Եփ 2.8, Ղկ 1.77), սակայն, աւելի յաճախ՝ Քրիստոսի կողմէ հաւատացեալներուն խոստացուած ամբողջական երանելի վիճակին, որով

սկիզբն է մեղքերու թողութիւնը, եւ վախճանը՝ յաւիտենական փառքը (Հռ 13.11):

Նմանապէս, **ԱՐԻԻՆ** բառը, Սուրբ Գիրքին մէջ գործածուած է տարբեր իմաստներով: Աստուած «Ան է որ միակ մարդէ մը (մէկ արիւնէ) ամբողջ մարդկութիւնը յառաջ բերաւ» (Գրծ 17.26). այս նախադասութիւնը կը նշանակէ, թէ բոլոր ազգերը ունին միեւնոյն ծագումը կամ բնութիւնը: «Անոր արիւնը թող մեր եւ մեր գաւակներուն վրայ ըլլայ» (Մտ 27.25). այս նախադասութեան մէջ արիւն բառը կը նշանակէ՝ գրիստոս սպաննելու յանցանքը, իրբեւ թէ՛ հրեաները կ'ուզէին ըսել, մեր վրայ ըլլայ ատոր մահը, այսինքն՝ անոր սպանման յանցանքը:

Հռ 5.9-ի մէջ, հաւատացեալին համար ըսուած է, թէ Քրիստոսի արեամբ կ'արդարանայ. Ա.ՅՎ 1.7-ի մէջ, Քրիստոսի արեան համար ըսուած է, թէ՛ «կը սրբէ մեզ ամէն մեղքէ». փրկուածներուն համար ալ կ'ըսուի, թէ՛ «իրենց պարեգօտները լուացին եւ ներմկցուցին Գառնուկին արիւնովը» (Յյտ 7.14): Այս վկայութիւններուն մէջ, Քրիստոսի արիւն ըսելով, պէտք է հասկնալ թէ՛ ան մահուան հնազանդեցաւ եւ խաչին վրայ իր անձը մատուցեց, որ՝ արդարեւ, մեղաւորին արդարանալուն հիմը եւ անոր սրբուելուն պատճառն ու միջոցն է:

ՇՆՈՐՀՔ բառին ընդհանուր իմաստն է բարերարութիւն, պարգեւ: Երբ խօսքը Աստուծոյ մասին է, կը նշանակէ այն բարերարութիւնը զոր մարդոց համար ըրաւ Աստուած, եւ որուն արժանի չեն մարդիկ. այս իմաստով գործածուած է հետեւեալ նախադասութեան մէջ. «Իր նախասահմանութեան եւ շնորհներուն համաձայն» (Հմմտ Բ.Տմ 1.9): Նաեւ կը նշանակէ, տարբեր-տարբեր պարգեւները զորս կու տայ այս շնորհքը. օրինակ. արդարացում, ինչ-

² Ըստ Գրաբար թարգմանութեան:

պէս Հռ 5.15-ի մէջ. *գորուծիւն եւ սրբուծիւն, ինչպէս «Իմ շնորհքս կը բաւէ քեզ» (Բ.Կր 12.9). կը նշանակէ նաեւ, յաւիտենական փառք, ինչպէս Ա.Պտ 1.13, Գրծ 14.3-ի մէջ «Շնորհաց խօսք» բտելով, կը հասկցուի Աւետարանը: Նոյնպէս Եբր 13.9-ի մէջ, Շնորհք բառով կը հասկըցուին Աւետարանի վարդապետութիւնները:*

Այս նախադասութիւններուն մէջ յիշուած բառերուն այսինչ կամ այնինչ իմաստը կը յստականայ, անոնց հետ գործածուած միւս բառերու իմաստէն:

Այս երկրորդ կանոնը, որ ընթերցողին կ'օգտէ հասկնալու թէ նախադասութեան մէջ այսինչ բառին բազմաթիւ իմաստներէն ո՛րն է յարմարագոյնը, կ'օգնէ նաեւ հասկնալու, թէ այդ բառը այդտեղ նկարագրապէ՛ս, այսինքն՝ առաջին եւ ընդհանուր իմաստով, թէ այլաբանօրէն գործածուած է: Եբր որեւէ նախադասութիւն կարդալով կը տեսնենք թէ իմաստին մէջ հակասութիւն կամ անհնարութիւն պիտի ծագի, եթէ անոր բառերը ըմբռնուին ընդհանուր իմաստով, յայտնի է թէ այդտեղ բառերը գործածուած են այլաբանօրէն:

Օրինակ. Ա.Պտ 2.5-ի մէջ Քրիստոնեաները՝ կենդանի քարեր կոչուած են: Հռ 13.12-ի մէջ, Առաքեալը կը յորդորէ հաւատացեալներուն՝ «լոյսի զէնքերը» հագնիլ: Ա.Պտ 1.13 համարին մէջ Քրիստոնեաներուն ըստուած է «միտքով պատրաստ եւ արթուն եղէք»: Այս նախադասութիւններուն մէջ, բառերուն կապակցութիւնը յայտնապէս ցոյց կու տայ թէ այլաբանութիւն կայ. որովհետեւ նկարագրական կամ սովորական միտքով հասկնալ, չյարմարիր: Այսպիսին են նաեւ հետեւեալ վկայութիւնները: (Ա.Կր 6.11) համարին մէջ, պէտք է այլաբանօրէն հասկնալ. «լուսցուեցաք» խօսքը, որ Առաքեալը քրիստոնեաներէն ոմանց կ'ըսէ, որովհետեւ ան կ'աւելցնէ նաեւ.

«մեր Աստուծոյ Հոգիին միջոցաւ»: Նոյնպէս, պէտք է այլաբանօրէն հասկնալ Քրիստոսի հետեւեալ հրամանը. «Զգէ որ մեռելները թաղեն իրենց մեռելները» (Մտ 8.22), որ կը նշանակէ թէ աշխարհասէրները թող երթան աշխարհային գործերու: Նոյնպէս, այլաբանական իմաստով է Քրիստոսի սա խօսքը. «Ասիկա է իմ Արիւնս», որովհետեւ նկարագրական հասկացողութեամբ առնելով անոր իմաստը, հակառակ կու գայ ճիշդ խօսքին եւ Սուրբ Գիրքին:

Հետեւաբար, որոշելու համար թէ բառերը նկարագրականօրէն թէ այլաբանօրէն գործածուած են, վերոյիշեալ կանոնը միշտ բաւարար չէ, որ կը պահանջէ ուշադրութիւն դարձնել անոնց հետ գործածուած բառերու իմաստին. սակայն, ասիկա է ընդհանուր կանոնը, որով այս խնդիրը կը յստականայ:

Սուրբ Գիրքը կարդալու ատեն, կը տեսնենք թէ ներշնչումով գրուած գիրքերը, շատ անգամ նախորդող կամ յաջորդող պարբերութիւններու կամ համարներու մէջ կը բացատրեն պարբերութեան կամ համարի մէջ գործածուած բառին իմաստը, երբեմն նկարագրելով խնդրոյ առարկան, որ այդ բառը կը նշանակէ, երբեմն ալ օրինակներ տալով, եւ երբեմն ալ այնպիսի յաւելումներով, որոնք կը յստակեցնեն եւ կը յայտնեն բառին իմաստը: Հետեւաբար. Սուրբ Գիրքի մեկնութեան երրորդ կանոնը այս է. եթէ պատահի, որ անկարելի ըլլայ բառին իմաստը որոշել, ուշադրութիւն դարձնելով անոր ընդհանուր գործածութեան եւ անոր հետ գործածուած միւս բառերու իմաստին, այն ատեն, կարելի է գայն պարունակող պարբերութեանէն կամ համարէն անդին անցնելով՝ նայիլ նաեւ նախորդող կամ յաջորդող պարբերութեան կամ համարներու իմաստին:

Օրինակ. Եբրայեցիներու 11-րդ

գլուխի առաջին համարին մէջ յիշուած Հաւատք բառը բացատրելու համար, Առաքեալը յաջորդող համարներուն մէջ յառաջ կը բերէ բազմաթիւ օրինակներ: Այդ օրինակներէն յայտնապէս կը նշմարուի, թէ Հաւատք բառը ինչ իմաստով գործածուած է այդտեղ, այսինքն, Աստուած երբ շնորհք կամ ոգորմութիւն կը խոստանայ, Հաւատքի հաստատուն ակնկալութեամբ կը սպասէ այդ խոստումներու կատարման: Իսկ երբ հոգեւոր կամ հանդերձեային վերաբերող բաներու մասին կը յայտնէ, Հաւատքը կը համոզուի եւ կ'ընդունի թէ այդ բաները, այդպէս են՝ ինչպէս կ'ըսուին:

Նոյնպէս Եփ 3:4 համարին մէջ գործածուած Խորհուրդ բառին իմաստը, յաջորդող համարներուն մէջ տրուած օրինակով կը բացատրուի: Ըսել կ'ուզենք, թէ Առաքեալը «խորհուրդ» կը կոչէ այն իրողութիւնը, որ հեթանոսներն ալ Աւետարանին միջոցաւ հաղորդակից են, այն խոստման՝ որ Քրիստոսով եղած է:

«Գանձ չափահասներու (կատարեալին՝ գրաբարի թարգմանութեամբ) յատուկ գիտելիքներուն» խօսքին մէջ (Եբր 6:1), Կատարեալ բառին իմաստը կը յստականայ նախորդող խօսքերէն, այսինքն՝ Եբր 5:14-րդ համարէն, ուր գրուած է թէ՛ «Կարծր կերակուրը չափահասներուն (կատարեալներուն՝ գրաբարի թարգմանութեամբ) համար է, որոնք վարժութեան ֆամքով կրթած են չարն ու բարին գանազանելու իրենց գգայարանքը»: Առաքեալին միտքը, այս է՝ քրիստոնէաները, Աստուծոյ խօսքը սորվելով եւ աղօթելով, պարտին յառաջանալ եւ գօրանալ հոգեւոր գիտութեան մէջ, մինչեւ որ կարող ըլլան բացայայտօրէն հասկնալ կրօնի վսեմ ճշմարտութիւնները:

Եփ 2-րդ գլուխի երկրորդ համարը յաջորդող համարին օգնութեամբ մեկ-

նելով, կը հասկնանք թէ՛ «մարդկային բնութեան յատուկ ցանկութիւններով կ'ապրէինք» կը նշանակէ, մարդուն բնական վիճակով ու վարքով, որ Քրիստոսի թագաւորութեան հակառակող եւ ապրատամբութեան որդիներուն ներսդին գործող հոգիին ազդեցութիւնն է: Նոյնպէս Գղ 4:3 «բնութեան ոյժերուն» ըսուած խօսքը, բացատրուած է նոյն գլուխին 9-10 համարներուն մէջ:

Պարզ պատմութեան մէջ իսկ, շատ անգամ որեւէ բառի իմաստը կը հասկըցուի կամ կը բացատրուի յաւերած նախադասութիւններով. օրինակ. եթէ իրարու հետ բաղդատենք ԾՆ 6:19-20 եւ 7:2-3, կը նշմարուի թէ երկրորդին մէջ յստակեցուած է, թէ ինչ նախորդին մէջ յիշուած գոյգերուն, այսինքն՝ արու եւ էգ կենդանիներու թիւը: Նոյնպէս, եթէ իրարու հետ բաղդատենք ԾՆ 48:8 եւ 10-րդ համարները, կը հասկնանք թէ Յակոբ ամբողջովին կոյր չէր: Նոյնպէս Ել 9-րդ գլուխին 6-րդ համարը 20-րդ համարին հետ բաղդատելով, կը հասկնանք թէ պէտք է «բոլոր» բառը հասկնալ մասամբ եւ ոչ ամբողջականօրէն: Թւ 4:3 եւ 8:24 համարները բաղդատելով, կը հասկըցուի թէ Ղեւտացիները իրենց պաշտօնը սկսելէ առաջ, հինգ տարուան ժամանակաշրջան կ'անցընէին, խորանի ծառայութեան յատկացուած խումբին մէջ:

Գղ 3:18-ին մէջ, Առաքեալը կը բացատրէ թէ նախորդ համարին մէջ «Կրտակը որ Աստուած կատարեց» ըսելով, կը հասկնայ Աստուծոյ խոստումը՝ Աբրահամին տրուած: Նոյնպէս Հն 6:23-ի մէջ, աւելի կը յստակացնէ «մեղքին վարձատրութիւնը մահ է» խօսքին գորութիւնը, աւելցնելով՝ «մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտեանական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ»:

Հն 4:5-ին մէջ ըսուած է, «Իսկ անոր՝ որ որեւէ գործ կատարած չէ եւ սակայն կը

հաւատայ Աստուծոյ՝ որ մեղաւորը կ'ար- դարացնէ, անոր պարագային հաւատար արդարութիւն կը համարուի»։ «Կատա- րած չէ» բառին իմաստը, նոյն գլուխին մէջ մի քանի անգամ բացատրուած է. օրինակ՝ յիշելով Աբրահամի արդարու- թիւնը, որ անոր սեպուեցաւ ո՛չ թէ թըլ- փատուութեան, այլ՝ անթլփատուութեան մէջ, այսինքն՝ երբ տակաւին չէր սկսած թլփատուութիւնը։ Նոյնպէս, եթէ Յկ 2.14 համարը բաղդատուի նոյն գլուխի այլ համարներու հետ, յայտնապէս կը նըշ- մարուի, թէ փրկել չկրցող հաւատքը, այն է՝ որ միայն բերանով է, եւ ոչ՝ գոր- ծով։

Այսպիսի հաւատք է, առանց հնա- գանութեան հաւատքը. հաւատք, որ դեւերն անգամ ունին (Անդ, համար 19). այն հաւատքը չէ, որ Աբրահամ ունե- ցաւ, եւ որ յայտնեց զայն Աստուծոյ հրամանին հնազանդելով (Անդ, համար 22-23)։ Նոյնպէս Ա.Պա 3.21-ի մէջ, մեզ ապրեցնող (կենդանացնող) մկրտու- թեան իմաստը բացատրուած է հետեւ- եալ նախադասութեամբ, որով Առաք- եալը կը յայտնէ թէ մկրտութիւնը այն է, որ «ո՛չ թէ մարմնական աղտը սրբելով, այլ՝ մարդս մաքուր խղիմտանով Աստու- ծոյ ընծայելով», այսինքն՝ մաքրուած սիրտը։

Ա. ՅՎ 3.9 համարին մէջ ըստուած է թէ «Ով որ Աստուծոյ գաւակ դարձած է՝ մեղք չի գործեր»։ Արդարեւ, այս նախա- դասութիւնը, նոյն թուղթին այլ մասե- րուն հետ բաղդատելով, կը տեսնենք թէ մեղք գործել կը նշանակէ «խաւարի մէջ ապրիլ» (Ա.ՅՎ 1.6). «պատուիրանները» չպահել (Ա.ՅՎ 2.4). «եղբայրը» ատել (Ա.ՅՎ 2.9). «աշխարհը» սիրել (Ա.ՅՎ 2.15)։ Բոլոր այս բացատրութիւնները կը նշանակեն Քրիստոնէական ոգիին հա- կառակ՝ արմատացած չար ունակու- թիւններ։ Աստուծմէ ծնածը չի՛ կրնար ունենալ այսպիսի ունակութիւններ։

Ըսինք թէ երկրորդ կանոնը կ'օգնէ մեզի յատկացներու թէ Սուրբ Գիրքին խօսքերը նկարագրակա՛ն են թէ այլա- բանական. արդարեւ, այլաբանական նախադասութեան իմաստը հասկնալու համար անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել նախորդող եւ յաջորդող հա- մարներուն կամ պարբերութիւններուն։ Օրինակ՝ «Իր անօրէնութիւնը պիտի կրէ» եւ «Անօրէնութիւն կրեն» ըստուածներուն մէջ, որոնք այլաբանական են, իրենց յարակից «պիտի կորսուի» եւ «մեռնի» բառերէն կը հասկցուի, թէ այդ ըստուած- ներուն իմաստը մեղքերու պատիժ կրելն է (Տէս ՂԼ 19.8, Ել 28.43)։

Ովս 4.12 համարին մէջ եւ ուրիշ տեղ, մանաւանդ Եզեկիէյի մարգարէու- թեան մէջ ըստուած է, թէ «պոռնկութեան ոգին զանոնք (իսրայէլացիները) գլխէ հանեց», սակայն սրբազան Մատենա- գիրը անմիջապէս կ'աւելցնէ, թէ «լեռնե- րու գագաթներուն վրայ գոհ կը մատու- ցանն, եւ բլուրներուն վրայ... խուկ կը ծիւն», եւ ասով յայտնի կ'ըլլայ թէ պոռնկութիւն բառը այդտեղ այլաբանո- րէն գործածուած է, եւ կը նշանակէ Աստուծոյ նկատմամբ անհաւատար- մութիւն կամ կռապաշտութիւն։

Երբ Քրիստոս ըսաւ թէ՛ «Ան որ զիս կ'ուտէ, ինքն ալ իմ միջոցովս կենդանի կը մնայ» (Հմմտ ՅՎ 6.58). Հրեաները սխալ ըմբռնեցին Անոր մտածումը, սակայն, Քրիստոս նախապէս աւելի պարզ բառե- րով բացատրած էր իր միտքը, ըսելով. «ով որ ինձի հաւատայ յաւիտեանական կեանք ունի» (ՅՎ 6.47)։ Հռոմէական (Պա- պական) մատենագիրներէն շատեր, նկարագրական միտքով հասկցած են «ուտել» բառը, թէեւ մեր Տէրը այդ բա- ռին մեկնութիւնը յայտնապէս տուած է, եւ Տէրունական Ընթրիքը, որ նոյն խօս- քով ակնարկուած կը կարծեն, այդ ժա- մանակ տակաւին չէր հաստատուած եւ բոլորովին անծանօթ էր լսողներուն։

Մտ 26-28-ի մէջ, Քրիստոս գինին իր արիւնը կը կոչէ՝ սակայն յետոյ (Անդ, Համար 29), որթատունկի բերք կ'անուանէ նոյն գաւաթը. ասով կը հասկըցուի թէ նախորդ բացատրութիւնը այլաբանական է: Պապականները ընդհանրապէս Քաւարանի վարդապետութեան իրբեւ վկայութիւն, այս խօսքը կը մէջբերեն. «Ինք պիտի փրկուի, սակայն այնպէս՝ իրբեւ թէ կրակիմ մէջէն» (Հմմտ Ա.Կր 3.15): Սակայն, եթէ ուշադրութիւն դարձնենք նախորդող համարներուն, անմիջապէս պիտի տեսնուի թէ ամբողջ խօսքը այլաբանական է. նախ «Հիմ» բառը այլաբանօրէն գործածուած է եւ՝ գՔրիստոս կը նշանակէ. «Իսայ, խոտ, եղէգ», որ ոեւէ մէկը կրնայ շինել այդ Հիմին վրայ՝ նոյնպէս այլաբանական են. ապա, պէտք է որ «իրբեւ թէ կրակին մէջէն» ըսուածը այլաբանօրէն հասկըցուի բոլոր պարբերութեան իմաստին յարմարող միտումով: Այսպիսի այլաբանական բացատրութիւններ կը տեսնուին նաեւ Ա.Կր 5.8, Մտ 16.1-12: (Տես նաեւ Ես 51.1-2):

Երբ որեւէ բառի ընդհանուր իմաստը եւ կամ նախորդող ու յաջորդող պարբերութիւնները իրենց ամբողջ կապակցութեամբ անկարող ըլլան ջրելու խօսքին երկդիմութիւնը, կամ լիովին տալ գրողին մտածումը, այդ ատեն, պէտք կ'ըլլայ նայիլ գայն պարունակող ամբողջ գիրքին կամ անոր մեծ մասի նպատակին: Հետեւաբար, Սուրբ Գրոց մեկնութեան չորրորդ կանոնն է, խնդրոյ աւարկայ եղող բառը մեկնել, գայն պարունակող մասին կամ ամբողջ գիրքի նպատակին համեմատ:

Երբեմն, ամբողջ գիրքի կամ անոր գլխաւոր մէկ մասին նպատակը կամ վախճանը ցոյց տրուած կ'ըլլայ նոյն այդ գիրքին կամ այդ մասին մէջ: Այսպէս,

Հո 3.27-28-ին մէջ, Պօղոս Առաքեալ կ'եզրակացնէ այն ձեռնարկութիւնները, զորս մինչ այդ գործած էր, այսինքն՝ «Մարդը հաւատով կ'արդարանայ, առանց օրէնքի գործերուն»: Եփեսացիներուն ուղղած նամակին գլխաւոր եզրակացութիւններն ալ գրուած են. առաջինը՝ վարդապետական է (Եփ 2.11-19), այսինքն՝ հեթանոսները այլեւ օտար չեն. երկրորդը՝ գործնական է (Անդ 4.1-3) որով Առաքեալը կը յորդորէ հրեաներն ու հեթանոսները իրենց կոչման վայելուչ ոգի եւ վարք ունենալու: Երրորդական եզրակացութիւններ ալ բացատրուած են Անդ 3.13, 4.17-25, 5.1-7, 6.13-14-ի մէջ, որոնց մէջ «ուստի», «արդ», «այս պատճառով» բառերը, ընդհանրապէս տարբեր-տարբեր ձեռնարկութիւններու իւրաքանչիւրին հետեւանքները ցոյց կու տան:

Առակաց գիրքին նպատակը յայտնուած է Առ 1.1-4 եւ 6 համարներուն մէջ: Աւետարաններուն՝ ՅՀ 20.31-ին մէջ: Իսկ ամբողջ Աստուածաշունչին նպատակը՝ Հո 15.4 համարին եւ Բ.Տմ 3.16 եւ 17 համարներուն մէջ:

Կողոսացիներուն, Եփեսացիներուն եւ Գաղատացիներուն ուղղուած նամակները գրուած են, որպէսզի Աւետարանին յատուկ վարդապետութիւնները բացատրուին եւ քրիստոնեաներուն մէջ հրէութիւն քարոզող ուսուցիչներուն թիւը վարդապետութիւնները հերքուին: Այս նամակներուն մէջ բազմաթիւ տեղեր կը լուսաւորուին՝ երբ նայինք Գործք Առաքելոց գիրքին, մանաւանդ անոր 15-րդ գլուխին, ուր կը գտնենք պատմութիւնը այն խնդիրին, որու մասին կը ճառեն յիշեալ նամակները:

S. Ա.

(Շար. 22)

ՊԱՏՄԱՆՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Զ. ՄԱՍ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Գլուխ 7

**Բարեկարգութիւնը Ֆրանսական
Զուխցերիոյ եւ Ժընեւի Մէջ Կալվինէն Առաջ**

Յիւրիիւր հիւսիսային իսկ Պերնը հա-
րաւային Զուխցերիոյ ամենէն ազդեցիկ
քաղաքներն էին: Պերն մնայուն կերպով
Սալոյի դուքսերուն հետ պայքարի մէջ
էր մանաւանդ ժընեւի լիճին հարեւա-
նութեան մէջ գտնուող Ֆրանսախօս
տարածքներուն (Վոյի երկիրներ) տիրե-
լու համար: 7 Փետրուար 1528ին Պերն
կ'ընդունէր Բողոքականութիւնը եւ կա-
ռավարութեան քաջալերանքով ու Կուր-
յոմ Ֆարէյի (1489-1565) քարոզութեամբ
Վոյի երկիրներուն մէջ եւս Բողոքակա-
նութիւնը կը սկսէր տարածուիլ: Ֆարէյ
ծնած էր Ֆրանսայի Տոֆինէ նահանգին
Կար քաղաքին մէջ: Փարիզի մէջ ուսման
ընթացքին ան կ'ազդուէր մարդկայնա-
կան ժազ Լըֆելը Էթաիլէն եւ 1521էն
սկսեալ կը քարոզէր չափաւորական
բարեկարգիչ Մոյի Կուրյոմ Պրիտոնէ
եպիսկոպոսի հովանիին ներքեւ: Որպէս
ճարտասան այնքան համբաւ կը վայելէր
Բարեկարգութիւն քարոզելուն համար,

որ կը ստիպուէր Ֆրանսայէն հեռանալ:
1524ին ան Պազէյի մէջ Բարեկարգու-
թիւնը կը ջատագովէր եւ հոնկէ ալ
դուրս կը դրուէր: Ապա կ'այցելէր ըմթ-
րազպուրկ եւ Պուսերի հետ կը բարեկա-
մանար:

1526ի Նոյեմբերին Ֆարէյ կը սկսէր
քարոզել Ֆրանսախօս Զուխցերիոյ էկլի-
քաղաքին մէջ՝ Պերնի կառավարութեան
պաշտպանութեամբ: Երբ Բարեկարգու-
թեան գաղափարախօսութիւնը կը յաղ-
թանակէր Պերնի մէջ, Ֆարէյի առաքե-
լազաշար կ'ընդարձակուէր: 1528ին էկլի-
Օլոն եւ Պեքս Բարեկարգութիւնը կ'ըն-
դունէին եւ սրբանկարները կը փշրէին
ու սուրբ պատարագի մատուցումը կը
դադրեցնէին: Ֆարէյ Լոզանը դարձի բե-
րելու ապարդիւն փորձերէ ետք, 1529ի
Նոյեմբերին Նիւշաթել կը հասնէր եւ հոս
եւս կը հաստատէր Բարեկարգութիւնը:
1530ին Մորա եւս Բարեկարգութիւնը
կ'ընդունէր, իսկ բողոքական Պերնի եւ

կաթոյիկ Ֆրիպուերկի միացեալ ազդեցութեան տակ եղող Կրանտարնի եւ Օրպէյի մէջ երկու տիպի պաշտամունքը կը շարունակուէր: 1532ի Սեպտեմբերին Ֆարէլ կը մասնակցէր Գողեան Ալպեաններու մէջ գումարուած սինոտին, երբ ուղտեաններու մեծամասնութիւնը Բարեկարգութիւնը կ'ընդունէր: Ուղտեաններու քարոզիչը կը դառնար Ֆարէլի գործակից Բիէր Օլիպեթա (1506?-1538), որուն Ֆրանսերէն թարգմանած Աստուածաշունչը կը հրատարակուէր 1525ին:

1532ի Հոկտեմբերին Ֆարէլի ժընեւի մէջ Բարեկարգութիւն քարոզելու ճիգը յաջողութիւն չէր արձանագրեր: Ամէն տեղ բուռն ընդդիմութեան կը բախէր, սակայն իր ազդեցիկ ներկայութիւնը զգալի կը դառնար: Իր գլխաւոր գործակիցը կ'ըլլար Լոզանի ապագայ բարեկարգիչ Բիէր Վիրէ (1511-1571):

1532ին, Ֆարէլի քարոզութեան օրերուն, ժընեւ 1520ական թուականներուն սկսած քաղաքական յեղափոխութեան խմորումին մէջն էր: Աշխարհագրականօրէն ժընեւ որպէս վաճառականական քաղաք կը գտնուէր Ալպեաններու բանուկ քառուղիին վրայ, ուր ազատականութեան եւ անբարոյականութեան հանդուրժելի մթնոլորտ մը կը տիրէր, հակառակ այն իրողութեան որ բազմաթիւ վանքեր եւ եկեղեցական հաստատութիւններ կային: ժընեւի ազատական մթնոլորտը կը շարունակէր տիրական մնալ հակառակ Սալոյի դուքսերուն բանեցուցած սահմանափակումներուն: 16րդ դարուն սկիզբը երեք ուժեր կ'իշխէին քաղաքին եւ մերձակայ գիւղերուն մէջ.- եպիսկոպոսը, անոր ժամանակաւոր գործակարը եւ քաղաքացիներուն տարեկան ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած չորս ներկայացուցիչներն ու գանձապահը: Ընդհանուր ժողովին կողքին կար նաեւ 25 քաղաքա-

ցիներէ բաղկացած փոքր ժողովը: Գլխաւոր հարցերը կը քննարկուէին փոքր ժողովէն նշանակուած 60 քաղաքացիներ ներառնող ժողովին կողմէ, իսկ 1527ին 200 քաղաքացիներու ժողով մըն ալ կ'աւելնար՝ բաղկացած փոքր ժողովի անդամներէն եւ 175 այլ ընտրեալներէ: 1290էն ի վեր Սալոյի դուքսերը կը նշանակէին եպիսկոպոսին ժամանակաւոր գործակարը եւ 1444էն ի վեր եպիսկոպոսութիւնը իրենց ազդեցութեան տակ կը պահէին: Արդ, ազատութեան պայքարը կը մղուէր Սալոյի դուքսերէն եւ անոնց նշանակած եպիսկոպոսէն ու ժամանակաւոր գործակարէն ձերբազատուելու համար:

1519ին քաղաքացիներու յեղափոխական խմբակ մը՝ ծանօթ որպէս հասարակապետականներ (Eidguenots), որոնք գուցէրիական դաշնութիւն մը կը նախասիրէին ի հեծուկա Սալոյի, կաթոյիկ Ֆրիպուերկի հետ կը դաշնակցէին: Սալոյի Չարլզ Գ. դուքսը անմիջապէս կը հակազդէր եւ կը գլխատէր ժընեւի ընդդիմութեան պարագլուխներէն Ֆրիպերթ Պերթելիէն: 1525ին յեղափոխականներ երկրորդ ապստամբութիւն մը կը կազմակերպէին ժընեւէն աքսորուած Պեգանսոն Հիւկի գլխաւորութեամբ: 1526ին Հիւկ դաշինք մը կը կրնքէր Պերնի եւ Ֆրիպուերկի հետ: Ընդհանուր ժողովը իր համամտութիւնը կը յայտնէր եւ ժընեւ Զուիցերիոյ քաղաքական թատերաբեմին վրայ կը յայտնուէր: 1527ի Օգոստոսին Պոլմի Բիէր եպիսկոպոսը չկարենալով ժընեւը իր հեղինակութեան տակ պահել, կը հեռանար եւ Սալոյի կը հակէր: Ժամանակաւոր գործակարին եւ եպիսկոպոսին աւանդական իրաւասութիւնները փոքր ժողովին եւ նորակազմ 200 քաղաքացիներու ժողովին կը փոխանցուէին: Չարլզ Գ. դուքսը կը յարձակէր ժընեւի վրայ, սակայն Պերն եւ Ֆրիպուերկ օգ-

նույնիսկ կը փութային 1530ի Հոկտեմբերին ու դուքսը կը ստիպուէր յարգել ժրնեւի ազատութիւնը:

Յայտմ Բարեկարգութեան հանդէպ աննշան համակրանք մը կը սնուցուէր ժրնեւի մէջ, մինչ Պերն անմիջապէս կը ջանար աւետարանական հաւատքը հաստատել հոն՝ թէ՛ կրօնական կեանքը եւ թէ՛ քաղաքական յեղափոխութիւնը իր ազդեցութեան տակ պահելու հեռանկարով: 1532ին բողոքական ազդեցութիւնը կը սկսէր զգալի դառնալ, երբ պապը քննադատող եւ բարեկարգչական պահանջներ ընդգծող պատասառներ կը պարզուէին: Սակայն, ժրնեւի միւս դաշնակից քաղաքը՝ Ֆրիպուրկը բռնուկ կաթողիկէ էր եւ ժրնեւի կառավարութիւնը չէր համարձակեր բացայայտ լուտերականութիւն դրսեւորել:

1532ի Հոկտեմբերին, Պերնի հովանաւորութեամբ, Ֆարէլ երկու գործակիցներով՝ Բիէր Օլիվեթա եւ Անթուան Սոնիէ ժրնեւ կու գար, սակայն ընդունելութիւն չգտնելով քաղաքէն կը հեռանար: Մէկ ամիս յետոյ, Ֆարէլ ժրնեւ կը դրկէր իր գործակիցներէն Անթուան Ֆրոմէնը (1508?-1581) որ որպէսզի ուսուցիչ հոն կը հաստատուէր եւ բարեկարգչական վարդապետութիւնը կը տարածէր: 1 Յունուար 1533ին, Ֆրոմէն ամբոխ մը կը հաւաքէր եւ քարոզութեան կը պատրաստուէր, սակայն բռնուկ ընդդիմութեան հանդիպելով կը հեռանար ժրնեւէն: Զատիկին բողոքականներուն թիւը զգալի աճ արձանագրած ըլլալով, անոնք Տէրունական Ընթրիքը կը կատարէին ժրնեւի մէջ: Դեկտեմբերին Ֆրոմէն ժրնեւ կը վերադառնար եւ 1534ին Բիէր Վիրէյի հետ տոմինիկեան վանական եւ կաթողիկոսութեան ջերմ պաշտպան Կի Ֆուրպիթի հետ հրապարակային վիճարկում մը կ'ունենար: Ըմբոստութիւն մը ծայր կ'առնէր: Մարտին Ֆարէլ եւ հետեւորդները, արդէն

կարեւոր թիւ մը կազմած, վանական մատուռ մը կը գրաւէին եւ քարոզութիւններու կը սկսէին:

ժրնեւի կառավարութիւնը նեղ կացութեան կը մատնուէր: Իր կաթողիկէ դաշնակից Ֆրիպուրկը կը պահանջէր որ Ֆարէլ լուծութեան դատապարտուէր, իսկ իր բողոքական դաշնակից Պերնը Ֆուրպիթի ձերբակալութիւնը կը պահանջէր՝ պատճառաբանելով թէ ան ժրնեւցիները որպէս Պերնի ենթականեր ամբաստանած էր: ժրնեւի կառավարութիւնը կը պատժէր Ֆուրպիթը եւ Ֆրիպուրկի հետ յարաբերութիւնները կը խզէր ու Պերն կը մնար ժրնեւի միակ գուրգրիական դաշնակիցը: Աքսորեալ եպիսկոպոսը, Սաւոյի դուքսին օժանդակութեամբ, կը յարձակէր ժրնեւի վրայ եւ կը պաշարէր զայն: Ֆարէլ եւ Վիրէյ այս քայլը շահագործելով Բողոքականութիւնը կ'առնչէին ժրնեւի անկախութեան տիրանալու պայքարին: 1 Հոկտեմբեր 1534ին փոքր ժողովը եպիսկոպոսական աթոռը թափուր կը հռչակէր, թէ եւ ժրնեւ տակաւին ամբողջապէս Բողոքականութիւնը չէր ընդունած:

1535ի սկիզբները Ֆարէլ ժրնեւի իշխանութիւններուն կը դիմէր որ բողոքական ղեկավարներուն եւ կաթողիկէ հոգեւորականներուն միջեւ հրապարակային վիճարկումի արտօնութիւն շնորհէին, սակայն եպիսկոպոսը կ'արգիլէր իր հոգեւորականութեան մասնակցիլ անոր: Ամբողջ Յունիս ամիսը այս վիճարկումը տեղի կ'ունենար Ֆարէլի եւ Վիրէյի ու կաթողիկէ աշխարհականներուն միջեւ եւ բողոքականներ յաղթանակ կ'արձանագրէին: 23 Յուլիս 1535ին անոնք Լա Մատրլէն եկեղեցին կը գրաւէին եւ 8 Օգոստոսին՝ Ս. Բիէր մայր տաճարը ու սրբապատկերները կը փրշրէին: 10 Օգոստոսին ժրնեւի կառավարութիւնը կ'արգիլէր սուրբ պատարագի մատուցումը: Մայր տաճարի հոգեւորա-

կաններն ու մայրապետները կը հեռանային քաղաքէն: 31 Մայիս 1536ին ժրնեւի ընդհանուր ժողովը կը քուէարկէր «ապրիլ աւետարանական օրինադրութեան եւ Աստուծոյ խօսքին համաձայն ու վերացնել բոլոր սուրբ պատարագները, պապականութեան կողմէ սահմանուած արարողութիւնները, սրբապատկերներն ու կուռքերը»:

Մինչ այդ եպիսկոպոսն ու Սավոյի դուքսը կը շարունակէին իրենց ճշմանները ի գործ դնել ժրնեւի վրայ: 1536ի Յունուարին Պերն օգնութիւն կը հասցնէր ժրնեւի եւ կ'ապահովէր իր ազդեցութիւնը: 7 Օգոստոս 1536ին Պերն

կը ճանչնար ժրնեւի անկախութիւնը: ժրնեւ Բողոքականութիւնը կ'ընդունէր քաղաքական քան թէ կրօնական պատճառներով եւ իր կրօնական հաստատութիւնները ըստ այնմ բարեփոխութեան ենթարկելու քայլերու կը դիմէր: Տարէլ այդ բարեփոխութիւններու իրագործումը իր ուժերէն զերիվեր համարելով, զայն կը վստահէր իր Ֆրանսացի ընկերոջ՝ Ճան Կարվինի:

"A History of The Christian Church"

N. Y. (1985) - Williston Walker

Թրգմ.՝ ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՃՄԷՋԵԱՆ

(Շարք. 83)



ԱՐԽԻՒԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

ՍՈ՞ՒՐԲ, ԹԷ՞ ՍՈ՞ՒՐ ԴԱՏԱԻՈՐ

Աշխարհիս ամենէն սքանչելի բներե-
ւոյթը կեանքի մարմնացումն է, ու ասոր
ալ անուամն է պայքարը կենսաւորներուն
- պայքարը կենդանաւորներուն - պայք-
արը յարձակումի եւ ինքնապաշտպա-
նութեան:

Թէ՛ բուսական եւ թէ՛ կենդանական
աշխարհի մէջ կենսաւորներէն շատերը
օժտուած են յարձակումի եւ ինքնա-
պաշտպանութեան միջոցներով: Կան որ
խսպառ գուրկ են այդ միջոցներէն ինչ-
պէս մանիշակի նման ծաղիկներ սոխա-
կի եւ աղաւնիի նման թռչուններ ու
ոչխարի պէս կենդանիներ իբր թէ բնու-
թեան խորթ ու շնորհագուրկ գաւակ-
ներն եղած ըլլային ու հակառակ իրենց
անհատական արժանիքներուն, անուշ
հոտին, քաղցր ձայնին եւ հեզիկ բնաւոր-
ութեանը եւ օգտակարութեան՝ տա-
կաւին չունենային գոյութիւն եւ ապրե-
լու իրաւունքը:

Մարդը բնականէն ստեղծուած է
որպէս անվնաս էակ, իր հանճարովը
կրնայ միջոցներ հնարել պաշտպան-
ուելու խօսք չհասկցող գազաններու,
միջատներու, գեռուններու եւ միջբոս-
ներու դէմ: Նոյն միջոցներով է նաեւ որ
կ'որսայ կենդանիները իր պիտոյից եւ
սննդեան համար, ու նոյն գէնքերուն
ամենակատարեալ տեսակներովն է որ
կը յարձակի իր նմանից վրայ խելու
անոնց կեանքն, ինչքն ու պատիւը:

Այս մարդին մէջ մարդս կը ներկա-
յանայ աւելի վայրագ քան գազանները:
Վասնզի անոնց յարձակումը իրենց ցե-

ղակիցներուն վրայ չէ՛ բայց այլացեղ
կենդանիներուն վրայ: Շատ հագուա-
դէպ պարագայ է որ շունը շան միսը
ուտէ եւ գայլը՝ գայլին: Եթէ որեւէ
պատճառաւ շուները կռուին եւ գիրար
մեռցնեն՝ դարձեալ գիրար չեն ուտեր:
Միայն մարդիկ են որ գիրար կը լսփեն
ու կը կոտորեն:

Մարդոց այս ապրելակերպը հակա-
բնական է: Որովհետեւ մարդս օժտուած
է այնպիսի բարձր մտաւորական կարո-
ղութիւններով, բարոյական այնքան
վսեմ ըմբռնումով որ պէտք է միայն
գինք պաշտպանէ անբան վնասակար
էակաց դէմ եւ այդ միջոցները երբեք
չգործածէ որեւէ որսորդութեան հա-
մար, քանի որ կրնայ բուսական աշխար-
հէն եւ կեթերէն հայթայթել իր սնունդը
աւելի առողջապահիկ ու մարդավայել
եղանակաւ:

Նուրբ ու մաքուր գգացումներու
տէր մարդիկ կը խղճահարին նոյնիսկ
ձուկերու կեանքը վերցնելու որպէս
սնունդ: Ո՞ր թռչունն ու կենդանին սի-
րայօթար իր վիզը կը դնէ մեր դանակին
տակը: Ո՞չ ապաքէն հաւն ու ոչխարն
իսկ իրենց աղաղակովը կը բողոքեն մեր
ոճրագործութեանց դէմ: Ու հասարակ
մսագործներ իսկ տակաւին իւրաքան-
չիւր գինումին խայթ կը գգան իրենց
քարացած խղճին խորերը: Եւ սակայն,
մարդիկ պիտի շարունակեն այս ոճիրը՝
ինքնարդարացումի շատ ազգազուն փաս-
տերով՝ մինչեւ հասնին բարոյական
բարձրութեան մարդավայել աստիճա-

նին, երբ կենդանիք այլևս պիտի ազատուին մարդոց ծառայելէ եւ կեր լինելէ:

Մարդիկ պիտի նաեւ ջարդեն գիրար մինչեւ հասնին բանուորութեան ըմբռնումին եւ դատումի հասկցողութեան:

Մինչեւ այդ օրհնեալ ժամանակը մարդիկ պիտի ունենան ինքնապաշտպանութեան արդի երկու միջոցներ: Այն է.-

1) Բանիմացներուն համար իրաւարարութիւն:

2) Տգէտներուն ու չարերուն համար դատ:

3) Իսկ ուր պակսին իրաւարարութիւն եւ դատ՝ յայնժամ գազաններու վայել եղանակը:

Այսօր տակաւին մարդկութիւնը փոքրամասն բացառութեամբ կեանքի պայքարի դրութեամբ կ'ապրի ու կը վայելէ: Այնպէս որ մարդկային բոլոր եռուզեւր չէ այլ ինչ, այլ՝ տնտեսական ոճրագործութիւն:

Անբանաւոր ապրելակերպի այս սպանդն է որ կը կատարուի պատերազմի դաշտերուն վրայ, առեւտրական մեծ ու փոքր շուկաներուն մէջ, ահեղ գործարաններու ծովին ու գոլորշիին ներքեւ, վարչական սեղաններու եւ դատական բեմերու վրայ:

Այսպէս մեծագումար առեւտրականներու, վաշխառուներու գարհուրելի շահամոլութեան մանրանկարն էր որ կը մարմնանար գաւառներու փոքրիկ խանութներէն մինչեւ լայն սենեակները, շահելու միեւնոյն եղանակը հագուագիւտ բացառութեամբ ծիծաղելի սակարկութիւն, երդում, նզովք, գովասանք եւ վերջապէս խարել, կեղեքել:

Գիւղացիի տգիտութիւնն ու անհաշիւ կենցաղը կը միանար բռնակալութեանը, որք անգթաբար կը հրէին գայն աղքատութեան ճահիճը: Հոն դատապարտուած կեանքը քաշքշելու միակ նեցուկը կը մնար քաղքենի աղան կամ էֆէնտին: Աշնան հագուստեղէնի, հարսնիքի ծախքերուն, տուրքի վճարման եւ ամէն պիտոյից համար դիմում

կ'ըլլար աղային՝ որ ծանր տոկոսով կը հայթայթէր պէտք եղած գումարը:

Պարտքի ծանրութեան տակը ընտանիքի թշուառութիւնը կը սաստկանար: Կայէն գրեթէ ձեռնունայն մտան պարապ տունը: Ո՛չ աշնան աղունարցքը կայ եւ ո՛չ սերմնցու: Դարձեալ դիմում աղային:

Պարտքը վճարելու միակ յոյսը պանդրխտութեան գաւազանն է մնացեր: Ամուրի երիտասարդը կամ պարտքով պսակուած նոր փեսան կը մեկնի Պոլիս՝ ուր բեռնակրութիւնը, ինկած ընկերութիւնը... պիտի խսպառ մարեն անոր կեանքն ու օճախը:

Ընկերային այս պայմաններէն սուսկի նման կը բուսնէին ու կը սնանկանային փոխատու վաշխառու աղաներ, կործանելով կարգ մը հասարակ արհեստաւորներ որք իրենց խնայած գումարները պահ կու տային նորափայլ վաճառականներուն:

Մեր քաղաքին մէջ այսպիսիներէն մէկն էր Ն. Ա...եան, մեծատուն եւ հանրածանօթ, եկեղեցասէր, բարեպաշտ: Այս դիմակներն անհրաժեշտ էին իրրեւ երաշխաւորութիւն իր հաւատարմութեանը առեւտրական ասպարէզին մէջ:

Նոյնքան եւ աւելի բարեպաշտ էր պ.... Մ- ...եան, ազնիւ միջակ առեւտրական մը՝ որ վստահելով Ն. Ա...եանի, անոր պահ տուած էր 200 օսմ. լիրայի գումար մը հաստատուն մուրհակով:

Պ. Մ...եանի մահէն յետոյ՝ անոր երկու գաւակներէն կրտսերին բաժին-ժառանգ մնաց 200 ոսկիի ծանօթ առնելիքը:

Ամիսներ անցան եւ ժառանգորդ պ. Ն. Մ...եան, նորահաս, ամուրի քիչ մըն ալ գուարճասէր երիտասարդը՝ մօտեցաւ Ն. ...եանի, կարգադրելու 200 ոսկիի խնդիրը: Աղան կարեկցական հաւաքանքներով մաղթանքներ մըմնջալով հանգուցեային հոգւոյն, խնդրեց երիտասարդներէն բերել մուրհակը, որ հաշիւին նային ու բան մը ընեն:

Որոշեալ օրը ժառանգորդ երիտասարդը մոռնալով միասին ներկայացաւ Ն... Աղային, որ նայելով ծալլեց եւ վերադարձուց, խոստովանելով մի քանի օր վերջ կարգադրել:

Քանի մը օր վերջը պ. Ն. դարձեալ ներկայացաւ Աղային, վզիկը ծռած, խնդրեց քիչ մը դրամ, նկարագրելով իրենց անտէր ու թշուառ կացութիւնը: Աղան գրպանէն հանեց թուղթ մը եւ միայն ստորագրութիւնը ցուցնելով հարցուց:

- Որո՞ւ գիրն է այս:
- Հօրս կը նմանի Աղա:
- Հիմա կարդա՛ եւ տես:

Պ. Ն. կարդաց, բայց չհաւատարով իր աչքերուն կրկին կարդաց: Երեսին յաջորդական գոյները, ծով կարմիրը, դեղին, ապա ճեփ-ճերմակ երանգները կը յայտնեն սարսուռն ու փոթորիկն, գայրոյթն, վրէժի հրդեհն եւ ապա անձարակ պարտաստութիւնն ու դալուկն երեսին:

- Ա...դա...ա...ա... հայրս մահէն առաջ իսկ ակնարկութիւն ըրաւ սա դրամին եւ յանձնարարութիւններ: Աս ի՞նչ ստացական է: Հոս խաղ մը կայ:

- Խա՞ղ: Այս դրամը վճարուած է, գնա՛ ուր որ կ'ուզես:

Պ. Ն.-ի երեսն ի վեր թաց ակօս մը բացուեցաւ, որ շեղելով հոսեցաւ շրթթունքներուն վրայ: Աղիութենէն սթափեցաւ եւ թաշկինակը հանելով սրբեց աչքերը ու մեկնեցաւ:

Յաջորդ օրն իսկ դիմեց Ս. Էֆէնտիին եւ աղերսագիր մը գրելով մատոյց օրուան դատաւոր Ս. Էֆէնտիին:

Պ. Ն. անփորձ էր դատարանի եւ չհամարձակեցաւ նայիլ իսկ նստողներուն: Բայց, դատաւորը որ քաջածանօթ էր տեղուոյն վաճառականաց նկարագրիին ու նաեւ կրցած էր պ. Ն.-ի դէմքին վրայ կարդալ անոր հոգիին խռովքը, եւ խնդրոյն ճշմարտութիւնը, դարձաւ շուրջիներուն եւ ցասկոտ հառաչով մը նզովեց խարդախ վաճառականներուն

վոհմակը: Ապա՝ համակրական փափկութեամբ խօսքն ուղղելով պ. Ն.-ին.

- Տղաս գնա՛ եւ Հինգշաբթի եկէ՛ք:
- Էֆէնտի՛ փաստարան բռնե՛մ եւ գո՞վ:

- Ո՛չ, տղաս, պէտք չկա՛յ:

Որոշեալ ժամուն մտան դատարան եւ Ն. Աղան ներկայացուց իր փաստաբանն ու վկաները:

Միայն մէկ դատավարութեամբ խնդիրը վերջացաւ ի նպաստ պ. Ն.-ի: Իսկ Ն. Աղան դիմեց վերաքննիչ ատեանին, ուր դարձեալ կորսնցնելով դատը, դիմեց Պոլիս՝ վճռարեկ ատեանին:

Պ. Ն. գիտէր թէ երկու ատեաններու մէջ ալ դատին յաջողութիւնը կը պարտէր դատաւոր Ա. Էֆէնտիին, գնաց անոր տունը եւ ներկայանալով իր շնորհակալութիւնը յայտնեց ու հարցուց թէ՛ փաստարան բռնե՞ր Պոլիս թէ ո՛չ:

Ա. Էֆէնտիին հաւաստեց որ պէտք չկայ: Պ. Ն. ելած պահուն թուղթի մէջ ծրարած 15 ոսկի դրաւ սեղանին վրայ: Ու երբ հագիւ դրանը հասած էր, խռպոտ ու բարկացոտ ձայն մը գինքը վեր կանչեց:

- Ի՞նչ է այս:
- Էֆէնտի: Փոքրիկ նուէր մը:
- Ա՛ռ ու գնա՛, մէջ մըն ալ այդպէս բան չընես:

Պ. Ն. դողահար վերցուց դրամը եւ վար իջաւ, ու սկսաւ եղելութիւնը պատմել խոհարարին, որ իրեն ծանօթ հայ մըն էր:

Նոյն բոպէին վար իջաւ Ս. Էֆէնտիին քաղաք իջնալու՝ դատարան: Սանդուխին ծայրը աչքին գարկաւ խոշոր քուրց մը (ջուալ) եւ կանչելով խոհարարը հարցուց:

- Ի՞նչ է այս:
- Էֆէնտի Շ. գիւղացիք բերին, բացած չեմ, նուէր ըլլալու է:

- Գնա՛ ու այդ մարդիկ գտիր, բեր:

Խոհարարը ձին հեծնելով գնաց եւ կէս ժամէն բերաւ Շ. գիւղին նուիրակները:

Ս. Էֆէնտին գայրացած յանդիմանեց գանոնք եւ բերուած շաքարը ձեռքերնին տալով ճամբեց:

Շ. գիւղացիք շնորհակալութեան այս ցոյցն ըրած էին, որովհետեւ խոշոր դատ ունէին խիստ ազդեցիկ թուրքի հետ, որուն անիրաւութիւնը Ս. Էֆէնտին գիտնալով, ի նպաստ Շ. գիւղացիներուն տուած էր վճիռը եւ Շ. գիւղը ազատած էր ստոյգ սնանկութենէ:

Պ. Ն. եւ Ն. աղան երկուքն ալ տագնապալի ամիսներ անցուցին եւ դեռ լուր մը չկար Պոլսէն:

Ն. Աղան կռթնած իր կաշառքներուն եւ բարեկամներուն կը յուսար շահիլ, բայց, «գող՝ սիրտը դող» առածին պէս կը վախնար, մանաւանդ որ երկիցս արդէն կորսնցուցած էր դատը: Այս երկիւղէն մղուած միջնորդներ ձգած էր իրաւախոհութեան: Պ. Ն. ալ կը փափաքէր, որովհետեւ նիւթական անձկութեան մատնուած եւ իր մօրը նշանախօսութեան աղամանդ մատանին իսկ ծախած էր: Բայց, խորհեցաւ անգամ մը խորհուրդ հարցնել դատաւոր Ս. Էֆէնտիին, որ հաստատուն եւ ազդու եղանակաւ արգիլեց իրաւախոհութիւնը, հաւաստելով թէ ինքը պիտի շահի դատը:

Եւ սակայն ամիսներ կ'անցնէին: Ուրստ սովորութեան Պոլսէն վճիռ մը չէր լսուեր: Ո՞չ ապաքէն տարիներ պէտք էին այդ լաբիրինթոսէն լսելու համար:

Հին հեթանոսութենէ ժառանգ մնացած սովորութեան համեմատ ամէն բանի օգնական սուրբ մը կար քաղաքի ու գաւառի մէջ: Մէն մի հիւանդութեան բժիշկ սուրբ մը: Ինչպէս Ս. Գէորգը՝ այնեկոծութեան, Ս. Գրիգոր Նարեկացին՝ այսահարաց, Ս. Կարապետ՝ իմաստութեան, եւայլն:

Քաղաքամէջ կար փոքրիկ եկեղեցի մը որ ի մէջ այլոց ճանչցուած էր նաեւ պաշտպան արդար դատերու: Եւ սակայն անիրաւներ ալ կը դիմէին անոր օգնականութիւնը խնդրելու:

Չորեքշաբթի առաւօտներ միշտ

լիքն էին մատուռը դատախագ եւ ամբաստանեալ ուխտաւորներով՝ որք ցերեկին պիտի երթային դատարան իրենց ուխտագնացութեան պտուղը վայելելու յոյսով:

Այսպիսի առաւօտ մը պ. Ն. եւ իր մայրը շիջ մը ձէթ առած քաղաքն իջան ուշացած դատին համար խնդրանք մատուցանելու Սբ. Դատաւորին: Եկեղեցիի փողոցին մէջ հանդիպեցան Ն. Աղային որ շիջ մը ձեռքին կը վերադառնար եկեղեցիէն: Յայտնի էր որ՝ ան ալ թէպէտ գիտակից իր անիրաւութեանը՝ բայց դիմաց էր սբ. դատաւորին անարդար դատի մը յաջողութիւնը խնդրելու:

Պ. Ն... եւ մայրը հասան եկեղեցիի դուռը գոր գոց ու կղպուած գտնելով սկսան բախել:

Ժամհարը քունը գլխին մըթմըթալով կանչեց.-

- Ո՞վ էք օր ցերեկով:

- Ուխտաւոր ենք, ժամհար ախպար:

- Տէր պապան հոս չէ:

- Վնաս չունի մենք Ս. Դատաւորին եկած ենք, ձէթ բերած ենք:

- Ի՞նչ ընեմ ձէթ լեցնելիք տեղ չկայ:

Քիչ առաջ ալ աղա մը եկած էր այնքան խնդրեց դուռը չբացի, կարծես ներսէս սիրտս քարացաւ:

- Կը խնդրենք, ժամհար ախպար բաց, վերջը եղելութիւնը կը հասկնաս:

Դուռը բացուեցաւ եւ Ն. ու իր մայրը քչիկ մը իրենց իւղէն լեցնելով տաճարին մշտավառ կանթեղին մէջ, ինկան Ս. Աստուածածնայ ծիրանեգոյն պատկերին առջեւը եւ թրջեցին անոր գետինը արցունքի արտօսներով: Մանաւանդ մխիթարուեցան որ Ս. Դատաւորը քարացուցած էր ժամհարին սիրտը եւ Ն. Աղան չէր յաջողած իր ձէթը բերել տաճար: Ասիկա յոյսի նշոյլ մըն էր գրկեալներուն եւ երաշխիք մը, թէ՛ սուրբը մերժած էր վաշխառու բարեպաշտը, հետեւաբար սուրբը իրենց կողմն էր:

Երեք շաբաթ վերջ դատաւոր Ս.

Էֆէնտին լուր ղրկեց պ. Ն.ին եւ իմացուց թէ թուղթերը եկած են: Բայց, երիտասարդը խնդարեկումի չենթարկելու համար քայլ առ քայլ հասկցուց թէ ինք դատը չահած է վճռարեկ ատեանէն ալ:

Ն. Աղան կուսակցութեան վարչական ժողովին մէջ ունէր հայ եւ թուրք բարեկամներ, որք համոզած էին կուսակալը վարչապէս դատը չեղեալ համարել եւ հրաման տալ դատավարութեան նորոգութեան ու այսպէս յուսահատութեան մատնել պ. Ն. ...եանը:

Ժողովին այս որոշումը կը ստորագրեն հայ եւ թուրք անդամները: Ասոնցմէ միայն մէկ թուրք արժանի կ'ըլլայ Ս. Դատաւորին աներեւոյթ ազդարարութեանը: Ուստի, ոտքի ելած, յուզուած, անսովոր կերպով այլայլած կը կշտամբէ ժողովականները իրենց յայտնի անիրաւութեան համար, ու կը յայտարարէ թէ ինք պիտի չստորագրէ, ըստ որում եւ կուսակալն ալ արթնանալով կը մերժէ վաւերացնել որոշումը եւ որով բոլոր դատական որոշումները կը հաղորդուին պատկանելոց պ. Ն.ին եւ Ն. Աղային:

Դատաւոր Ս. Էֆէնտին անձամբ հետեւած էր դատավարութեան թէ՛ վերաքննիչ եւ թէ՛ Պոլիս վճռարեկ ատեաններուն մէջ: Ինքը ղրկած էր դատական ծախքերը, ինքը գրած էր հոն իր ծանօթներուն եւ բացատրած էր խնդրոյն իսկութիւնը: Ինքը նաեւ վարչական ժողովի արդարագործով իր մէկ բարեկամին պարզած էր Ն. Աղային անիրաւութիւնը եւ արդար դատը իւրացուցած ու հետապնդած էր մինչեւ ցկատար:

Ամէն ինչ երբ վերջացած էր արդէն եւ վաշխառուին տունը աճուրդի պիտի հանուէր, նա ղիմեց պ. Ն.ին եւ գթութիւն հայցեց:

Պ. Ն. աններելի ծայրագոյն բարեսրբատութեամբ անոր շնորհեց իր արդար

առնելիքին կէսը եւ մնացեալին փոխարժէքը ստանալով վերջացուց խնդիրը, շնորհիւ տեսանելի եւ անտեսանելի երկու սուրբ դատաւորներուն:

Ափսոս որ եկեղեցւոյ Ս. Դատաւորը հազարէն անգամ մը այսքան որոշ նախանձաւորութիւն կը յայտնէր եւ հազար ափսոս որ Ս. Էֆէնտինն պէս Ս. դատաւոր մը հազարաւորներու մէջ հազուագիւտ էր: Այդ պատճառաւ ալ հազարաւորք իրենց դատը կը կորսնցրնէին: Խիստ քիչերու արդարութիւնը կը պաշտպանուէր, եւ քիչեր էին նաեւ անոնք որք դաշոյնի կոթը ցուցնելով անանկացած վաշխառու աղայի մը, երկու ոտքը կը դնէին մէկ կօշիկի մէջ եւ չէին մեկներ աղային թաքստոցէն մինչեւ ստանային յետին բնիոնը: Հոս ալ սուրբ դատաւորը սուրն էր՝ որ որեւէ դատարանէ արագ ու ճիշդ կը կտրէր դատը ի նպաստ դաշուակեր գրկեալին:

Դրամական այսօրինակ բռնակալութիւններ կը բացատրեն մինն այն պատճառներէն որոնց համար Վ. քաղաքի երիտասարդութիւնը այնքան դիւրաւ յարեցաւ հակապուրժուական ուսուցումներուն եւ շարժումներուն:

Քանզի ուր որ սուրբ դատաւորներ կը պակսին արդարութիւնը պաշտպանելու՝ հոն սուր դատաւորին է ձայնն ու վճիռը:

Ասոր համար եւ այսօրինակ պարագայից համար չէ՞ր որ Քրիստոս ալ յանձնարարեց ձորձը ծախել եւ սուր գնել:

Վա՛յ այն գրկեալին որ իր յոյսը կը դնէ այնքան հազուագիւտ սուրբ դատաւորներու, մինչ գոնէ այսպիսի ժամանակի մէջ ասպարէզը սոսկ սուր դատաւորներուն ձեռքն է, ո՞րն է նախընտրելի՞ սո՞ւրբ, թէ՞ սուր դատաւորը:

ԽԱԶԻԿ ՔԷՆՅ. ԳՈՒՌԵԱՆ

(Շար. 27)

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԸ ԳԷՈՐԳ Դ.Ի ՄԷՋ (Մանկավարժական Աւարտաճառ, Անթիլիաս 1935)

ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասնաւոր ուշադրութեան արժանի է Գէորգի այն գործունէութիւնը, որ կը գրաւէ իր կաթողիկոսութեան շրջանը (1867-1882), մանաւանդ իր կաթողիկոսութեան առաջին կէսը, վասնզի իր անունը ժամանակի խայտացումէն անըսպառ կը պահեն իր այն գործերը, որոնք իրականացան այս շրջանին:

Երբ Գէորգ գահ բարձրացաւ, իր առաջին կարեւոր գործը եղաւ ժողովուրդի կրթութեան հոգը: Իր օժուժը ընդունելէն անմիջապէս ետք, Գէորգ ճանապարհորդեց ամբողջ Ռուսական Կայսրութեան հայ գաղութները, անձամբ տեղեկանելու ժողովուրդին մտաւոր ու հոգեւոր մակարդակին, թէպէտ այս ճամբորդութեան նպատակն էր ցարերու ներկայանալը:

«Ինչպէս Պոլսից հեռանալիս, այսպէս նաեւ իւր այս ընդարձակ ճանապարհորդութեան մէջ նա ի մօտոյ ծանօթացաւ այն ցանկութիւններին, որ հայ ժողովուրդի լուսամիտ մասն իւր ազգի ու եկեղեցու վերաբերմամբ ունէր. այն է՝ պահպանել ազգային եկեղեցին օտար տարերքներից, ազգային իրաւունքներ պաշտպանել եւ ժողովուրդի մէջ լուսաւորութիւն սփռել: Գէորգ Դ. Կաթողիկոսը իւր 16-ամեայ իշխանութեան ժամանակ բոլոր հոգևով նուիրուեցաւ այս ցանկութիւններն իրականացնելու, եւ իրագործեց»¹⁵:

Անմիջապէս որ Մայր Աթոռ վերադարձաւ, իր առաջին գործը եղաւ հիմնել «Արարատ» ամսագիրը, մշտատեւ հաղորդագրութեան մէջ մնալու համար բոլոր թեմերուն հետ: Տեսութենէն գործի անցաւ ընդփոյթ: Մայր Աթոռի մէջ 1867-ին իր կազմած «Ուսումնական Յանձնաժողով»ին յանձնեց յորինումը կանոնադրութեան մը՝ ծխական, թեմական եւ վանական ազգային հոգեւոր դպրոցներու համար:

ՊՕԼՕԺԵՆԻԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ

Ծանօթ է արդէն թէ արեւելահայեր 1836-ին ընդունեցին ռուս պետութեան կողմէ կանոնադրութիւն մը՝ Պօլսեանիա (ռուսերէն բառով) ճանչցուած: Ժողովուրդին կողմէ այս կանոնադրութիւնը նկատուած էր պետութեան կողմէ հայ ազգայնականութեան ժայթքումը զրուպանակող գործիք մը: Տաս գլուխներ եւ հարիւր տասնմէկ յօդուածներէ բաղկացեալ Պօլսեանիայի ութերորդ գլուխը կը խօսի «Հոգեւոր դպրոցներու» մասին: Հոս անցողակի դիտել տանք թէ կառավարութիւնը առհասարակ «հոգեւոր» կը կոչէր հայ դպրոցները, տրուած ըլլալով անոնց ենթակայութիւնը եկեղեցիին: Արդ, Պօլսեանիայի ութերորդ գլուխուն համեմատ ազգը իրաւունք ունէր պահելու էջմիածնի մէջ բարձր դպրոց մը, մէյմէկ աստուածաբանական դպրոց

¹⁵ Աբրահամ Զամինեան, Հայոց Եկեղեցու

Պատմութիւնը, Բ. հտր., Նոր Նախիջեւան, 1909, էջ 187:

ամէն վիճակի մէջ, եւ մանուկներու կրթարարներ՝ վիճակներու մէջ: Պօլօ-ժենիան բոլոր այս դպրոցները կը յանձնէր կղերի հովանիին, պայմանաւ որ մշտական տեղեկութիւններով Ռուսիոյ ներքին գործոց նախարարութեան՝ կրթական լուրեր հաղորդուին եւ հայ դպրոցներու մէջ ռուսերէնով աւանդուին ռուսաց պատմութիւնը ու աշխարհագրութիւնը¹⁶: Ինչպէս կը տեսնուի, Պօլօ-ժենիան գրեթէ չունէր սեղմումներ կրթական մարզին շուրջ: Գէորգի համար, ընդհակառակը, լայն ասպարէզ կար գործունէութեան:

ԴԵՊԻ ԳՈՐԾ

Ուսումնական Յանձնաժողովը, որուն յանձնած էր Գէորգ հայ դպրոցներու կանոնադրութեան գործը, Ռուսաստանի գանազան վիճակներէն կանխապէս իր պահանջած պատշաճ տեղեկութիւնները ստանալէ ետք, 1868-ին գծեց նախ ծխական դպրոցներու կանոնները, որոնք նոյն տարուան «Արարատ»ի մէջ հրատարակուեցան¹⁷:

Տրուած ըլլալով որ Պօլօժենիան կ'արածնէր ամէն եկեղեցիի եւ վանքի մէջ բացումը ծխական դպրոցներու, Գէորգ սկսաւ ամէն տեղեր դպրոցներ բանալ: Բոլոր գաւառներ, մինչեւ յետին գիւղերը դպրոցական ցանցին մէջ առնուեցան: Շինուեցան նոր դպրոցներ, իսկ բարեկարգուեցան հիները: Իբր կրթական մնայուն արժէք, հոս կ'արժէ մասնաւորաբար ծանրանալ Ուսումնական Յանձնաժողովի առաջին կանոնադրութեան վրայ, որ ծխական դպրոցներ

րու համար էր գծուած¹⁸: Այդ կանոնադրութեան յիշած կէտերուն համաձայն կը ցայտեցնենք պատկերը ծխական դպրոցներու:

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ծխական կը կոչուին եկեղեցական դպրոցներէն անոնք, որոնք իւրաքանչիւր եկեղեցիի մօտ կը գտնուին: Նպատակն է տալ հայ տղոց նախակրթութիւն մը, պատրաստելու համար զանոնք թեմական դպրոցներու: Բոլոր եկեղեցիներ անխտիր, ըլլան քաղաքի կամ գիւղի մէջ, պարտաւոր են ունենալ դպրոց մը իրենց սրահին մէջ: Եթէ երբեք եկեղեցիին պակսի յարմար սրահ մը, կարելի է դպրոցը բանալ եկեղեցիին մերձաւոր վայրի մը մէջ: Ծխական դպրոցները դրուած են հոգեւոր իշխանութեան տակ:

Հոգաբարձութիւնը.- Ծխական դպրոցներ կը կառավարուին հոգաբարձութեամբ, որ կ'ընտրուի հաճութեամբ «ժողովրդականաց» եւ հաստատութեամբ թեմական իշխանութեան: Իւրաքանչիւր ծխական դպրոցի հոգաբարձութիւնը կազմուած է երեք հոգաբարձուներէ, որոնց մին հոգեւորական, իսկ երկուքը աշխարհական պիտի ըլլան: Ասիկա գիւղերուն համար է, իսկ գիւղաքաղաքներու եւ քաղաքներու մէջ առհասարակ կրնայ ընտրուիլ մինչեւ հինգ հոգաբարձու: Աշխարհական հոգաբարձուն կ'ընտրուի «ժողովրդական»ներուն ձայներուն առաւելութեամբ: Հոգաբարձութեան պարտականութիւնն է.

Ա) Խնամք տանիլ դպրոցին բարեկարգութեան եւ պայծառութեան,

Բ) Աշխատիլ դպրոցին եկամուտները արդիւնաւորել ու աճեցնել եւ անոր ծախքերուն հասու ըլլալ:

¹⁶ Մ. Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Գ. հտր., սիւն. 3694-3695:

¹⁷ «Արարատ» (ամսագիր, էջմիածին), 1868 Հոկտեմբեր:

¹⁸ Նոյնը, 1869, էջ 69-72:

Հոգաբարձուն ամսէ ամիս իր այցելութեամբ դպրոցին, հսկելու է կարգապահութեան, ուսուցիչներուն եւ ուսանողներուն յառաջդիմութեան:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Դպրոցին մուտքի բաժինը կը լեցնեն աշակերտական տարեսուրբը, բարեպաշտներու նուիրատուութիւնները, եկեղեցական զրամագլուխներու կամ թեմական Առաջնորդին եւ Կաթողիկոսին տնօրինութեամբ յատկացուած դրամագլուխներու տոկոսները: Մուտքն ու ծախքը դպրոցին կը գրուին ժապաւինեալ տոմարին, որ կը տրուի հոգեւոր իշխանութենէն, որուն հոգաբարձուները կը պարտին դպրոցին ելեմուտքի հաշիւը ներկայացնել:

ՎԱՐԺԱՐԱՆԸ

Ծխական դպրոցը պարտաւոր է ունենալ դասարան մը: Իսկ եթէ նիւթական միջոցները ներեն, այն ատեն կարելի է երկրորդ դասարան մըն ալ աւելցնել: Դասաւանդութեանց պահերուն որոշումը կախուած է հոգաբարձուներու կամքէն:

ՈՒՍԱՆՆԵԼԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ

- Ա) Քրիստոնէական վարդապետութեան նախնական ուսումները:
 - Բ) Աւետարանի գրաբարէ աշխարհաբար թարգմանութիւն:
 - Գ) Հայերէն ընթերցանութիւն եւ գեղագրութիւն:
 - Դ) Տարերք հայ քերականութեան:
 - Ե) Սրբազան Պատմութիւն:
 - Զ) Ռուսերէն ընթերցանութիւն եւ գեղագրութիւն:
 - Է) Տարերք թուաբանութեան:
- Իսկ հայաբնակ այն գիւղերու մէջ ուր սակաւաթիւ բնակչութիւն մը կայ

եւ կարելի չէ թոշակաւոր ուսուցիչ մը վարձել, կարելի է բաւականանալ հայերէն ընթերցանութեամբ եւ գիրով, սրբազան պատմութեան աղօթքներով եւ թուաբանութեամբ: Այս պարտականութիւնը քահանաները կամ տիրացուները պարտաւոր են կատարել: Եթէ ասոնք տեղեակ են այլ առարկաներու եւս՝ թուաբանութիւն կամ քերականութիւն, ազգին հանդէպ իրենց ունեցած պարտականութեանց փոխարէն, կրնան ուսուցանել ճիւրաբար, մնչեւ նշանակումը ռոճիկի կամ մասնաւոր տնօրինութեան: Վերոգրեալ առարկաները պարտին կատարելապէս ուսուցուիլ երեք կամ չորս տարուան մէջ: Այն քաղաքները, ուր հայեր օտարախօս են եւ չեն գիտեր մայրենի լեզուն, վարժապետները պարտաւոր են մասնաւոր խնամ տանիլ հայախօսութեան, որպէսզի աշակերտները երբ մտնեն թեմական դպրոցներ, կարենան զիւրաւ հասկնալ աւանդուած առարկաները ուսման:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Անոնք կ'ընտրուին հոգաբարձուներու ձեռքով եւ հոգեւոր իշխանութենէն կը հաստատուին պաշտօնի: Ուսուցիչներ բաւականաչափ պարտաւոր են ըլլալ ուսեալ, ուսումնասէր, աշխատութեամբ փորձառու, եւ կամ թեմական դպրոցներու եւ վիճակաւոր Առաջնորդներու օրինաւոր յանձնարարագիրներով վկայուած: Ծխական դպրոցներու մէջ երկու ուսուցիչ պէտք է ըլլալ, մէկը՝ կրօնքի, հայ լեզուի եւ թուաբանութեան, եւ միւսը՝ ռուսերէնի դասաւանդութեան համար: Ամէն վարժապետի համար չափաւոր ռոճիկ կը նշանակուի, իսկ եթէ դպրոցին նիւթական միջոցները ներեն, կարելի է նշանակել երրորդ ուսուցիչ մը եւ միւս երկու ուսուցիչներուն ռոճիկը աւելցնել: Ուսուցիչներ պարտաւոր են ազգասիրական եռանդուն եւ ժրաջան

աշխատութեամբ առաջ տանիլ իրենց ստանձնած պաշտօնները:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Անոնք ցերեկօթիկ պէտք է ըլլան: Տարիքնին՝ 7 եւ 11 տարիներու միջեւ պէտք է ըլլայ, երբ դպրոց կը մտնեն: Աշակերտները, ամէն օր, մանաւանդ կիրակիներ եւ տօնական օրեր պարտաւոր են եկեղեցի երթալ եւ փոքր տարիքէն եկեղեցասիրութիւն սորվիլ: Յառաջադէմ աշակերտներուն կը նուիրուի գրեւական պիտոյքներ, որքան որ դպրոցին միջոցները ներեն: Աշակերտները անխափան յաճախելու են դպրոց, առանց նոյնիսկ ամառնային արձակուրդի, բացի կիրակիներէն եւ տօնական օրերէն:

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

«Արարատ» 1869 Փետրուար թիւին մէջ հրատարակուեցաւ Ուսումնական Յանձնաժողովին կանոնադրութիւնը թեմական դպրոցներու համար, որոնք աւելի բարձր մակարդակի մը վրայ կը գտնուին. ուստի աւելի խորհուած ու քրտնեցնող աշխատանք մը կը պահանջէին: Դարձեալ ծաղկաքաղ ընելով կանոնադրութենէն, կու տանք պատկերը թեմական դպրոցներու, ընդգծուած կանոններու մէջէն:

Թեմական կը կոչուին դպրոցներէն անոնք, որոնք հաստատուած են առաջնորդանիստ տեղեր եւ Ռուսիոյ գլխաւոր քաղաքները, կրթելու ծխական դրպոցներէն թերաւարտ եղած տղաքը: Ուրեմն կը ներկայանան աւելի բարձր դիրքով մը, գրեթէ համապատասխանելով արդի մեր նախակրթարաններուն:

ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԸ

Թեմակալ Առաջնորդը հոգաբարձութեան նախագահ անդամն է: Աշա-

կերտներու բարոյական զարգացումը եւ կրօնական գիտելիքներու լաւ դասաւանդութիւնը կախուած են Առաջնորդին ուշադրութենէն: Թեմակալ Առաջնորդը թեմական դպրոցներու հոգաբարձուներուն բարուք գործունէութեան համար, կրնայ Վեհափառ Կաթողիկոսէն արժանաւոր վարձատրութիւն խնդրել:

Թեմական դպրոցներու հոգաբարձութեան անդամներուն թիւը կրնայ չորսէն մինչեւ տասներկու ըլլալ. անոնք պէտք են հմուտ ըլլալ տնտեսական եւ հաշուարարական գործառնութեանց: Ուսումնական եկեղեցականներ կրնան հոգաբարձութեան մէջ գտնուիլ: Հոգաբարձուներ կ'ընտրուին եկեղեցականներէ եւ ժողովուրդէն ընտրուած պատգամաւորներու ձայներու առաւելութեան համեմատ: Հաստատելն ու արձակելը, թեմակալ Առաջնորդին առաջարկութեան համեմատ, Վեհ. Կաթողիկոսէն կ'ըլլայ: Երեք տարին անգամ մը կ'ընտրուին. իսկ եթէ օգտակար գործունէութեամբ վկայուին, կրնան երեք տարի եւս շարունակել: Վիճակային Ատեանէն հոգաբարձութեան կը տրուի ժապաւինեալ տոմար, ելեմուտքը եւ նուիրատուութիւնները արձանագրելու, եւ տարեվերջին Ուսումնական Յանձնաժողովին կը զրկուի: Եթէ թեմական դպրոցները անշարժ կալուածներ, զրամագլուխ եւ այլ հասոյթներ ունին, հոգաբարձութեան յանձնուած է անոնց կառավարութիւնը:

Դպրոցներ եթէ երբեք զրկուին այսպիսի հասոյթներէ, հարուստ ծնողներէ գանձուած տարետուրքերով, այլեւայլ նուէրներով եւ կտակներով կը հայթայթուին ծախքերը դպրոցին: Հոգաբարձութիւնը կը ջանայ դպրոցի պայծառութեան համար, եւ կը յորդորէ ազգայինները, որ իրենց տղաքը դպրոց զրկեն: Անոնք ամէն շաբաթ մէկ անգամ այցելութեամբ վերահասու կ'ըլլան դպրոցին

յառաջդիմութեան, ուսուցիչներուն եւ աշակերտներուն ջանասիրութեան: Հոգաբարձուներու գիտութեամբ կ'ընտրուին աշակերտները, նոյնպէս ուսուցիչներու եւ աշակերտներու արձակումը անոնցմէ կախուած է: Թեմական դպրոցներու շէնքերը եկեղեցիի մօտ կամ անոր սրահներու մէջ պէտք են ըլլալ: յարմար տեղի մը չգոյութեան, ուրիշ տեղ կարելի է կառուցանել:

ՏԵՍՈՒԶՆԵՐԸ

Տեսուչը հմուտ պէտք է ըլլայ թեմական դպրոցի մէջ աւանդուած ուսման բոլոր առարկաներուն: Վկայուած ըլլայ վարքով ու բարեկրթութեամբ, մանաւանդ դասաւանդութեան եղանակները լաւ գիտցող, այսինքն՝ մանկավարժ: Տեսուչը կ'ընտրուի թեմական դպրոցներու հոգաբարձուներէ, եւ կը հաստատուի թեմակալ Առաջնորդէն: Անիկա պարտաւոր է որոշել դասաւանդութեան դիւրագոյն եղանակը եւ հոգ տանիլ դասերու անընդմէջ շարունակութեան: Շարաթը անգամ մը պարտաւոր է քննել ուսուցիչներու օրագրութիւնը՝ աշակերտներու յառաջդիմութեան մասին: Երեւոյթ թերութիւնը ժամանակին հարդարելու է ուսուցիչին կամ աշակերտին: Տեսուչը պարտադրելու է որ ուսուցիչները ամէն ամսու վերջը կազմեն վիճակացոյցը աշակերտներու յառաջդիմութեան, հոն նշանակելով նիշը տղոց աշխատասիրութեան, վարքին եւ յառաջդիմութեան, թիւը դասաւանդութեան եւ համառօտ բովանդակութիւնը ուսման ամէն առարկայի, գոր ուսուցած են ամսուան ընթացքին: Տարեվերջին տեսուչը, քննութիւններէ ետք, ծրնողներուն կը ղրկէ կարճ վիճակացոյց մը աշակերտներու դասին եւ վարքին մասին:

Տեսուչը տարին անգամ մը պէտք է պատուիրէ ուսուցիչներուն որ աշա-

կերտներու հրապարակային քննութիւնը առնեն, հոգաբարձուներու եւ ժողովուրդին ներկայութեան: Տեսուչը հոգաբարձուներու խորհրդակցութեամբ իրաւունք ունի դասարաններու եւ ուսման առարկաներու թիւը աւելցնել, աշակերտներու յառաջդիմութեան համաձայն: Ուսումնական Յանձնաժողովի տեղեկագրով ՎԵՏ. Կաթողիկոսը կը վարձատրէ գնահատելի գործունէութիւնը տեսուչներու:

ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԸ

Ուսեալ, բարեկիրթ, «ողջամիտ ի հաւատս», աշխատասէր եւ յանձնարարագիրով վկայուած պիտի ըլլան: Դպրոցական վկայական եթէ երբեք չունին, տեսուչն պէտք են քննուիլ: Ուսուցիչները նշանակուած ժամուն դասարան կու գան. տեսուչն կախեալ է դասաւանդութեան միջոցը: Անոնք պարտաւոր են ուսումնական բաներու մէջ Տեսուչին անսալ եւ անոր խորհուրդին համաձայն ընթանալ դասաւանդութեան եղանակներուն մէջ: Ուսուցիչը եթէ հիւանդանայ, իմացուելու է հոգաբարձութեան. եթէ երբեք ամիսէ մը աւելի երկարի հիւանդութիւնը, անոր տեղ ուրիշ արժանաւոր անձ մը կը նշանակուի: Անաչառ եւ անկողմնակալ ոգիով միօրինակ պիտի դասաւանդեն բոլոր աշակերտներուն առհասարակ, նշանակուած լեզուներն ու առարկաները: Տեսուչի կողմէ նշանակուած ուսուցիչներէն մէկը «վերակացու»ի պաշտօնը կը վարէ, եւ անոր համար մասնաւոր ռոճիկ կ'ընդունի: Ուսուցիչներ ամէն ամսու վերջը կ'ընդունին ռոճիկը հոգաբարձութենէն: Ամէն ամիս անգամ մը տեսուչին նախագահութեամբ կը հաւաքուին խորհելու գրեթեական պիտոյքներու, դասաւանդութեան կերպերուն եւ դպրոցին ուրիշ ուսումնական պէտքերուն մասին:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Աշակերտներ, հոգաբարձուի մասին պարտավորվածության գիտակցումը, տարին երկու անգամ դպրոց կ'ընդունուին: Յունուարի 1-ին եւ Մեյ-տեմբերի 1-ին: Թեմական դպրոց մտնել փափաքողներ պարտավոր են գիտնալ ընթերցանութիւն, գեղագրութիւն: Տարիքը 11 եւ 12 տարիներու մէջ պէտք է ըլլալ: Ցերեկօթիկ են աշակերտները: Աշակերտներու թիւը կրնայ ըլլալ դպրոցին ընդարձակութեան եւ հոգաբարձուի մասին տնօրինութեան համեմատ: Կիրականամուտին, կիրակիներուն եւ տօնական օրերուն աշակերտութիւնը պարտաւոր է յաճախել եկեղեցի: Աղքատ ծնողներու գաւակները ճիշդաբար կ'ընդունին թուղթ, գրիչ, մելան եւ երբեմն «գգենլիս» հոգաբարձուներու տնօրինութեան համաձայն, որքան որ ներքին դպրոցին դրամական միջոցները: Շրջանաւարտները հոգաբարձուի մասին կ'ընդունին վկայականը, կնքուած դպրոցին կնիքով ու տեսուչին եւ ուսուցիչներուն ստորագրութեամբ: Շրջանաւարտ այն աշակերտները, որոնք ունին յառաջդիմութեան եւ բարի վարուց վկայագիրներ, կրնան ազգային դպրոցներու մէջ ուսուցչական պաշտօնով մտնել, եւ եթէ ցանկան հոգեւորական ըլլալ, հոգեւոր իշխանութիւնը կը յարգէ անոնց վկայագիրը:

ՈՒՍՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Առաջին դասարան

- Ա) Աւետարանի ընթերցանութիւն, գրաբարէ աշխարհաբար վարժութեամբ:
- Բ) Տարերք հայերէն քերականութեան:
- Գ) Տարերք թուաբանութեան:
- Դ) Համառօտ Սրբազան Պատմութիւն:
- Ե) Ռուսերէնի ընթերցանութիւն եւ գեղագրութիւն:
- Զ) Երգեցողութիւն:

Երկրորդ դասարան

- Ա) Քրիստոնէական վարդապետութիւն:
- Բ) Միջին մաս քերականութեան:
- Գ) Միջին մաս թուաբանութեան:
- Դ) Համառօտ ազգային պատմութիւն
- Ե) Ընդհ. աշխարհագրութիւն, համառօտ դասախօսութեամբ:
- Զ) Ընդհ. պատմութիւն, համառօտ դասախօսութեամբ:
- Է) Հայերէն աշխարհաբար անսխալ քերականութիւն:
- Ը) Ռուսերէն քերականութեան նախնական կանոններ եւ գրուցատրութիւն, բառագիտութեամբ:
- Թ) Ֆրանսերէն լեզու եւ գեղագրութիւն:
- Ճ) Երգեցողութիւն:

Երրորդ դասարան

- Ա) Ընդարձակ քրիստոնէական վարդապետութիւն, հաւատքի հական մասերու «ճառօրէն» դասախօսութեամբ եւ բացատրութեամբ:
- Բ) Հայոց գրականութիւն:
- Գ) Ճարտասանութիւն:
- Դ) Թուաբանական խնդիրներու լուծում եւ քաղուածք:
- Ե) Ազգային Պատմութիւն, ընդարձակ դասախօսութեամբ:
- Զ) Ընդհ. Ազգաց Պատմութիւն, ընդարձակ դասախօսութեամբ:
- Է) Ընդհ. Աշխարհագրութիւն, ընդարձակ դասախօսութեամբ:
- Ը) Շարադրութիւն եւ թարգմանութիւն ռուսերէնի:
- Թ) Գրաբար անսխալ շարադրութիւն:
- Ճ) Ֆրանսերէնի վարժութիւն:
- ՃԱ) Երաժշտութիւն:

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

(Շար. 3)

ՍՓԻՒՌԱՀԱՅՈՒ ՏԱԳՆԱՊՆԵՐ

Վ. Օշական (1922-2000) իր գրական գործունեության յիսնամեայ յոբելեանին (1993) առթիւ Համագայիինի Լիբանանի Երջանային Վարչութեան կողմէ Լիբանան հրաւիրուած էր 1995ին: 3 Հոկտեմբեր 1995ին ան հանդիպում-գրոյց մը ունեցաւ Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ, երեկոյեան ժամը ութէն սկսեալ, «Սփիւռքահայու տագնապներ» նիւթին շուրջ: Ներկայ գտնուելով ձեռնարկին, վիտեռի վրայ արձանագրած էի իր ելոյթը գրեթէ ամբողջութեամբ, զոր արտագրելով կը տրամադրեմ ընթերցողին ստորեւ:

Դժուար է գիտնալ, թէ արդե՞օ՞ք Օշական այս բանախօսութիւնը իր ներկայ վիճակով հրատարակութեան պիտի յանձնէր: Հրատարակութեան պարագային վստահաբար փոփոխութեան ենթարկելու էր զայն: Հակասութիւն թուող արտայայտութիւններ թերեւս բացատրուելով անելի հասուն դառնային իբրեւ հակասութիւն: Յետ մահու հրատարակութեանց վիճակուած է սակայն խմբագիրի մը «միջնորդութիւնը»: Այդ պաշտօնը չեմ յաւակնիր կատարած ըլլալ, քանի միայն աննշան սրբագրութիւններ ըրած եմ, որոնք անպայման կատարուելու էին խօսքէն գիրի անցման ընթացքին: Յաճախ պահած եմ խօսքի կրկնութիւններ: Շեղագրուած բառերը իմ կողմէ մուծուած անհրաժեշտ յաւելումներ են միայն: (Բանախօսութեան, որուն շահեկան գրոյց մը յաջորդեց, առաջին նախադասութեան առաջին կէտը եւ վերջին շուրջ տաս վայրկեանը դժբախտաբար չեմ արձանագրած):

Բանախօսութեան բովանդակութիւնը, նոյնիսկ հեղինակին կողմէ չմշակուած իր ներկայ վիճակով, անկասկած շահեկան է: Անոր այժմեականութիւնը շեշտելու է, մասնատրաբար 16 տարիներու հեռատրութիւնը (1995-2011) նկատի առնելով: Ամէն բանէ առաջ հոս կը կարդանք՝ սփիւռքահայ բարձրորակ մտաւորականի հասունութիւն, խօսքի ու բանաձեւումի խիզախութիւն եւ մտքի իւրօրինակ անկախութիւն:

ԻՇԽԱՆ ՉԻՖԹՈՒՆԻԱՆ

...եւ անկեղծօրէն եթէ համաձայն չէք ինձի ըսէք:

Սփիւռքը երկու բաղկացուցիչ տարր ունի իր մէջ, մէջ մը աշխարհագրական վիճակ մըն է Սփիւռքը եւ երկրորդ՝ հոգեբանական վիճակ մը: Աշխարհագրականը զիս շատ քիչ կը հետաքրքրէ իբրեւ կարեւոր տարր. տագնապի բուն պատճառը եւ բուն տարա-

ծուծիւնը հոգեբանական է: Աշխարհագրականը տարտղնումն է հայուլթեան, ցրուածուծիւնը Հայաստանէն դուրս, դէպի դուրս պոռթկալը, տեւական պոռթկալը, քիչ մը big bang-ի տեսութեան համաձայն, Սփիւռքը տեւական ինքնիրմէ դուրս կ'ելլէ. իր ներքին տրամաբանութիւնն է դուրս պոռթկալ: Ասքանը հիմա կը բաւէ իբրեւ տարագրում

իր աշխարհագրական կողմին: Հոգեբանականոր սակայն աւելի շահեկան է:

Մտքի վիճակ մըն է Սփիւռք ըլլալը: Սփիւռքահայ ըլլալը ամէն բանէ առաջ մտքի վիճակ մըն է: Նախ կայ օտարութեան գաղափարը: Սփիւռքի հայը օտարն է: Օտար է դուրսի աշխարհին համար եւ մէկը որ չի պատկանիր այն երկրին, որուն սահմաններուն մէջ կը բնակի: Եւ ուրեմն դուրս ըլլալու, կեդրոնէ մը, ներքին առանցքէ մը դուրս դրուելու, օտար մը ըլլալու առաջին հիմնական յղացքը կը գետեղուի սփիւռքահայութեան գիտակցութեան մէջ: Այլ անձ մը, ուրիշ մէկն է ինք: Միւսներուն պէս չէ, տարբեր է, ուրիշ անձ մըն է: Եւ որովհետեւ օտարութիւնը երկու երես ունի, այսինքն եթէ դուն օտար ես՝ «դուրսը մարդ մը քեզի համար օտար է, դուն ալ իրեն համար օտար ես» կը նշանակէ, ի վերջոյ կը յանգինք այն կացութեան որ օտարութիւնը կը դառնայ էութիւնդ իսկ: դուն օտարն ես: Որքան ատեն որ տանդ մէջ չես՝ դուն օտար ես: Եւ օտարը առանձին անձն է: Եւ ահաւասիկ կու գանք սփիւռքահայուն նշանաւոր առանձնութեան:

Մենք առանձին ժողովուրդ ենք: Սփիւռքահայը առանձին ժողովուրդ է: Առանձնութեան մէջ կ'ապրինք: Մեր շփումները արտաքին աշխարհին հետ կան անշուշտ, բայց խորունկ չեն: Իմացական շփումներ ունինք (մտաւորական դասակարգին մասին կը խօսիմ), այլ շփումներ կան կենցաղային մակարդակի վրայ, սակայն սփիւռքահայը առանձին անձն է:

Եւ ասկէ կը ծագի փնտռտուքը միւսին, միւս հայուն կամ աւելի վաւերականին, աւելի հարազատին, որ անցեալին մէջ կը գտնուէր, եւ որ մեզ անմիջապէս կը տանի անցեալաշատութեան եւ իր բոլոր բարիքներուն եւ չարիքներուն:

Երրորդ յատկանիշը օտարութեան եւ առանձնութեան հետ սփիւռքահայութեան հոգեբանութեան մէջ՝ սփիւռքահայը կեդրոն չունի, մայրաքաղաք չունի: Կը նշանակէ՝ հեղինակութեան բացակայութիւն մը կայ մեր կեանքին մէջ: Մենք կառավարութիւն չունինք, գերագոյն իշխանութիւն մը չի տնօրիներ մեր հաւաքական եւ անձնական կեանքը, մենք մեր գլխուն ձգուած ենք, ազատ մարդիկ ենք մենք: Ազատութիւնը իր հետ կը բերէ բարիքներ, նոյն ժամանակ իր հետ կը բերէ ահաւոր պատասխանատուութիւնը: դուն քեզ համար, քու կեանքիդ համար. պատասխանատուութիւն կը ստանձնես կեանքդ որոշելու:

Ես կը խօսիմ իմ անձնական փորձառութեան իրրեւ հայ մարդ մը եւ (անհասկնալի բառ մը) մօտաւորապէս կը խորհիմ, թէ ասոր շուրջ կարելի է գետեղել միջին հայու զգացումը, ապրումը Սփիւռքի մէջ:

Սակայն օտարութեան սրտին, այն օտարութեան մէջ որ կ'ապրինք, այդ օտարութեան ճիշդ կեդրոնը գոյութիւն ունի զգացական black hole մը, հսկայ փոս մը, որ Հայաստանն է: Բան մը որ մեզ կը քաշէ, որուն ձգողութեան ենթարկուած ենք եւ որ մեզի կու տայ բարոյական տեսակ մը կեդրոնի մը պատրանքը: Ոյժ մըն է Հայաստանը մեր կեանքին մէջ, քաշողական հսկայ ոյժ մըն է, որ կու գայ այդ օտարութեան սրտին նստիլ: Եւ որովհետեւ մենք միեւնոյն ժամանակ դուրս կը ձգտինք, դէպի աշխարհի չորս կողմ տարածուիլ կը ձգտինք, սփիւռքահայը (առաջին սահմանումս պիտի ըլլայ) այն անձն է որ բռնուած է երկու հակադիր ձգտումներու աքցանին մէջ՝ դէպի դուրս եւ դէպի ներս: Այն անձը, որ կը քաշուի դէպի խորհրդաւոր կեդրոն մը, եւ որ հայրենիքն է, Հայաստանն է այս պարագային (հայրենիքի գաղափարն է Հայաստանի

մէջ մարմնաւորուած)։ այն անձը, աշխարհի երեսին, որ երկու իրար դէմ շարժող ուժերու այդ բզբտումին մէջ կը գտնուի։ մէկը, որ (հնգ)զինք կը վունտէ աշխարհէն դէպի դուրսերը, սահմանագանց ձգտում մը (ուսի) դէպի աշխարհի չորս կողմերը, եւ նոյն ժամանակ կը քաշուի դէպի կեդրոն։ այս ահաւոր բըզբտումին կեդրոնը գտնուող անձը, իմ չափերովս, կը կոչուի սփիւռքահայ։ Թէ այս մարդը կը գտնուի Հայաստան թէ Սփիւռք, տարբերութիւնը մեծ չէ։ Հայաստանի գրագէտներուն ես բաւական մօտէն հետեւեցայ, Հայաստանի գրագէտներուն մէջ մեծ է թիւը անոնց, որոնք ճիշդ այս կացութեան մէջ կը գտնուին։ Սփիւռքահայ հոգեբանութեան աքցանին մէջ, թակարդին մէջ ինկած են։

Եւ արագ ակնարկ մը մեր պատմութեան վրայ ինծի կը թելադրէ հետեւեալ գաղափարը թէ հայութիւնը սփիւռքային ժողովուրդ մըն է, հողային ժողովուրդ մը չէ։ Հայաստանն ալ հսկայական Սփիւռքի մը մաս կը կազմէ։ Մեզի համար, որ կը ձգտինք դէպի արտասահման, սահմանի գաղափարէն դուրս, աշխարհն է ձեւով մը մեր հայրենիքը։ Մեր ժողովուրդի կազմութեան մէջ այսպէս աշխարհի վրայ տարածուելու եւ աշխարհը հայրենիքի վերածելու շատ խորունկ ձգտում մը կայ։ Եթէ նկատի ունենաք մեր մշակոյթի պատմութիւնը, մեր մշակոյթը գարգացած է դէպի դուրս գացող, դէպի աշխարհի չորս կողմերը տարողնուող գանազան կեդրոններու մէջ։ Սկսիմ, ինչ գիտնամ Նոր Զուղա, Աստրախան, Պոմպէյ, Կալկաթա, Մատրաս. կ'անցնիմ Վենետիկ, Պոլիս, Իզմիր, Փարիզ, Վիեննա, Թրիէստ. Թիֆլիս, Մոսկուա, Դորպատ ասոնք Հայաստանի մէջ չեն։ Հայութեան մշակոյթի վառարանները, օճախները, մականէթները (մաքնիսները) աշ-

խարհի չորս կողմը տարածուած են։ Ես կը խորհիմ ուրեմն, թէ այս ժողովուրդը կրնայ ինքզինք իրագործել, իրագործած է պատմութեան ընթացքին, դէպքերու բերումով (եթէ կ'ուզէք անկախութեան անկումէն ետք մենք մեզի նոր ճակատագիր մը շինած ենք) ինքզինք մտցուցած է քաղաքակրթութեան մէջ, աս դուրսի, Հայաստանի հողէն դուրս գտնուող կեդրոններուն մէջ։ Ուր պիտի ըլլայինք այսօր, եթէ աս 10-15 անունները, որ տուի, մեզի համար շփումի, contact-ի կեդրոնները եղած չըլլային արտաքին աշխարհին հետ։ Հոնկէ է որ մենք ստացանք մեր իմացական խայծերը եւ գարգացցինք վերջին երկուերեք հարիւր տարիներու մեր մշակոյթը։

Սփիւռքահայուն տագնապը այս իրողութեան գիտակցութիւնը չունենալն է, (չանդրադառնալը) թէ մենք սփիւռքային ժողովուրդ մըն ենք։ Մենք աւելի մեծ ենք, քան մեր հայրենիքին հողը։ Հայ ժողովուրդը աւելի մեծ է քան իր հայրենիքը։ Ինքզինք կ'իրագործէ հայրենիքէն դուրս եւ չ'ուզեր սակայն ասիկա ընդունիլ, որովհետեւ ուրիշ ոյժ մը գինք կը քաշէ դէպի հայրենիք, ահաւոր կարօտը, որով մենք բոլորս կապուած ենք մեր հայրենիքին։ Ուրեմն ես ձեւով մը կրնամ եզրակացնել, որ գիտակցութեան պակասն է առաջին տագնապը։ Այս ահաւոր կացութեան գիտակցութիւնը չունինք, եւ երբոր ունենանք, իրապէս կ'անդրադառնանք մեր կացութեան, հաւանաբար գիտակցութիւնը աս կացութեան մեղմէ քիչ մը անձկութիւնը որ կը ստեղծէ։ Ես կը խորհիմ ինչ տեսակ մարդ եմ ես, աշխարհի մէջ տուն պիտի չունենամ, հայրենիք պիտի չունենամ, այսպէս տեւական պիտի թափառիմ, «Թափառական հրեայ»ի պէս, ես մարդ չեմ։ Պատասխանը հարկաւ պիտի թափառուիս, ատ է քու հայ ըլլալը,

ատոր մէջն է, դուռն տեւական պիտի շարժիս, մարդ պիտի չգիտնայ ուր ես դուռն, այդպէս խորհրդաւոր, գաղտնի ժողովուրդ մը պիտի ըլլանք մենք (ամէնէն ծայրայեղ իմաստը բռնելով հարցին, որ գրականութիւն կ'ըլլայ այլեւս): Զջմարտութիւնը սակայն այն է որ վերջին երկու հարիւր տարիներու ընթացքին մենք տեւական այսպէս քայլ առ քայլ...ես հիմա օրինակ Աւստրալիա կը գտնուիմ, ուրկէ ուրկէ ճամբայ ելայ, ուր հասայ, բայց կը տեսնեմ թէ ներքին մղում մը կայ հայուն մէջ շարժելու, չմնալու նոյն տեղը. միաժամանակ սարսափելի existential կարօտը, պահանջը կայ կեդրոնի մը, հայրենիքի մը: Այս վիճակէն փախուստ մը կայ, ազատութիւն մը կայ, «ես կ'ուզեմ աճիլ», ինչպէս կ'ըսէր Գրիգոր Պըլտեան, եւ Ֆրանսա գնաց:

Մեր մէջ կայ ազատութիւն ընտրելու հայրենիքէն դուրս ինքզինք իրագործելու մղում մը: Առանց ուրանալու հայրենիքը: Հակասութիւններու թնճուկ մըն ենք մենք հայերս: Եւ եթէ ընդունինք այս իրողութիւնը, բաւական մը յառաջ գացած կ'ըլլանք մեր տեւելու, տոկալու, դիմանալու պայքարին մէջ: Թումանեան նամակի մը մէջ կը գրէ հայը ծնելուն պէս քիթը լերան մը կը գարնուի: Կը նշանակէ՝ մենք բանտարկուած ենք մեր հողին մէջ: Ես երիտասարդ տղայ էի, ուզեցի անկախութիւն, ձգեցի տունը, գացի Երուսաղէմ, պապաս-մամաս ձգեցի, գացի Հայֆա: Ազատ կ'ուզեմ ըլլալ, ես իմ պատասխանատուութեամբս կ'ուզեմ մեծնալ:

Առանց հողի հայ ըլլալը շատ դժուար է: Բայց այդ մղումը կայ, պոռթկալու դուրս, աւելի ըլլալու քան թէ հողը: Հողը ի վերջոյ հող է: Հողը հող է որովհետեւ մարդը անոր արժէքը կու տայ: Հողը ինչ է, հողին մէջ ինչ կայ: Հողը փշրանքներէ շինուած նիւթ մըն է:

Բայց արժէքը սա է որ մարդն է որ արժէք կու տայ անոր:

Ասոր համար է որ մենք ոչ արտերկիր ոչ աքսորական ենք, ոչ տարագիր ենք, ոչ գաղթական ենք: Այս բառերը ես բոլորովին կը մերժեմ, «արտերկիր» բառն ալ կը մերժեմ բացարձակապէս իբրեւ անհարազատ մեր կացութեան:

Մենք no man's land-ի մէջ ապրող ժողովուրդ մըն ենք: Դիւրին բան չէ ասիկա: Եւ ան որ կը դիմանայ այս բըզբտումին, շատ զօրաւոր մէկը կը դառնայ: Մեր մէջ հաւանաբար կան մարդիկ որ ատ մղումը կը գգան եւ այդ պայքարը կը մղեն, եւ աս տագնապին գոյութիւնը, ինչպէս ըսի, դէպի կեդրոնաձիգ եւ կեդրոնախոյս հաւասար ուժերու այս պայքարը կը կազմէ հիմնական տագնապը սփիւռքահայուն:

Երկրորդ տագնապը, որ կը դիմագրակէ սփիւռքահայը, իր (Ֆրանսերէն կ'ըսեն) raison d'être-ի տագնապն է: Իր գոյութեան արդարացումը կը փնտռէ սփիւռքահայը: Կը խորհիմ թէ Հայաստանի հայերուն մէջ չկայ (այս), ես չեմ տեսած. «Մենք մեր հողին վրայ ենք, հոս ծնանք, հոս կը մեռնինք, մեր հողը մեզի կու տայ իմաստ մը մեր կեանքին մէջ»: Մենք այդ իմաստը մենք պիտի գտնենք սփիւռքահայերս, մեր raison d'être-ը մենք պիտի հնարենք: Եւ, ինչպէս շատ շիտակ կ'ըսէ Վազգէն Գալուստեանը, «Մենք համաշխարհային ժողովուրդ մըն ենք», այսինքն կոչում մը ունի հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդը աշխարհի մէջ առաքելութիւն մը ունի: Չեմ ըսեր մեսիական, աշխարհը փրկելու կոչում մը չունինք մենք, հրեաներուն պէս չենք: Սակայն մեր մտածումներուն, մեր արեան, մեր ջիղերուն մէջ կայ այս վիճակը, թէ մենք ուրիշ ժողովուրդ ենք եւ մեզի ճակատագրուած է ուրիշ բան մը ըլլալ, միւս ազգերէն տարբեր: Ասոր

մէջ պարզ փաստը հոն է որ մենք ուր որ գացեր ենք բարիք եղեր ենք, ոչ մէկուն գլխուն փորձանք եղեր ենք, չարիք չենք հասցուցեր եւ ընդհակառակը, հայ ժողովուրդը քաղաքակրթական ազդակ է (facteur de civilisation): Կը հաւատաք, չէք հաւատար կարելի է վիճիլ: Սակայն մեր ժողովուրդը դիմանալու համար մինչեւ հիմա իր արուեստին մէջ, իր մշակոյթին մէջ ցոյց տուած է այս կոչումը այս (ճակատագիրը մեծ բառ է) ներքին մղումը մարդկութեան մէջ դեր մը խաղալու, աշխարհը աւելի բնակելի, աւելի ազնիւ տեղ մը դարձնելու պահանջը գագացած է: Ամերիկա կամ Աւստրալիա ես դաս կու տամ աշակերտներուս. «Պարոն, կ'ըսեն, ինչու՞ այս իրարանցումը, ինչու՞ հայ մնանք, երբոր կրնանք սքանչելի ամերիկացիներ ըլլալ»: «Հարկաւ, կ'ըսեմ, որովհետեւ հայութեան ներկայութիւնը աշխարհի երեսին բարիք մըն է մարդկութեան»: Հայութիւնը աշխարհի ու մարդկութեան մէջ օգուտ մը ունի: Եւ այս օգուտը բարոյական արժէք մը ունի ըստ իս: Անկախաբար մեր մշակոյթի մակարդակէն մենք արժէքներ կը ներկայացնենք: Խեղճ անգլիացիք ի՞նչ գիտնային երբոր հայերը կը մտնէին Անգլիա, starving armenians կը կոչէին մեզ, խեղճերը միայն մեր անօթի փորերը կը տեսնէին, բայց չէին գիտեր որ ինչ տեսակ մարդիկ էին այն հայերը որ Անգլիա կը մտնէին պատերազմէն վերջ, Եղեռնէն վերջ: Starving, այո, սովահար հայեր ենք, բայց եւ նաեւ ուրիշ բան մը կայ, ուրիշ որակ մը կայ մեր կեանքին մէջ, որ կը տեսնեմ ես մեր մշակոյթի դրութեան մէջ:

Ուստի սփիւռքահայը այս տագնապն ալ ունի՝ ի՞նչ է կոչումս աշխարհի երեսին: Ինչպէ՞ս պիտի արդարացնեմ գոյութիւնս: Եւ ինձի կը թուի թէ մեր՝ հայ ժողովուրդին Հայաստան հաւաք-

ուիլը վերջնական չի լուծեր հայուն հարցը: Հայ ժողովուրդին հարցը հողային հարց մը չէ: Աւելի է քան հողային հարց մը: Աշխարհային հարց մըն է: Եւ այդ կոչումի իրականացումին, այդ կոչումի հետապնդումին, այդ առաքելութեան ստանձնումին մէջն է որ մենք պիտի իրականացնենք մեր հայու ճակատագիրը, մեր հայ ըլլալու իմաստը: Ես Հայաստանի մէջ այս կոչումը չգտայ: Մտաւորականներու հետ տեսնուեցայ, երկու տարի առաջ գացեր էի Երեւան. հայ ժողովուրդի առաքելութեան դադափարը չկայ (հոն): Ասիկա սփիւռքեան գիտակցութիւն մըն է, սփիւռքեան գագայնութեան մէջ կայ ասիկա, տարածուիլ եւ օգտակար ըլլալ, ուրիշ ժողովուրդներու հետ միասին քաղաքակրթութիւնը յառաջ տանիլ:

Երբորդ տագնապը որ կը դիմագրաւենք արուեստի կայուածին կը պատկանի: Գաղտնիք չէ. մենք ժողովրդային մշակոյթ մը ունինք: Մեր մէջ այսօր կայ երկու տեսակ մշակոյթ. կայ ընտրանիի (եթէ այս բառը չէք սիրեր շատ կը ցաւիմ) մշակոյթ մը եւ ժողովրդային մշակոյթ մը: Ժողովրդային մշակոյթին մաս կը կազմեն գրեթէ բոլոր այն ծէսերը, երեւոյթները, հանդէսները, որոնցմէ մենք հաճոյք կ'առնենք, որոնց կ'երթանք (ասանկ բան մը օրինակի համար. աս Ֆոլքլոր է): Մշակոյթը ժամանց չէ: Մշակոյթը տառապանք է, ցաւ է, պայքար է: Եւ այդ պայքարը, պայքարի մշակոյթը, բուն, ըստ իս՝ վաւերական մշակոյթը կայ նաեւ մեր ժողովուրդին մէջ: Ունինք ընտրանի մը, որ լծուած է այս բարձր մշակոյթի նուաճումին, իբրեւ հայ Սփիւռքի մէջ, քովն ի վեր միւս ժողովրդային մշակոյթին, որուն մէջ մենք բոլորս կը հաւաքուինք եւ մեր ճակատագիրը կ'իրականացնենք:

Հայաստանի մէջ մշակոյթ մը գար-

գացած է վերջին տասնամեակներուն, որ ամբողջութեամբ դարձած է դէպի ժողովրդային խաւերը. ժամանցի մշակոյթ մը, բրոքերականտի մշակոյթ մը, հայրենասիրութեան մշակոյթ մը նաեւ ինչո՞ւ չէ, բայց որուն կը պակսի արեւմտեան ըմբռնումով մշակոյթի անձկութիւնը, արուեստի կամ գերագանց արժէքներու հետ պայքարի մտնելու տագնապը: Մենք Արեւմուտքի պտուղներ ենք բոլորս եւ կը հասկանաք թէ ի՞նչ կ'ըսենք: Առանց արհամարհելու որեւէ մէկ ձեւով ժողովրդային մշակոյթը, որ իր դերը կը կատարէ, պէտք է ընդունինք, որ այս բացը որ կայ ընտրանիի մշակոյթին եւ ժողովրդային մշակոյթին մէջ, երթալով կը մեծնայ եւ աս է տագնապը: Ժողովրդային մշակոյթին գոյութիւնը չէ տագնապը: Շատ լաւ է որ կայ ան: Շատ լաւ: Սիտնի ալ կու գան Հայաստանէն պարուսոյցներ, բաներ, իրենց պարերը կը սորվեցնեն մեր երիտասարդներուն, մեծ բան չենք շահիր, բայց կը շահինք՝ ատ երիտասարդները քովի կու գան, իրար կը ճանչնան, միասին կը պարեն, Աստուած գիտէ ի՞նչ կը պարեն, բայց անոնք կը բարեկամանան, կը մտերմանան իրարու: Ժողովրդային մշակոյթը շատ կարեւոր է: Եւ ասիկա գործն է ինթելիկենցիկային, մեր միջին մտաւորականութեան: Բայց պէտք չէ անջրպետը շատ մեծնայ երկուքին միջեւ, որ այլեւս խզուի կապը: Հոգ կ'երթայ: Որքան կը տեսնեմ ես դէպքերու ընթացքէն, մեր մէջ այս բացը երթալով կը մեծնայ եւ շատ գէշ է ասիկա, տագնապ է ասիկա ինծի համար, եւ վստահ եմ՝ ինծի պէս մտածողներուն համար, որ հաղորդակցութիւնը կը պակսի այլեւս, եւ ընտրանին, որուն գործը մասամբ ճշմարտութեան հետապնդումն է իրրեւ բարձրագոյն իտէալը մշակոյթի, բայց նաեւ ուղղութիւն տալ, օգտակար ըլլալ ժողովուրդի, գանգուածի շարժու-

մին, այս պաշտօնին գլխուն չի կրնար գտնուիլ, ասիկա չի կրնար իրագործել:

Վարէն վեր բարեբախտաբար ազդեցութիւն չկայ, այսինքն ժողովրդային մշակոյթը չի կրնար խանդավառել այն մարդիկը որոնք արուեստի գանազան կալուածներուն մէջ, մտածումի գանազան կալուածներուն մէջ բռնուած են մարդկութեան մեծագոյն տագնապներով եւ մտքի պայքարներու մղուած են. չի կրնար խանդարել: Յաւր հոն է սակայն որ ժողովուրդին մշակոյթը, ինչպէս ըսի, ազդուած գանազան միջավայրերու համամարդկային երեւոյթներէն, ժողովրդային մշակոյթը որ Հայաստանի մէջ կայ, Ամերիկայի մէջ կայ, որ ամէն կողմ կայ, բուն ճամբան է դէպի սահանքը եւ դէպի հեռացումը մեր ազգային վաւերական մշակոյթէն: Մեր աւանդական, եկեղեցական, միջնադարեան մշակոյթին մէջ, Նարեկացիէն մինչեւ Կոմիտաս, աւելի առաջ ալ եթէ երթաք, վաւերական, ընտիր մշակոյթի ներկայութիւնը կայ: Եւ այն ժամանակ ժողովրդային մշակոյթ մը անշուշտ կար, աշուղները կային, աս կար ան կար, սակայն բուն շեշտը, բուն առանցքը ընտրանին կը ներկայացնէր, եւ հարց չէր ծագեր: Մենք ատ էինք: Հիմա է որ հարց կը ծագի, որովհետեւ հսկայ ոյժ մը կայ, որ մեր ժողովուրդը առէր կը տանի: Չեմ ըսեր որ մարդիկ ձգեն ասիկա, ոչ, սխալ չհասկնաք գիտ, ինչ քէ՛Ք որ պիտի ընէք՝ ըրէք, ինչ որ պիտի ընենք ընենք, կեանքին մէջ վայելելը, կեանքը սքանչելի բան է: Բայց տագնապ մըն է ասիկա, որով պիտի հետաքրքրուին մարդիկ, որոնց մտահոգութիւնը մեր մշակոյթի ուր երթալն է:

Լեզուին գործածութիւնը մեր մէջ: Հայերէն լեզուն տակաւ կը տարտամի, սա գաղտնիք չէ՝ կրնաք ըսել հիմա: Եւ լեզուն տակաւ կը դառնայ պարզապէս հաղորդակցութեան գործիք մը: Հայը

հայուն հետ կը խօսի հայերէն: Բայց լեզուն, որեւէ մէկ լեզու, ոչ թէ միջոց է հաղորդակցութեան, այլ նպատակ է հաղորդակցութեան. միտքը մտքին մասին կը խորհի միայն. մտածումի բուն առարկան մտածումն է: Բառերով կը գրադի (լեզուն), բայց բառերուն բուն առարկան բառն է կրկին: Ուստի, ես կը տեսնեմ թէ մեր լեզուն կը տփզունի, դպրոցներու մէջ շատ լաւ չեն խօսիր, դուրսերը շատ չեն խօսիր, լեզուն իր գոյնը, իր վայելքը կը կորսնցնէ հայոց բերնին մէջ, ասիկա ինքնին վտանգ մըն է, սակայն բուն վտանգը կու գայ երբոր արուեստի կայուածին մէջ լեզուն կը վերածուի միայն եւ միայն արտայայտութեան ձեւի մը եւ կը կորսնցնէ արտայայտութեան ենթական ըլլալու իր արժէքը:

Եւ ասկէ վերջ չորրորդ տագնապը մտաւորականութեան տագնապն է, Սփիւռքի մտաւորականութեան դիմաց գտնուող հիմնական տագնապը: Մեզի հայ մտաւորականներուն այսօր կը պակսին շատ մը տուեալներ, որպէսզի գարգանանք եւ աճինք: Առաջինը ատոնցմէ մեր գլխուն եկածին բացատրութիւնն է, Եղեռնի հասկացողութիւնը: Ի նչ եղաւ Եղեռնին, ի նչ տեղի ունեցաւ մեր ժողովուրդի կեանքին մէջ: Մեզ ջարդեցին. ատ չէ միայն. ուրիշ բան մը տեղի ունեցաւ: Մինչեւ ատոր պատասխանը չգտնէ մտաւորականութիւնը, մինչեւ որ Եղեռնը մաս չկազմէ մեր մշակոյթի հիմնական կայուածներուն գրականութիւն, երաժշտութիւն, նկարչութիւն, միւս բոլոր մեծ արտայայտութեան ձեւերուն, Եղեռնը չնուաճուի մեր արուեստին կողմէ, Եղեռնի տագնապը, խորհուրդը, անհասկընալիութիւնը, ահաւորութիւնը, անմարդկայնութիւնը մեզ պիտի չարչարէ, մեզ պիտի տագնապեցնէ, եւ պիտի արգիլէ մեր մտաւորականութեան ազատ

ստեղծագործելու: Թուրքը, լաւ, թուրքը չէ, թրքութիւնը (որ աւելի ահաւոր բան մըն է քան թուրքը) մեզի ժառանգ մնացած է Եղեռնէն եւ եօթանասուն տարիէ ի վեր կը թունաւորէ մեր միտքը: Մեր մէջ դրած է թոյն մը, ատելութեան, վախի, հալածախտի զգացում մը, որ կ'արգիլէ մեր մտաւորականութեան կարողութեանց ազատ ծաղկումը: Եւ ասիկա ես միայն չէ որ կ'ըսեմ, շատ մտաւորական տղոց հետ խօսած եմ այս մասին, բոլորդ ալ գիտէք հաւանաբար որ թուրքը մեր մշակոյթին մէջ ճիւղ մըն է, անմարդկային էակ մըն է, բայց չկայ: Մեր գրականութեան մէջ թուրքը բացակայ է: Բացակայ է բայց է', ամէն տեղ է, չըլլալով իսկ է: Եւ այս իր ներկայութիւնը շատ մեծ արգելք է որ հայոց միտքը բացուի աշխարհի լոյսերուն եւ խորհուրդներուն: Թուրքի հարց մը կայ, թրքութեան հարց մը կայ, այսինքն ատելութիւնը, քէնը, ոխը, որ տակաւին մեր սրտին մէջ են, մեր գլխուն եկածին հանդէպ, ասիկա թոյն մըն է մեր մէջ: Չեմ ուզեր ըսելիքս (անհասկընալի բառ մը), ըսել կ'ուզեմ որ մինչեւ այն ատեն, որ մենք չկարենանք թուրքը մարդկայնացնել, մարդու վերածել, քաղաքակրթել, մեր մտաւորականութեան (Սփիւռքի մտաւորականութեան, որովհետեւ Հայաստանի մէջ աս տագնապը չկայ) համար հսկայ անջրպետ մը կայ արուեստի մէջ, որ գոց պիտի մնայ: Ես կը հիանամ Վահան Թէքէեանին, երբ (19)17ին բանաստեղծութիւն կը գրէ, ջարդերու շրջանին, կ'ըսէ. «Ես պէտք է ներեմ, որպէսզի կարենամ սիրել»: Պէտք է ներեմ թուրքին ըրածը, որովհետեւ ես արուեստագէտ եմ, սիրել կը պահանջեմ ես: Եւ բնական է, արուեստը սէր է: Սիրոյ արարք է արուեստը, ուրիշ բան չէ: Եւ երբոր այդ ատելութիւնը կայ, այդ դառնութիւնը կայ (եւ գիտեմ որ ինչպէս կ'ապրինք այդ ամբողջը, մեր

կեանքին մէջ կայ), ի նչպէս ընեմ որ այս թոյնը վերնայ մեր մէջէն: Օշականը փորձեց նոյն բանը, ինչ որ Թէքէեանը կ'ընէր, «Մնացորդաց»ով: «Մնացորդաց»ը խորքին մէջ պատասխանն է Եղեռնին: Դուռն մեզ կը ջարդես, ես քեզի գիրք կու տամ, երեք հատոր «Մնացորդաց» կու տամ, ահաւասիկ իմ պատասխանն: Մենք արուեստով կը պատասխանենք հոն, ուր դուռն եաթաղանով կը գարնես մեր գլխուն: Արուեստագէտի այս դրական կեցուածքը ճակատագրի դիմաց, ինծի կը թուի, թէ շիտակ ճամբան է: Թէքէեանին մէջն ալ կայ ատիկա: Եւ եթէ օր մը պիտի մեր մէջէն այս ատելութեան մաղձը մաքրուի, Աստուած տայ, որքան շուտ այնքան լաւ, այն ատեն մենք պիտի խորունկ շունչ մը առնենք, սփիւռքահայ մտաւորականները, արուեստագէտները պիտի կարենան հայ միտքը ազատագրել, հայ միտքը պիտի բացուի աշխարհին:

Արեւմտահայ մշակոյթի գործիչներուն, մեզի՝ սփիւռքահայ մտաւորականութեան համար, տաղանակին միւս երեսն ալ այն է որ ինչպէ՞ս պիտի պաշտպանենք արեւմտահայ մշակութային ժառանգութիւնը: Հսկայական տաղանակ, որ աշխարհին մէջ իր նմանը չունի: Մեր ժառանգն է, մեզի տրուած է մեր պապերուն կողմէ, պատմութեան կողմէ, ի նչպէս պիտի ասիկա անցնենք, փոխանցենք գալիք սերունդին: Գիտէք, մշակոյթը գեղեցիկ բան մը չէ որ տանդ մէջ կը դնես, գորգ մը, որուն վրայէն կ'երթաս-կու գաս, աս գորգը գեղեցիկ գորգ է, կ'ըսես, բայց մշակոյթը գորգ չէ, մշակոյթը առարկայ չէ, մշակոյթը չի փոխանցուիր, մշակոյթը կ'ապրուի, ապրուելով կը փոխանցուի: Տանդ մէջ գեղեցիկ, ի նչ գիտնամ, ջուրթակ մը կախէ պատէն, բայց եթէ տան մէջ ջուրթակ նուագող չկայ ի նչ հասկցանք: Ապրում չէ անիկա: Գեղեցիկ առարկայ

մըն է, բայց արուեստ չէ, մշակոյթ չէ: Ուստի մշակոյթը պիտի ապրուի: Եւ մեր արեւմտահայ մշակոյթը որպէսզի դիմանայ՝ պիտի ապրուի: Եւ ատիկա ապրողները մենք պիտի ըլլանք, ուրիշները չէ, ծառերը չէ, լեռները չէ, մենք մեր ջիղերով պիտի ապրինք: Ի նչ ընենք: Մենք մեր կեանքը չենք կրնար ապրիլ, ալ ուր մնաց մեր հայրերէն ժառանգածնիս: Բայց պէտք է, այս ամբողջը պէտք է մենք շալկենք, պէտք է մերը ընենք, որպէսզի կարենանք քայլ մը առաջ երթալ, այլապէս տեղքայլ կ'ընենք:

Մէկ խօսքով, մտաւորականութիւնը պէտք է դառնայ անպաշտօն ղեկավարութիւնը այս ժողովուրդին: Ամէն ժողովուրդ երկու ղեկավարութիւն ունի, բոլորդ գիտէք. պաշտօնական ղեկավարութիւն, անոնք որոնք կը տեսնէք տեւական, թերթերուն մէջ, անունները կը լսէք, սակայն կայ մեր ժողովուրդին մէջ անպաշտօն ղեկավարութիւն. մտաւորականութիւնն է ատիկա: Եւ որպէսզի կարենայ այս դժուար գործը, մշակութային ժառանգութեան ստանձնումը գլուխ հանել, մտաւորականութիւնը ստիպուած է իր վրայ պաշտօններ առնել: Ահաւասիկ հոս է որ տաղանակը նաեւ կը ծագի: Պայքար կը ստեղծուի պաշտօնական ղեկավարութեան եւ անպաշտօն ղեկավարութեան միջեւ: Եւ շատ բնական է ասիկա, կեանքի օրէնքն է, պայքարը պէտք է ըլլայ: Ոյժերը հաւասար են, անհաւասար են՝ ատ չեմ գիտեր: Ամէն մարդ իր մտքին մէջ կրնայ չափել եւ դնել դէմ դիմաց պաշտօնական ղեկավարութիւնը իր բոլոր միջոցներով եւ անպաշտօն ղեկավարութիւնը իր բոլոր միջոցներով եւ այս երկուքին պայքարը տեսնել (մաքուր պայքար անշուշտ). հայ ժողովուրդի մշակոյթի եւ ոգեկան գոյութեան պայքարն է ասիկա: Բայց ահաւասիկ տաղ-

նապը, սփիւռքահայրու յատուկ տազնապը, որ ոչ Հայաստան ոչ ալ Արցախ գոյուծիւն ունի եւ որ հաւանաբար հօրս ժամանակ ալ գոյուծիւն չունէր: Ասիկա կը սկսի մեր ժամանակներուն:

Սփիւռքահայ մշակոյթը երկու շրջան անցուցած է: Ժխտական մշակոյթի շրջան մը եւ դրական մշակոյթի շրջան մը: Ժխտական մշակոյթը, ժխտական գրականութիւնը՝ եթէ կ'ուզէք, կու գայ մինչեւ եօթանասնական թուականները, Սարաֆեանի մահը՝ 19(72)ին: Ամբողջ նախկին սերունդը: Շահնուրէն բռնեցէք մինչեւ իր սերնդակիցները. ողբի, ցաւի, մերժումի, ժխտումի արուեստ մը եղած է: Ժխտում ոչ միայն անցեալին, այլ անցեալը խորհրդանշող անձերուն. Շիրվանզատէ, Օշական, Զարեան, Զօպանեան. բռնեցէք այդ մարդիկը. աս բոլորին դէմ պայքար: Ուրացումի շրջան մը: Եօթանասունէն ասդին կը սկսի դրական շրջան մը: Դրական շրջան մը երիտասարդներու, որոնք հաշիւ չունին մաքրելիք ունէ մէկուն հետ եւ կ'ուզեն բան մը ստեղծել, մաքուր, առողջ, որ դէպի կեանք դառնայ, որ այլեւս հին հաշիւները ուսին չկրէ եւ մաքուր ճակտով (ըսելու ձեւ մըն է ասիկա) եւ այսինքն աւելի ազատ ձեւով (աւելի ճիշդ կ'ըլլայ այդպէս) դառնայ աշխարհին: Այս փոխանցումը իմ ըմբռնումովս տեղի ունեցած է արդէն: Այսօր կը գտնուին մտքի մարդիկ, շատ չէ թիւը, մատներու

վրայ կը հաշուուի, բայց այս պարագաներուն մէջ թիւը չէ (կարեւորը), (նպարավաճառի խանութ չենք բացած հոս), որակի հարց մը կայ. մէկ գրագէտ, մէկ բանաստեղծ կրնայ ամբողջ տաս հոգինոց խմբակի տեղը առնել իր պարզ ներկայութեամբ: Այսօր գոյուծիւն ունի շարժում մը մեր մշակոյթին մէջ, որ կ'ուզէ մաքրել խիղճը, կ'ուզէ մաքրել գիտակցութիւնը, եւ դրական ձեւերով, կեանքը ընդունիլ, կեանքը վայելել: Իմ տղաքս, մեր տղաքը կը վայելեն կեանքը, ապրող էակներ են, կը խառնուին կեանքին: Իմ հայրս չէր կրնար: Ոչ ալ ես: Մեր սերունդը քիչ մը տակաւին հինին կառչած է, բայց (ձեզի ուրախ լուր մը բերեմ աստեղ) երիտասարդ սերունդ մը կայ, որ դրական կեցուածք ունի կեանքին դիմաց: Եւ ասիկա լաւ նշան է: Բայց տազնապը մեր սերունդին, իմ սերունդիս մէջ այս տազնապը այսպէս կը մղկտայ, կը չարչրկէ մեզ որ ինչ պիտի ընենք անցեալով, ու ը պիտի տանինք անցեալը, ինչպէս ատոր հաշիւը պիտի նայինք, ինչ փորձանք պատահեցաւ մեզի. չենք գիտեր տակաւին: Ինչ ըսած ենք, մեր Եղեռնին իմաստը ինչ է, ինչ է Եղեռնին իմաստութիւնը, եթէ կ'ուզէք, ոչ թէ իմաստը, այլ իմաստութիւնը: Եթէ այս ժողովուրդը Եղեռնին միայն սորվեցաւ (այստեղ կ'ընդհատի արձանագրութիւնը):

ՎԱ.ՀԷ ՕՇԱ.ԿԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

«ԵՍ ԱՅԴ ՈՉԻՆՉՆ ԵՄ»

Ուրիշները ոչնչութիւն համարող անձերու կարելի է հանդիպիլ կեանքի խաչմերուկներուն վրայ, մանաւանդ երբ անոնցմէ ոմանք նիւթական բարձր դիրքերու տիրացած են կամ հանգամանաւոր ու տիտղոսաւոր դարձած: Ասոնց մէջէն ամէնէն խղճալիները անշուշտ, վերջը հարստացած տեսակներն են մարդոց, որոնք հարստութիւնը կը գործածեն իբրեւ ծածկոյթ իրենց տգիտութեան:

Ընկերային կեանքի մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնց խոնարհութիւնն ու հեզութիւնը չափ ու սահման չի՛ ճանչնար: Անկեղծ հոգեւորութեան բիւրեղ բարձրութեան հասած, ու խորհրդապաշտութեան նուիրուած անձերն են ասոնք, որոնք մարդոց հետ չեն բաղդատեր իրենց առաւելութիւններն ու աստուածատուր կարողութիւնները: Այլ՝ հոգեպէս խոնարհած, ու գիտակցաբար համեստացած, իրենց մեղաւոր անձը կը դնեն Աստուծոյ փառաւոր գահու պատուանդանին, եւ կը դիտեն Աստուծոյ մեծութիւնը: Այդ համեստ հոգիով գրուած է սաղմոսին այն տողը, ուր սաղմոսերգու թագաւորը իր մեղանշական իր բնութեան դիմաց տեսնելով Աստուծոյ մեծութիւնն ու սրբութիւնը, կ'ըսէ. «Մարդը ի՞նչ է որ կը յիշես գայն» (Հմմտ. Սղ 8.4): Սաղմոսերգուն իր այս բառերով նոյնիսկ կը զարմանայ Աստուծոյ մարդասիրութեան, երբ կը տես-

նէ, որ մարդ միշտ պատրաստ է անհնազանդ գտնուելու իր Արարչին նկատմամբ, ու իր պատուիրանագանցութեամբ յաճախ կ'անպատուէ երկնաւոր Հայրը:

Սաղմոսներու գիրքին հետ մտերմութիւն հաստատող հաւատացեալները, անպայման ժամանակի ընթացքին կը զգենուն խոնարհութեան այն հոգին, որուն շնորհիւ միայն կարելի է հասկնալ Աստուծոյ բոլոր ստորոգելիները, սկսելով Անոր հայրութենէն, հասնելու համար մինչեւ Անոր անսահման ներդամտութիւնը:

Ասոնք, իրենք իրենց անձը կը ներկայացնեն իբրեւ ոչնչութիւն, հակառակ Աստուածատուր իրենց կարողութիւններուն եւ զբաղեցուցած կարեւոր դիրքերուն: Ասոնք չեն նմանիր այն սահմանափակ կարողութեամբ վարպետին, որ սկիզբէն կը յայտարարէ թէ՛ որմնադրութեան մէջ մասնագիտացած չէ՛, սակայն շինարարական կալուածէն ներս որոշ աշխատանքներ կրնայ կատարել: Այսպէս վարուողները նախ վախկոտ անձեր կ'ըլլան, որոնք իրենց աշխատանքին ձախաւեր արդիւնքէն սարսափելով, զգուշաւոր դիրք կը բռնեն: Իսկ եթէ պատահի որ մասնակի յաջողութիւն արձանագրեն, շրջապատի գնահատանքին կ'արժանանան, որովհետեւ իրենց «չգիտցած» գործին ձեռնարկած ըլլալով հանդերձ, գոհացուցիչ

արդիւնքի հասան...:

Նոյնին օրինակով կարելի է դիտել նաեւ ծոյլ աշակերտին վարուելակերպը: Դասարանային անակնկալ քննութեան ընթացքին երբ խնդիր լուծելու պարտականութիւնը ստանձնէ ան, սկիզբէն կը յայտարարէ, թէ՛ չի՛ կրնար լուծել զայն: Սակայն ուսուցչին պնդումներուն տեղի տալով փորձ կը կատարէ, ու երբ մասնակից յաջողութիւն ձեռք ձգէ, փոխանակ բարկութիւն ընդունելու, կը գնահատուի իր կատարած ճիշդին համար...:

Այսպէս չէն սակայն հոգիով հեզերը, իսկապէս խոնարհներն ու անկեղծօրէն համեստ մարդիկ: Հակառակ խոնարհութեան աստիճաններուն վրայ գտնուելուն, անոնք այնքա՛ն բարձրէն կը դիտեն ստորայինները, որ նոյնիսկ կը խղճան անոնց վրայ:

Բարոյալից պատմուածքներու կարգին կը դասուի հին աշխարհի իշխաններէն մէկուն կեանքին ընթացքին պատահած դէպքերէն մէկը:

Կ'ըսուի, թէ տօնական առիթով, երկրին արքայագուներ փառաւոր թափօրով կ'անցնէր մայրաքաղաքի գլխաւոր պողոտայէն: Երկրին ժողովուրդը ո՛չ միայն իրար հրմշտկելով կը փորձէր աւելի մօտենալ համազգեստաւոր շքախումբին, այլ յարգալից վերաբերումով նստած տեղէն ոտքի կ'ելլէր ու գլխարկը հանելով խոնարհաբար կը դնէր կուրծքին, ի նշան խոր յարգանքի ու հաւատարմութեան:

Ժողովուրդին մէջ կար մէկը, սակայն, որ նստած էր ճամբու եզրին, եւ ո՛չ միայն ոտքի չէր ելլեր, այլ ընդհանրապէս հետաքրքրուած չէր թափօրով, ո՛չ ալ զայն գլխաւորող արքայագունով: Երեւոյթ՝ որ իշխանին ընկերակիցներուն ուշադրութիւնը կը գրաւէ: Այս մասին տեղեկացուելով, իշխանը կը հրամայէ թափօրին կանգ առնել, ապա վար կ'իջնէ իր սպիտակ նժոյգէն, ու կը մօտե-

նայ համեստ հագուածքով ճամբու եզրին նստած մարդուն:

- Դուն կը ճանչնա՞ս քեզի հետ խօսող անձը,- կը հարցնէ ան:

- Ո՞վ ես,- հարցումով կը պատասխանէ գետին նստող մարդը, որ կը շարունակէ իր տեղը նստած մնալ:

- Ես այս երկրին իշխանն եմ,- կ'ըսէ արքայագունը:

- Յետոյ ի՞նչ պիտի ըլլաս,- կը պատասխանէ ճամբեզրին նստողը:

- Այս երկրին թագաւորը պիտի ըլլամ,- կ'ըսէ իշխանը փքուած կուրծքով:

- Յետո՞յ:

- Յետոյ...յետոյ կա՛յսր պիտի ըլլամ,- կ'ըսէ ազնուականը նոյն հպարտութեամբ, մինչեւ կը հասնի հոն, երբ պատասխանելով նստող անձին հարցումներուն, ու ինքզինք ներկայացնելով մինչեւ իսկ իբրեւ ապագայ աշխարհակալ, կը ստիպուի ի վերջոյ ըսել, թէ վերջը «ոչինչ» պիտի ըլլայ: Իսկ գետին նստողը, որ մինչ այդ ուրիշ ուղղութեամբ կը նայէր, իշխանին դառնալով կ'ըսէ.

- Ես այդ «ոչինչ»ն եմ, ի՞նչ կ'ուզես ինձմէ:

Կեանքն ալ այսպիսի թատերաբեմ է, ուր մարդիկ իրենց դիրքին ու հանգամանքին, խելքին կամ նիւթական հարըտութեան ապաւինելով, իրենց անձը կ'ուզեն պարտադրել ուրիշներուն: Գետին նստող «ոչինչ»ը, իբրեւ սովորական մահկանացու, նաեւ բարոյական դաս կու տայ անոնց, որոնք չեն գիտեր թէ համայն մարդկութիւնը ճակատագրուած է հողայնութեան: Ո՛չ ոք իր ունեցածը պիտի կարենայ տանիլ իր հետ, ո՛չ իսկ իր հագած հագուստը, որ շուտով պիտի փտի գերեզմանի նեխած միջավայրին մէջ, փոշիացած աճիւններ թողելով միայն իր ետին: Պատմուածքին մէջ յիշուած արքայագունին աղաման-

դակուռ թագն ու մականը, փառաւոր շրջագգեստն ու նոյնիսկ շքեղ ձիակառքը թերեւս յայտնաբերուին աշխարհի տարբեր թանգարաններու ցուցափեղկերուն մէջ, իբրեւ դարեր առաջ այսինչ կայսեր կողմէ օգտագործուած իրեր: Սակայն, արքայազունը ինք՝ գոյուլթիւն չունի, եւ թերեւս գերեզմանն ալ անյայտ կորած է պատմութեան խորհրդաւոր մթութեան մէջ:

Ամէն մարդ ի վերջոյ «ոչինչ» է, երբ հողեղէն իր գոյուլթիւնը բաղդատէ Աստուծոյ աննիւթեղէն ամենակարող գոյացութեան հետ: Սակայն շատերուն կը պակսի քաջութիւնը, ամբողջական

սրտով ու լրիւ գիտակցութեամբ ըսելու՝ «Ես այդ ոչինչն եմ»:

«Ոչինչ» ըլլալը, ամենեւին յուսահատութեան առաջնորդող ինքնագիտակցութիւն չէ՛, այլ՝ դէպի կատարելութիւն ձգտելու հաստատ ուղի, որ թէպէտ ստիպողաբար երկար ու մուլթ փապուղիներէ առաջնորդէ մեզ, սակայն անոնց միւս ծայրը անպայման լուսաւոր ու պայծառ է: «Ոչինչ» սեպուելուդ համար մի՛ տրամիր ուրեմն, որովհետեւ ամէն մարդու վերջը «ոչինչ» է:

ԳՐԻԳՈՐ Ծ. ՎՐԴ. ԶԻՖԹՅԱՆ



ՄԱՐԴՈՒՆ ՎԻՃԱԿԸ ԱՆԿՈՒՄԷՆ ԱՌԱՋ ԵՒ ԵՏՔ, ՄԱՐԻԱՄ, ՄԱՐԹԱ ԵՒ ԼԱԻ ԲԱԺԻՆԸ*

ԱՆԿՈՒՄԷՆ ԵՏՔ ԶԱՆԱԶՈՒՄ

9- Հարցում.- *Ինչպիսի՞ ճանաչում մըն է ասիկա:*

Պատասխան.- *Երբ ոճրագործը ատեան կը բերուի եւ դատավարութիւնը կը սկսի, դատաւորը կը հարցնէ անոր. «Նրբ այդ չարիքը գործեցիր, չմածեցի՞ր, որ կատարած արարքին համաձայն հատուցման պիտի ենթարկուիս եւ մահուան դատապարտուիս...»: Այն ատեն ամբաստանեալը պիտի չկարենայ «ոչ» պատասխանել. որովհետեւ ան շատ լաւ գիտէր: Եւ երբ պատիժը կը սկսի գործադրուիլ, ան ամէն ինչ կը յիշէ: Նոյնպէս ալ պոռնիկը, արդեօք չի՞ գիտեր, որ իր ըրածը մեղք է ու չարութիւն, եւ կամ գողը չի՞ գիտեր, որ ըրածը անօրինութիւն է եւ մեղք: Ուստի, նոյնիսկ Աստուածաշունչի ապացոյցներէն անկախ, մարդը իր մէջ գոյութիւն ունեցող բնական խիղճին միջոցաւ գիտէ, որ Աստուած գոյ է, կայ...:*

Այսպիսի մարդիկ վերջին դատաստանի օրը պիտի չկարենան ըսել, թէ «Մենք չէինք գիտեր որ դու ես Աստուածը»: Եւ Աստուած անոնց պիտի պատասխանէ. «Բնութեան երեւոյթները ձեզի բան մը չէինք ըսեր (որոտումներն ու կայծակները...) որոնք երկինքէն էին եւ թէ ամբողջ ստեղծագործութեան վրայ Աստուած մը կայ»: Այսպէս, ինչո՞ւ դեւերը կ'աղաղակեն. «Ի՞նչ կ'ուզես մեզմէ, Յիսուս,

Աստուծո՛յ Որդի, եկար որ ժամանակէն առաջ տանջե՞ս մեզ» (Մտ 8-29): Եւ մինչեւ օրս դեւերը սարսափով կ'աղաղակեն սուրբերու եւ նահատակներու գերեզմաններուն մօտ, ըսելով. «Դուք մեզ կ'այրէք, դուք մեզ կ'այրէք»:

Աղամ եւ Եւա նախքան իրենց անկումը ծանօթ չէին բարիի ու չարի ճանաչման (գիտութեան) ծառին, բայց իրենց պատուիրանազանցութիւնը զիրենք ատակ դարձուց այս գիտութեան...:

10- Հարցում.- *Արդ, ի՞նչ պատահեցաւ Աղամի:*

Պատասխան.- *Աղամ անձամբ ձեռք ձգեց չարին ու բարին ճանաչումը (գիտութիւնը): Աստուածաշունչէն գիտենք, որ նախքան իր մեղանչումը Աղամ բարձրապատիւ եւ անարատ վիճակի մէջ կը գտնուէր, բայց պատուիրանազանցութեան պատճառաւ ան Աստուծոյ բարկութեան արժանացաւ... եւ այս կերպով ան սկսաւ սորվիլ, թէ ի՞նչ բան օգտակար է իրեն եւ ի՞նչ բան՝ վնասակար, եւ թէ՛ որմէ՞ պէտք է զգուշանար, որպէսզի աւելիով չմեղանչէ ու մահուան դատապարտութեան տակ չ'իյնայ...: Մենք գիտենք, որ ամբողջ ստեղծագործութիւնը Աստուծոյ իշխանութեան տակ է, Ան է որ ստեղծեց երկինքն ու երկիրը, կենդանիները, սողուններն ու զազանները... Այս ստեղծուածները թէեւ կը տեսնենք, բայց անոնց թիւը չենք գիտեր... Ո՞վ կրնայ գիտնալ: Աստուած միայն, որ ամէնուրեք է, եւ գիտէ նոյնիսկ անծին կենդանիներու սաղմերը...:*

¹ Շար. նախորդ թիւէն: Անապատական հայերէն՝ Ս. Մակար մեծ ճգնաւորի 12րդ քարոզը: (Sէ՛ս , ٨٥ نصوص آياتية الكبير، عظات القديس مقاريوس الكبير، صفحة ١١٤-١١٦)

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԻՏՔԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՀԱՍԿՆԱԼՈՒ ԱՆԿԱ- ԲՈՂՈՒԹԻՒՆԸ

11- Ուրեմն, այս բաները փորձենք մէկ կողմ դնել եւ փոխարէնը, վաճառականին պէս ձեռք ձգել ու սեփականել անկորնչելի այն ժառանգը, որ մեզմէ կարելի չէ առնել, որովհետեւ մեր մօտ կը մնայ: Դո՛ւն, որ իբրեւ մահկանացու կը փորձես քննել Աստուծոյ խորհուրդները, «յայտնաբերեցի բաց մը եւ հասկըցայ գայն» կ'ըսես, խորքին մէջ քու մարդկային միտքդ կը գերադասես Աստուածայինէն. սակայն մեծապէս կը սխալիս, որովհետեւ որքան որ կը ցանկաս ու կը փափաքիս փնտռել ու թափանցել գիտութեան խորքը, այնքան եւ աւելի դուրս կու գաս խորերէն եւ կը ձախողիս բան մը հասկնալ...:

Աստուծոյ ամէնօրեայ գործերակերպին առնչութեամբ այն հարցումները, որոնք միտքիդ մէջ կը յառաջանան, երեւոյթներ են, որոնք կ'անդրանցնին մարդկային միտքի հասողութիւնն ու արտայայտութիւնը: Ուրիշ ոչինչ կրնաս ընել, բացի երախտապարտ սրտով ու հաւատքով ընդունիլ զանոնք: Ծնունդէդ մինչեւ այսօր, հոգիիդ մասին բան մը կը ցոյց տայ գիտնալ, կամ կրնաս յայտնել ինձի այն մտածումներդ, որոնք ներաշխարհէդ կը բղխին կանոնի առաւօտէն մինչեւ ուշ գիշեր...: Եթէ կրնաս խօսէ՛ ինձի, վերջին երեք օրերու մտածումներուդ մասին, յաջորդաբար ներկայացնելով զանոնք: Չէ՛ս կրնար... Եւ եթէ քու սեփական մտածումներդ չես կրնար գիտնալ ու ճանչնալ, հապա ինչպէ՞ս պիտի կրնաս քննել ու հասկնալ Աստուծոյ մտածումներն ու իմաստութիւնը...:

12- Գնա՛ գետեգերք եւ խմէ՛ այնքան՝ որքան կրնաս, ապա շարունակէ՛ ճամբարդ: Մի՛ աշխատիր գիտնալ, թէ ուրկէ՞ կը յառաջանայ գետը եւ կամ ինչպէ՞ս կը

լեցուի ու կը յորդի...: Ամէն ճիգ ըրէ՛ բուժելու աչքիդ հիւանդութիւնը, որ պէսզի կարող ըլլաս տեսնելու արեւին լոյսը: Բայց մի՛ քննել, թէ անիկա ինչ քանակութեամբ լոյս կը պարունակէ եւ ո՛չ ալ ինչ բարձրութեան վրայ կը գտնուի երկինքին մէջ:

Չէ՛ս տեսնել, թէ մանուկը ինչպէ՛ս իր բերանը կ'առնէ մօրը ծիծը եւ կաթ կը խմէ ու կը կշտանայ, առանց երբեք քննելու կաթին աղբիւրը եւ կամ՝ թէ ուրկէ՞ կը բղխի: Անիկա կը խմէ կաթը մինչեւ որ սպառէ: Բայց ժամանակ մը ետք մօրը ծիծը վերստին կաթով կը լեցուի: Մանուկը չի՛ գիտեր, թէ ի՞նչ կերպով կը կատարուի այդ երեւոյթը, եւ ոչ ալ մայրը գիտէ, հակառակ անոր, որ կաթը կը կազմուի անոր արիւնէն եւ մարմինին միւս բոլոր գործարաններուն մասնակցութեամբ:

ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆՈՒՐԵՔ Է ԵՒ ՄԵՐ ՆԵՐՍԻՂԻՆ Է

Եթէ զԱստուած կը փնտռես երկրի խորերը, հոն պիտի գտնես զինք...: Եթէ ջուրերուն մէջ փնտռես զինք, այնտեղ պիտի գտնես «հրաշքներ ընող»ը (Ելք 15:11), եթէ գուրին մէջ փնտռես, առիծներուն մէջ պիտի գտնես զինք՝ Դանիէլը պաշտպանելու կեցած, եթէ կրակին մէջ փնտռես, հոն պիտի գտնես զինք՝ իր երեք ծառաները իր հովանիին տակ առած: Եթէ լեռան վրայ փնտռես, հոն զինք պիտի գտնես Եղիայի եւ Մովսէսի հետ...: Ան ամէնուրեք է, թէ՛ երկրին խորերը, թէ՛ ալ երկինքի բարձրունքներուն մէջ եւ թէ ալ մեր ներսիդին: Այնպէս՝ ինչպէս ետք քեզի մօտիկ է, թէ՛ քու ներսիդիդ է եւ թէ քեզմէ դուրս, քանի որ ուր ալ կամիս երթալ, որքան ալ ցանկաս հասնիլ հեռու աշխարհներ, հոն է միտքդ, այսինքն՝ ըլլայ արեւելք կամ արեւմուտք եւ կամ դէպի երկինք, հոն՝ ուր կ'ուղղուի միտքդ:

ԱՅՆ ԲԱԺԻՆԸ, ՈՐ ԱՅԺՄ Կ'ԸՆՏՐԵՍ, ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ:

13- Ամէն իմաստով մեր ճիգը պէտք է պրկենք եւ աշխատինք, որպէսզի մեր սրտերուն վրայ կրենք Աստուծոյ կնիքն ու յատկութիւնները: Որովհետեւ, վերջին դատաստանի օրը, երբ Աստուծոյ բարկութիւնը յայտնուի եւ երկրի բոլոր ժողովուրդները հաւաքուին, այն ատեն Բարի Հովիւը իր հօտը պիտի կանչէ եւ բոլոր անոնք, որոնք իրենց սրտերուն վրայ կը կրեն անոր կնիքը, պիտի ճանչնան իրենց հովիւը եւ հովիւն ալ պիտի ճանչնայ իր հօտը, որ իր կնիքը կը կրէ եւ պիտի ժողովէ զանոնք բոլոր ազգերէն: Եւ բոլոր անոնք, որոնք իր սեփականն են, պիտի լսեն իր ձայնը եւ հետեւին իրեն...:

Աշխարհը երկուքի կը բաժնուի՝ խաւարի հօտը, որ պիտի նետուի յաւիտենական կրակին մէջ, եւ լուսաւոր հօտը, որ կ'ողողուի դէպի երկնային հանգրստութիւն: Այն՝ ինչ որ մենք կ'ընտրենք եւ կ'ունենանք (այժմէն իսկ մեր բաժինը կ'ըլլայ մեր հոգիներուն մէջ), այն է որ պիտի լուսաւորուի, փայլի եւ յայտնուի եւ վերջին օրը փառքով պիտի ծածկէ մեր մարմինները:

14- Այնպէս՝ ինչպէս գարնան եղանակին հողին տակ գտնուող արմատները իրենց պտուղը կու տան, կը ծլին եւ գեղեցկօրէն կը ծաղկին, այլ խօսքով՝ բարի արմատը իր բարի ծաղիկն ու պտուղը կը յայտնէ, իսկ վատ արմատը՝ իր վատ ծաղիկն ու պտուղը՝ փուշը կը յայտնէ, նոյնպէս ալ վերջին դատաստանի օրը, իւրաքանչիւր մարդու մարմինն վրայ յատկօրէն պիտի յայտնուին այն գործերը, որ մարմնաւորապէս ապրած ժամանակ կատարած էր... Թէ՛ բարի եւ թէ՛ չար գործերը պիտի բացայայտուին այդ օր եւ այս հիման վրայ պիտի կատարուի դատաստանն ու հատուցումը...:

ԵՐԿՆԱԻՈՐ ՈՒՏԵԼԻՔԸ

Այս տեսանկյի կերակուրէն զատ, ուրիշ ուտելիք մըն ալ կայ՝ երբ Մովսէս Սինա լեռ բարձրացաւ եւ քառասուն օր ծոմապահութիւն կատարեց, ան սովորական մարդ էր, բայց երբ լեռան գագաթէն վար իջաւ, ան Աստուծոմով լիացած էր: Մենք անձնապէս կը փորձուինք, եթէ մարմինը կերակուրով չզոհացնենք, անիկա կարճ ժամանակուան մը ընթացքին կը տկարանայ: Ասով հանդերձ, երբ Մովսէս քառասնօրեայ ծոմապահութենէն ետք լեռնէն վար իջաւ, շատ աւելի զօրութեամբ լեցուած էր, քան՝ ոեւէ անձ: Որովհետեւ ան Աստուծոմէ կը կերակուէր եւ անոր մարմինը ամբողջութեամբ տարբեր սնունդ՝ երկնային ուտելիք կը ստանար:

Աստուծոյ խօսքը Մովսէսի համար եղաւ ուտելիք, եւ այնպիսի փառք մը ստացաւ, որ երբ լեռան բարձունքէն վար իջաւ, անոր երեսը լոյս կը ճառագայթէր:

Այն՝ ինչ որ Մովսէսի հետ պատահեցաւ, սոսկ խորհրդանիշ էր եւ օրինակ գալիք ճշմարիտ փառքին: Այդ նոյն փառքը ներկայիս կը փայլի քրիստոնեաներուն սրտերուն մէջ, իսկ յարութեան ժամանակ ամբողջ մարմինը պիտի ծածկուի աստուածային փառքով եւ յազենայ երկնային կերակուրով...:

ԱՂՕԹՔԻ ԱՏԵՆ ԳԼՈՒԽԸ ԾԱԾԿԵԼՈՒ ԻՄԱՍՏԸ

15- Հարցում.- Ի՞նչ կը նշանակէ կրնկան գլուխը ծածկելով աղօթելը (աղօթքի ժամանակ ան անպայման պէտք է ծածկէ իր գլուխը):

Պատասխան.- Առաքեալներու ժամանակաշրջանին, հեթանոս կիներու մօտ սովորութիւն էր իրենց մագերը ազատ եւ արձակ ձգել (հեթանոսական պաշտամունքներու ժամանակ, մանաւանդ իրենց արձակ մագերով կիներ կը

հրապուրելին տղամարդիկը եւ գանոնք կը մղէին անբարոյ յարաբերութիւններու: Այս իսկ պատճառով, առաքեալները յատուկ մտադրութեամբ ուզեցին մարդոց պատշաճութիւն եւ զգաստութիւն սորվեցնել, թելադրելով որ կինը աղօթքի ժամանակ ծածկէ իր գլուխը: Քանի որ այստեղ կին ըսելով՝ գայն նկատի ունէին իբրեւ եկեղեցւոյ խորհրդանիշ: (Մինչ այն ատեն կիները իրենց մագերը ազատ եւ արձակ կը ձգէին, միւս կողմէ՝ եկեղեցին իր գաւակները կը ծածկէր աստուածային փառաւորեալ զգեստներով եւ ծածկոցներով...): Հին Կտակարանին մէջ (Իսրայէլի եկեղեցիին մէջ), ժողովուրդը մէկ էր եւ Հոգին փառքով կը ծածկէր ամբողջ խորանը, չնայած որ ժողովուրդը Հոգիին համաձայն կեանք մը չէր ապրեր: Ներկայիս, սակայն, «եկեղեցի» բառը կը գործածուի իւրաքանչիւր հաւատացեալ անհատի համար, ինչպէս նաեւ՝ հաւատացեալներու բազմութեան համար, որովհետեւ իր մտածումներով եւ ողջ էութեամբ անձը կը դառնայ Աստուծոյ եկեղեցին:

Իւրաքանչիւր անձ գոյաւորուած է՝ երկնաւոր Փեսային հարսը ըլլալու եւ հաղորդակից դառնալու երկնաւոր Հօր: Այս ըմբռնումը թէ՛ անհատին եւ թէ՛ ամբողջ եկեղեցիին համար ըսուած է: Այդ պատճառով ալ մարգարէն Երուսաղէմին համար հետեւեալը կ'ըսէ. «Դուն մերկ էիր ու քեզի ասեղնագործուած հանդերձ հագցուցի» (Եգ 16.7-10), այնպէս կը խօսի, որպէս թէ մէկ հոգիի կ'ուղղէ խօսքը:

ՄԱՐԻԱՄ, ՄԱՐԹԱ
ԵՒ ԼԱՒ ԲԱԺԻՆԸ

16- Հարցում.- Ի՞նչ կը նշանակէ Մարթայի Յիսուսի ուղղած սա խօսքը. «Ես չափազանց զբաղած եմ, մինչ Մարիամ ուրեքուր էր քով նստած է» (տե՛ս Ղկ 10.39-40):

Պատասխան.- Այն՝ ինչ որ Մարիամ պատասխանելու էր Մարթայի, Տէրը իր խօսքով կանխեց գայն եւ ըսաւ: Մարիամ ամբողջ օրը ամէն ինչ ձգած Տիրոջ ոտքերուն քով նստեցաւ եւ Տէրը փառաւորելով իր օրը անցուց: Այս իմաստով, անոր Քրիստոսի ոտքերուն քով նստիլը սիրոյ արտայայտութիւն էր: Բայց որպէսզի աւելի յստակ ըլլայ Աստուծոյ խօսքը, լաւ լսեցէք, թէ ի՞նչ պիտի ըսեմ: Ոեւէ անձ, որ սրտանց կը սիրէ Յիսուս եւ մեծ սիրով եւ ցանկութեամբ կը կառչի անոր, Աստուած այդպիսի անձին ցուցաբերած անկեղծ եւ հարազատ սիրոյն համար կանխաւ յատուկ վարձատրութիւն մը կը կարգաւորէ: Վարձատրութիւն մը, որուն ենթական նոյնիսկ չ'անդրադառնար եւ անձանօթ է Աստուծոյ իր ստանալիքին: Երբ Մարիամ սիրեց, անոր ոտքերուն քով նստեցաւ: Ուստի շնորհքը, որ իրեն տրուեցաւ, անժամանակ էր. ա՛յն՝ որ իր ներաշխարհին մէջ յորդեցաւ, Յիսուսի էութենէն էր եւ խօսքերը՝ զոր Յիսուս խաղաղութեան մէջ խօսեցաւ, Մարիամի համար դարձան հոգի եւ զօրութիւն, եւ երբ անոր սրտէն ներս թափանցեցին, դարձան կեանք եւ հոգի եւ անոր սիրտը լեցուեցաւ աստուածային զօրութեամբ: Եւ հոն, ուր աստուածային զօրութիւնը կը հանգչի, այնտեղ ընդմիշտ կը մնայ իբրեւ անպոկեղի բաժին եւ ժառանգութիւն:

Այս պատճառով ալ, Տէրը՝ որ գիտէր Մարիամի իր տալիք յիշեալ օրհնութիւնը, ըսաւ. «Մարիամ լաւ բաժինը ընտրեց, բան մը՝ որ բնաւ ետ պիտի չառնուի իրմէ» (Ղկ 10.41): Այս ըսելով, սակայն, չենք թերագնահատեր Մարթայի ըրածը: Որովհետեւ այն, ինչ որ Մարթա իր ծառայական առաքելութեան մէջ նախանձախնդրութեամբ եւ աշխատասիրութեամբ ըրաւ, զինք նոյն շնորհքին արժանացուց. եւ ան իր ներսիդին ստացաւ աստուածային զօրութիւնը:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԻՆՔՉԻՆՔ ԿԸ ՅԱՅՏՆԵ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ

17- Հարցում.- Ինչո՞ւ կը գարմանանք անոնց հաշուոյն, որոնք անձամբ Տիրոջ եկան եւ անոր գորութիւնը ստացան՝ անոր հետ հաղորդակցելով:

Պատասխան.- Երբ առաքեալները Աւետարանը կը քարոզէին, սուրբ Հոգին հաւատացողներուն վրայ կը հանգչէր: Կոռնելիոս հեթանոս հարիւրապետը, երբ լսեց Պետրոս առաքեալի քարոզած Աստուծոյ խօսքը, անմիջապէս ստացաւ խօսքին գորութիւնը: Հապա որքա՞ն եւ աւելի պիտի ստանար Մարիամ, որուն հետ Տէրը անձամբ կը խօսէր. կամ Զակըէոսը եւ կամ ալ մեղաւոր կիներ, որ Տիրոջ գլուխը օծեց անուշահոտ իւղով, իր արցունքներով լուաց եւ մագերով սրբեց ոտքերը անոր, կամ Սամարացի կիներ...: Անվարան, Տիրոջմէ գորութիւն պիտի ելլէ եւ Սուրբ Հոգին ալ պիտի գործէ անոնց սրտերուն մէջ:

Մինչեւ այսօր, բոլոր անոնք՝ որոնք գԱստուած կը սիրեն եւ Տիրոջ սիրոյն ամէն ինչ կը ձգեն եւ աղօթքի մէջ կը յարատեւեն, Սուրբ Հոգին ծածկաբար կը սորվեցնէ անոնց այն բոլոր խորհուրդները, որոնց մասին նախապէս կ'անգիտանային: Ճշմարտութիւնը անձամբ կը յայտնուի անոնց, այնքան՝ որքան անոնք կը ցանկան ու կը փափաքին Զանիկա, եւ կը սորվեցնէ անոնց՝ ըսելով. «Ես եմ նշմարութիւնը» (ՅՀ 14.6):

Առաքեալները, իրենք եւս, նախքան Քրիստոսի խաչելութիւնը, անոր հետ ունեցած իրենց յարատեւութեան շնորհիւ մեծամեծ հրաշքներու ականատես եղան, թէ ինչպէ՞ս բորոտները մաքրուեցան, կոյրերը սկսան տեսնել, կաղերը քալեցին, մեռելները յարութիւն առին, եւ այլն: Բայց այն ժամանակ առաքեալները տակաւին չէին գիտեր, թէ Աստուծոյ գորութիւնը սրտերէն ներս թափանցելով ինչպէ՞ս իր գործը կը կատարէր եւ

թէ ինչպէ՞ս Հոգիով վերստին կը ծնէին, անոր հետ կը հաղորդակցէին եւ նոր ստեղծուածներ կը դառնային: Բայց անոնք Տէրը սիրեցին իրենց շօշափած ու ապրած հրաշքներուն եւ նշաններուն թողած ազդեցութեան պատճառով: Եւ Տէրը անոնց ըսաւ. «Ինչո՞ւ կը զարմանաք կատարուած նշաններուն վրայով, ես ձեզի այնպիսի մեծ ժառանգութիւն մը կու տամ, որուն նմանը աշխարհ չունի»:

18- Տիրոջ խօսքերը օտար կը հնչէին աշակերտներուն համար, մինչեւ որ Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ, մեր սիրոյն երկիրք համբարձաւ, Հօրը աջ կողմը նստեցաւ, ապա Մխիթարիչ Սուրբ Հոգին եկաւ եւ անոնց հոգիներուն մէջ թափանցելով՝ անոնց հետ միախառնուեցաւ: Եւ ճշմարտութիւնը անձամբ ինքզինք կը յայտնէ հաւատացեալ եւ հոգեւոր երկնային մարդուն, այսինքն՝ Տէրը անձամբ կու գայ, որպէսզի հաւատացեալին, այսինքն՝ քեզի հետ ըլլայ (հաղորդակցութեան մէջ ըլլայ քու անձիդ հետ):

Եւ բոլոր անոնք, որոնք իրենց անձերը ծառայութեան կը նուիրեն, եւ ամէն ինչ կը կատարեն նախանձախնդրութեամբ, աշխատասիրութեամբ, հաւատքով եւ ի սէր Աստուծոյ, շատ կարճ ժամանակ մը ետք, նոյն այդ ծառայութեան հոգին գիրենք ճշմարտութեան գիտութեան մէջ կը հաստատէ: Որովհետեւ Տէրը ինքզինք կը յայտնէ եւ կ'ուսուցանէ անոնց Սուրբ Հոգիին ճամբաները...: Եւ Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին կը վայելէ փառքն ու երկրպագութիւնը, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:

Հայացում՝
ՄԱԿԱՐ ՎՐԴ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 2)

ԴՐԱԽՏԻ ՄԱՍԻՆ

«Յորում ցնծայր զուարմացեալ
անտիրական խնդութեամբ»
ՇԱՐԱԿԱՆ

Ծննդոց գիրքին սկիզբը, 2-րդ գրու-
խին մէջ գրուած է աստուածատունկ
պարտէզի մը մասին, ուր Արարիչը իր
նորաստեղծ մարդը դրած է (ԾՆ 2:8),
որպէսզի ան մշակէ եւ պահէ զայն (նոյն,
հմր 15): Ըստ դրուագին, Աստուած
պարտէզին մէջ ակնհասճոյ եւ քաղց-
րահամ պտուղներով ծառեր բուսցու-
ցած է, նաեւ՝ «կենաց ծառ»ը եւ «բարին
ու չարը գիտնալու ծառը» (նոյն, հմր 9)-
այս վերջինէն սակայն արգիլած է ու-
տել, զգուշացնելով թէ անկէ ուտելու
պարագային՝ մարդը պիտի մեռնի (նոյն,
հմր 17): Պարտէզը կը ոռոգուի քառա-
ճիւղ գետէ մը: Այն ճիւղերէն երկուքին
անունը մեզի ծանօթ է. առաջինը՝ Տիգ-
րիսն է, իսկ երկրորդը՝ Եփրատը: Միւս-
նե՞րը. Փիսո՞նը եւ Գեհո՞նը: Մէկը արդ-
եօ՞ք Փասիսն է, երկրորդը՝ Արա՞քսը...

Ահա այս պարտէզն է դրախտը
(«դրախտ» բառը հին պարսկերէնէն կու
գայ եւ «ծառաստան» կամ »պարտէզ«
կը նշանակէ): Եւ այստեղէն է, որ դուրս
կը դուրս մարդը, որպէսզի «երկիրը
մշակէ, ուրկէ առնուեցաւ» (3:23): Ու-
րեմն, մարդը որ «դրախտ»էն դուրս
դրուած է՝ դէպի «երկիր» աքսորուած է:

Նախ, ո՞ր էր այս պարտէզը: Աշ-
խարհագրական տարածքի մը մէջ տե՞ղ
մըն էր:

Մինչեւ մարդ էակին «երկիր» աք-
սորուելու «տեղեկութիւն»ը՝ դրուագը

մտածել կու տայ աշխարհագրական
տարածքի մը մասին:

«Եւ Տէր Աստուած արեւելեան կող-
մը՝ Եդեմի մէջ պարտէզ տնկեց», կ'ըսէ
դրուագը:

Ուրկէ՞ դիտելով «արեւելեան կող-
մը» բացատրութիւնը տրուած է:

Համաձայն Ս. Գրային բանասիրու-
թեան, երբայեցուց աշխարհէն: Արդէն
Տիգրիսի եւ Եփրատի անուններն ալ այդ
մասին ենթադրել կու տան:

Ո՞ր էր Եդեմը:

1881-ին, Կ. Պոլիս տպուած «Բառա-
րան Սուրբ Գրոց»ը կը բացատրէ. «Ար-
դարեւ, անհնար է ցուցնել, թէ ուր էր
Եդեմ: Ոմանք ի մատենագրաց կը հա-
մարին, թէ էր բարձր եւ կեդրոնական
տեղ մը, ուստի այլեւայլ գետեր բխելով
կը հոսէին ամէն կողմ, եւ կը թափէին
այլեւայլ տեղեր, որ խոնարհագոյն էին
քան զբուն ակն նոցա: Այսպիսի բարձր
գաւառներ կը գտնուէին ի Հայս...»: Հայ
աւանդապատումը խանդավառու-
թեամբ դրախտավայր ցոյց տուած է
Հայաստանը: Այլ բացատրութիւններ ալ
զայն իջեցուցած են եւ կ'իջեցնեն Միջա-
գետքի շրջան, մինչեւ անոնց միասնա-
բար թափուած տեղը, այսինքն՝ Շաթէ-
էլ-արար:

Գուցէ հին հին ժամանակներուն
«Եդեմ» կոչուած գաւառ մը կար «արե-
ւելեան կողմ»ին մէջ (տեղ մը պատմա-

կան Հայաստանէն մինչեւ Շաթէ-էլ-արար տարածութեան), որ հռչակուած էր իր գետերով, ծառերով եւ հաճելի ու երջանիկ կեանքով: Եւ անոր հռչակը բանահիւսական մշակոյթին մէջ ստացած էր տարբեր ձեւեր, այն ձեւերէն մէկն է, որ ներհիւսուած է Ծննդոցի 2-րդ գլուխին մէջ:

Ինչպէս նշեցի արդէն, դրուագի վերջաւորութեան մարդ էակին դուրս դուրս կամ դէպի «երկիր» աքսորուելը՝ աշխարհագրական բոլոր տարբեր փոխաբերութեան կը վերածէ:

«Երկիր»ը այն տեղն է, ուր մարդ էակը «վնասուած է»: Հոնկէ ան չի կրնար մտնել դրախտ, որովհետեւ Աստուած «պարտէզին արեւելեան կողմէն քերովքներ ու ամէնահոյսով բոցեղէն սուրը» կը դնէ (Ծն 3.24): Ուշագրաւ է արտաքսման դրուագի այս արգելքը կանխած պատճառաբանութիւնը, ըստ որուն Աստուած մտահոգ որ մարդ էակը բարին ու չարը գիտնալէն ետքը՝ «ձեռքը երկնցնէ ու կենաց ծառէն ալ առնէ եւ ուտէ ու յաւիտեան ապրի» (նոյն, հմր 22)՝ կը դնէ արգելքը, որպէսզի աստուածանալ ուզած մարդուն առջեւ՝ դէպի կենաց ծառ ճամբան պահէ (նոյն, 3.24):

Աստուծոյ մարդակերպ այս ընթացքը բառացիօրէն պէտք չէ առնել, այլ ըստածին մէջ ճիշդ կ'ըլլայ տեսնել մարդ էակին շատ խոր, մահուան չափ խրդուածութիւնը Աստուծոյ, գրկուածութիւնը Անոր հետ յաւիտեանական կամ մնայուն հաղորդութեան:

Ո՞ր է կամ ի՞նչ է «երկիր»ը:

Պարզապէս «գետնի հող»ը, որմէ Աստուած մարդը շինեց (նոյն, 2.7):

Ինչպէ՞ս հասկնալ, ուրեմն, դէպի «գետնի հող» աքսորուելը մարդուն:

Աստուած դրախտէն դուրս դնելով մարդ էակը՝ անոր անմերձենալի կը դարձնէ «կենաց ծառ»ը:

Ի՞նչ էր «կենաց ծառ»ը:

Յաւիտեանական կեանքի ծառը: Ըստ Յովհաննէսի Յայտնութեան, անիկա տասներկու ամիս «պտուղ» կու տայ, իսկ անոր «տերեւներ»ը բուժիչ են (Յյտ 22.2):

Ջարեհ Արք. Ազնաւորեան այսպէս բացատրած է «կենաց ծառը՝ ծառ մը չէ: Այլ անիկա Քրիստոսի այլաբանութիւն մըն է. Քրիստոս ի՛նք է կեանքի ծառը» (Սերտողութիւն Յայտնութեան Գիրքի, էջ 315):

Անկասկած, Ծննդոցի գրողը եւ խմբագիրները այս հասկացողութիւնը չունէին, չէին կրնար ունենալ: Սակայն վստահաբար անոնց համար «կեանքի ծառ»ը միայն մէկ բան կը նշանակէր. Աստուծոյ հետ յաւիտեանական կամ մնայուն հաղորդութիւնը: Հոգելոյս սրբազանին մեկնութիւնը՝ պարզապէս քրիստոնէական հայեացքն է, որ զՔրիստոս կը ճանչնայ իբր «Հօրմէն անրաժան» եւ իբր զԱյն մեզի ճանչցնողը (Հմմտ ՅՃ 1.18), այլ խօսքով՝ մեզ իր Աւետարանին միջոցով Անոր հետ հաղորդութեան մէջ դնողը («Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր՝ որ զիս զրկեց, յաւիտեանական կեանք ունի» - ՅՃ 5.24):

Յիսուս ինչպէ՞ս հասկցած է դրախտը:

Գիտենք որ ան քարոզեց եւ ուսուցանեց ոչ թէ՛ դրախտի մասին, այլ՝ Երկինքի արքայութեան: Յիսուս միայն մէկ անգամ «դրախտ» անունը գործածած է, այն ալ խաչին վրայ: Իր կողքին խաչուած աւագակներէն զղացողին ըսելով. «Վստահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ» (Ղկ 23.43): Ասկէ աւելի բան չէ ըսած դրախտի մասին, ոչ մէկ նկարագրութիւն:

Ան այս աշխարհէն իր մեկնումին մասին խօսելով, յայտարարած էր թէ՛ Հօրը քով կ'երթայ (ՅՃ 14.28): Ուրեմն,

Յիսուսի համար դրախտ երթալը՝ իր Հօրը մօտ երթալն էր: Անկասկած, ան դրախտի մասին չէր մտածեր իբր տարածք մը, որ երկրի վրայ եղած էր: Իրեն համար դրախտը հոն էր՝ ուր իր Հայրն էր:

Դրախտը կամ Երկնաւոր Հօր «տեղ»ը անպատմելի է (յիշենք Պօղոս առաքեալի Բ. Կորնթացիներու նամակին այն համարները, ուր ան խօսած է դէպի դրախտ յափշտակուելուն մասին - Բ. Կր 12:2-4):

Եթէ անպատմելի է, ապա ինչո՞ւ պատմուած է Ծննդոցի մէջ:

Նախկին մարդը առհասարակ շօշափելի պատկերներով միայն կը հասկնար իր փորձառութիւնները: Այդ է պատճառը, որ աշխարհագրական տարրերով

եղեմական պարտէզ մը նկարագրուած է:

Հոն ուր Հայրն է՝ այնտեղ գրօսնումի դրախտ չկայ, որովհետեւ Հայրը գրօսնելու տեղ չէ: Ան էն է:

Բայց Հայրը միայն «հոն» չէ, նաեւ «հոս» է, այլապէս Յիսուս Անոր աղօթել չէր սորվեցներ: Տէրունական աղօթքին Հայրը, «որ յերկինս» է, այստեղի «երկինք»ին մէջն է, մեզի մօտիկ, պիտի ըսէի՝ աղօթական երկինքին: «Հոս»ի Հայրը՝ իր նախախնամութեան մէջ էն է: «Հոն»ի Հայրը՝ իր յաւիտենութեան մէջ էն է, գուտ երկինքը՝ ուր կը հաւաքուին եւ «անտիրական խնդութեամբ» կ'ըլլան արդարները:

ԳՍՈՒՆԻԿ ՔԷՆՅՑ. ԳՈՅՈՒՆԵԱՆ



ՏՕՆԱԿԱՆ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

*Անթիլիասի Մայրավանքին մէջ հա-
լաքուած Հարիւրաւոր բազմութեան եւ
յատկապէս ծնողներուն ուղղելով իր
խօսքը, ՆՍԾՍՏ Արամ Ա. Կաթողիկոս
խօսեցաւ մեր եկեղեցւոյ աւանդութիւն-
ներուն ու արժէքներուն հանդէպ սոսկ
ձեւական մօտեցում չցուցարբերելու եւ
Աստուծոյ պարգեւած մանուկները այդ
աւանդութեան խորհուրդով ու ոգիով
դաստիարակելու իսկական ծնողու-
թեան մասին:*

*Կիրակի 13 Փետրուար 2011-ի երե-
կոյեան ժամը 4-ին, հանդիսապետու-*

*թեամբ Վեհափառ Հայրապետին, Մայր
Տաճարին մէջ կատարուեցաւ ժամեր-
գութիւն եւ նախատօնակ՝ Քրիստոսի
քառասնօրեայ Տաճար Ընծայման տօնին
առիթով: Հարիւրաւոր մայրեր լեցու-
ցած էին Մայր Տաճարը, Սուրբ Աստուա-
ծամօր օրինակով իրենց նորածին երե-
խաները շալկած, ընծայելու համար
զանոնք Աստուծոյ Տան:*

*Վեհափառ Հայրապետը իր պատգա-
մին մէջ յատկապէս այս երեւոյթին
անդրադառնալով, ըսաւ. «Հայ մանուկի
Տարի հռչակեցինք այս 2011 տարին,*



ՎԵՅՎՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՌՈՎ ԿՕՐՅԷ ԻՐԵՆ ՄԱՏՈՒՅՈՒՈՂ ՄԱՆՈՒԿ ՄԸ



ԱՌԱՋԻՆ ԲՈՑԸ ՎԵՂԱՓԱՌ ԳԱՅՐԱՊԵՏԸ ԿՈՒ ՏԱՅ
ՇՐՋԱՓԱԿԻՆ ՄԷՋ ՎԱՌՈՒԵԼԻՔ ԱԲԱՆԴԱԿԱՆ ԽԱՌՈՅԿԻՆ

առաւել եւս շեշտելու համար մեր գաւակներուն դաստիարակութեան անժամանցելի հանգամանքը: Մանուկները մեր վաղն իսկ են, եւ վաղն ուշ չէ՛. անիկա միայն ակնթարթ մը հեռու է մեզմէ: Քրիստոնէական ու հայեցի դաստիարակութեամբ, ու Աստուծոյ ամենատես աչքերուն դիմաց պէտք է կրթենք մեր գաւակները, որոնք երկնաւոր մեր Հօր պարգեւն են մեզի տրուած իրրեւ աւանդ: Մեր մանուկներէն կախեալ է մեր ազգի, եկեղեցւոյ ու հայրենիքի ապագան», *ըսաւ Վեհափառ Հայրապետը: Ապա, Նորին Սրբութիւնը ընդգծեց Հայ Դպրոցին կենսական տեղն ու դերը մեր մանուկներու հոգեմտաւոր կազմաւորման մէջ, ըսելով. «Հայ Դպրոցն է հայ մանուկին տեղը: Օտար վարժարաններ յաճախելու երեւոյթը խորթ է մեր ազգային նկարագրին: Մեր մանուկները յանցաւոր չեն երբեք, այլ այն ծնողները, որոնք օտարին*

օտարացնող գիրկը կը դնեն մեր ազգի ապագայ յոյսը եղող մատղաշ երեխաները: Հայ Դպրոցը միայն ուսում չի՛ ջամբեր, այլ՝ հաւատք, ազգային մշակոյթ ու ցեղային իւրայատկութիւն: Այս իմաստով անիկա մեր գաւակներուն համար կը դառնայ ե՛ւ եկեղեցի, ե՛ւ հայրենիք եւ ամուր տուն, ուր կը պահպանուին մեզի աւանդուած անգին արժէքները» *ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս:*

Հայրապետական պատգամի աւարտին, «Ի գիրկս առեալ» շարականի երգեցողութեան ընթացքին, միաբան հայրեր խորանին շուրջ դարձուցին նորածին մանուկները, անոնց Տաճարի ընծայման կարգը կատարելով: Ապա, «Հայր Մեր»ի հաւաքական երգեցողութենէն անմիջապէս ետք, հաւատացեալներ իրենց ձեռքի լապտերները վառելով, հետեւեցան Վեհափառ Հօր գլխաւորած թափօրին, որ ուղղուեցաւ դէպի Մայ-



ԱՄԵՐԻԿԱՆ ԽԱՐՈՅԿԸ ԿԸ ԲՈՑԱՎԱՌԻ ՇՐՋԱՓԱԿԻՆ ՄԷՋ
ՈՐՈՒՆ ՇՈՒՐՋ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐՈՂ

րավանքի շրջափակը, ուր պիտի վառէր
աւանդական խարոյկը:

Շրջափակին մէջ, Միաբան Հայրերէ
ու Դպրեվանքի սաներէ կազմուած թա-
փօրը խմբուեցաւ աւանդական խարոյ-
կին շուրջ, որուն առաջին կայծը Վեհա-
փառ Հայրապետին օրհնաբաշխ աջով
տրուեցաւ: Այնուհետեւ, Դպրեվանքի
սարկաւազներ եւ սաներ հոգեւոր ու

ազգային երգերով խանդավառեցին
ներկայ բազմութիւնը: Հին աւանդու-
թեան համաձայն՝ ներկաները երեք ան-
գամ կրակին շուրջը դարձան եւ արա-
րողութեան աւարտին, մեր հայրերուն
հաւատքով ու մեր ազգային աւանդու-
թիւններով գորացած, իրենց մոմերը վա-
ռելով տուն վերադարձան, որպէսզի
վառեն իրենց տան ճրագը:



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Հինգշաբթի օր հանդիսաւոր կերպով նշուեցաւ Վարդանանց տօնը Անթիլիասի Մայրավանքին մէջ: Առաւօտեան, Մայր Տաճարին մէջ սուրբ եւ անմահ պատարագը մատուցը Գերշ. Տ. Կորիւն Արք. Պապեան, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին: Պատարագին ներկայ էին Ղարաբաղի Վարչապետ Արա Յարութիւնեան, Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան եւ այլ պատասխանատու անձեր:

Իր քարոզին մէջ Սրբազանը նախ ընդհանուր պատմական ակնարկ կատարեց Վարդանանց պատերազմը կան-

խող շրջանին, Հայաստանի դիմագրաւած ներքին թէ արտաքին վտանգներուն ու Սասանեան կայսրութեան հեռաւոր նպատակներուն: Ապա, պատարագիչ Սրբազանը յիշեց հայ ժողովուրդի պատասխանը Սասանեան կայսրութեան ուղղուած. ու մեկնելով հայ ժողովուրդի ցուցաբերած հաւաքական կեցուածքէն, ան ըսաւ, թէ Վարդանանց պատերազմէն յաղթական դուրս եկողը եղաւ հայ ժողովուրդը, որովհետեւ քրիստոնէական հաւատքը մնաց կանգուն հայ ժողովուրդի կեանքէն ներս ու հայ ժողովուրդը միակամ էր արտաքին վտանգին դիմաց:



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՈՒՂՂԵ ԻՐ ՊԱՏԳԱՍԸ: Կողքին՝ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Պատարագէն յետոյ, Վեհափառ Հայրապետին հովանաւորութեամբ, Վեհարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր մը, մասնակցութեամբ Դպրեվանքի սաներուն ու միաբանութեան: Ներկայ էին նաեւ Ղարաբաղի Վարչապետը ու Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ ինչպէս նաեւ մեծ թիւով հաւատացեալներ: Խանդավառ մթնոլորտ ստեղծուեցաւ Վարդանանց նուիրուած երգերու ու շարականներու երգեցողութեամբ:

Ապա Վեհափառ Հայրապետը իր պատգամը ուղղեց ներկաներուն, ըսելով. «Եղիշէ Պատմիչին բառերը, թէ՛ այս հաւատքէն մեզ ո՛չ ոք կրնայ խախտել, ո՛չ միայն Վարդանանց հերոսամարտի ոգին կը բնորոշեն, այլ նաեւ հայոց պատմութեան բոլոր ժամանակներուն հաւատքի ու հայրենիքի համար մղուած հերոսամարտերուն: Այս հաւատքն ու ոգին է որ մեր հայրենիքը պահեց, մեր ժողովուրդի միասնութիւնը ամրապնդեց, մեր ազգին

յաւերժութիւնը երաշխաւորեց»: **Իր խօսքը շարունակելով, Վեհափառը ըսաւ.** «նոյն այդ ոգին ու հաւատքը մեր ժողովուրդը մղեց Սարտարապատ, Մայիս 28-ով կերտելու Հայաստանի անկախութիւնը. նոյն այդ ոգին ու հաւատքը մեր ժողովուրդը առաջնորդեց վերահաստատելու իր ինքնանկախ գոյութիւնը Ղարաբաղի հողին վրայ»:
Իր խօսքի ավարտին, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «մեծ իրագործումները հաւատքի ու ոգիի, նուիրումի ու տեսիլքի արդիւնք են: Մեծ իրագործումները Վարդանանցով ու Ղեւոնդ Երեցներով ձեռք կը ձգուին. վկայ՝ մեր ժողովուրդի դարաւոր պատմութիւնը: Այսօր մեր ազգը պէտք ունի նոր Վարդանանց ու Ղեւոնդ Երեցներու, որպէսզի վերանորոգ հաւատքով ու տեսիլքով մեր ազգը առաջնորդեն դէպի նոր յաղթանակներ»:

Հանդիսութիւնը վերջ գտաւ «Կիլիկիա» մաղթերգով, ու «Մեր հայրենիք» քայլերգով:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԻՋԻՆՔԻ ԱՌԻԹՈՎ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Մեծ Պահքի կիսուն՝ Միջինքին, Չորեքշաբթի 30 Մարտ 2011-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Լիբանանի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանին եւ Ազգային Իշխանութեան հրաւէրով, Արեւազայի Ժամերգութեան հանդիսապետելու համար ժամանեց Պէյրուսի Ս. Նշան Մայր եկեղեցին։ Վեհափառ Հայրապետին կ'ընկերանային Միաբան Հայրեր, իսկ Դպրեվանքի ուսանողութիւնը կանուխ ժամերէն եկած էր Պիքֆայայէն, կատարելու համար երգեցողութիւնը։ Մեծ թիւով հաւատացեալներ, Ազգային Առաջնորդարանին կողմէ կատարուած յատուկ տնօ-

րինումով, Պէյրուսի գանազան շրջաններէն, ժողովրդային յատուկ փոխադրամիջոցներով ժամանած ու զրաւած էին իրենց տեղերը ընդարձակ եկեղեցին մէջ։

Լիբանանի Հայոց Թեմի կեանքէն ներս, աւանդութեան վերածուած է արդէն, ամէն տարի Միջինքին հիւրընկալել Վեհափառ Հայրապետը, կիսապաշտօնական Հովուապետական այցելութեամբ, առիթ ընծայելով Հովուապետ եւ հօտ հանդիպման։

Արեւազայի Ժամերգութեան աւարտին, թեմակալ Առաջնորդ՝ Գեղամ Արք. եպիսկոպոս, յանուն Թեմի Ազգ. Իշխա-



ՀԱԲԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԸ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ
ԿԸ ԴԵՏԵՒԻ ԱՐԵՒԱԳԱԼԻ ՀՈԳԵԹՈՎ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

նույնիսկ Կրօնական, Քաղաքական ու Գաւառական ժողովներուն եւ յանուն հաւատացեալ բազմութեան, բարի գալլատեան խօսք ուղղեց Վեհափառ Հայապետին, օրհնաբեր այս այցելութեան աւիթով:

Նորին Սուրբ Օծութիւնը իր հոգեւոր պատգամը փոխանցելէ առաջ, Հայրապետական օրհնութեամբ ու հայրական սիրով ողջունեց Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Իշխանութեան ժողովական բոլոր մարմինները եւ թեմական կառուցները, որոնք իրենց նուիրեալ աշխատանքով եկեղեցւոյ կեանքը վառ կը պահեն, իրենց նպաստը բերելով մեր ժողովուրդի հոգեւոր կեանքի ծաղկումին:

Վեհափառ Հայրապետը Մեծ Պահքը բնորոշեց որպէս ինքնահայեցողութեան, ինքնաքննութեան ու ինքնասրբագրումի շրջան մեր եկեղեցւոյ կեանքէն ներս: Ապա ան ըսաւ, թէ «մեր կեանքը մեղքերով, մոլութիւններով ու չարիքներով շրջապատուած է: Քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ պայքարիլ այդ բոլորին դէմ ու հետեւիլ Քրիստոսի»:

Այս իրողութենէն մեկնած, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ չորս մոլութիւններու, որոնք սկսած են իրենց

ներկայութիւնը գգալի դարձնել մեր կեանքէն ներս: ա) Եսամոլութիւն, բ) Օտարամոլութիւն, գ) Թմրամոլութիւն եւ դ) Փառամոլութիւն: Իւրաքանչիւրին մասին Նորին Սրբութիւնը լայնօրէն անդրադարձաւ, յիշեցնելով անոնց յառաջացուցած բարոյական, կրօնական ու ազգային չարիքները, եւ կոչ ուղղեց ժողովուրդին, ու յատկապէս երիտասարդութեան, հեռու մնալու մեր հոգեւոր ու ազգային ինքնութիւնը ազարտող յիշեալ մոլութիւններէն: (Վեհափառ Հայրապետին պատգամը ամբողջութեամբ կը հրատարակենք մեր ներկայ թիւով, փոխան խմբագրականի: - ԽՄԲ):

Հայրապետական պատգամէն ետք հաւաքաբար երգուեցան «Տէր Ողորմեա»ն ու «Հայր մեր»ը՝ ժողովուրդին մասնակցութեամբ:

Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ ընտանիքը՝ իր Թաղականութեամբ ու Տիկնանց Յանձնախումբով, ի պատիւ Վեհափառ Հայրապետին, պատշաճ հիւրասիրութեամբ պատուեց ներկաները Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ: Ներկայ էին նաեւ Դպրեվանքի սաներ, Ս. Նշանի բարերարներ եւ ազգայիններ:



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՈՒ ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ ԳԻՐՔԻՆ
ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ ՕՐԻՆԱԿԸ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ «Լսենք Աստուծոյ Խօսքը Աստուածաշունչի Ճամբով» խորագրով ձայնասկաւառակներու հաւաքածոն, ամբողջ Նոր Կտակարանը եւ Սաղմոսներու Գիրքը ձեր տրամադրութեան տակ կը



դնէ ձայնագրուած ընթերցանութեամբ: Սոյն ծրագիրին մեկենասութիւնը ստանձնած են, Դպրեվանքի նախկին սարկաւազներէն՝ Բարեշնորհ Մարք Սրկ. Շիրին եւ Բարեշնորհ Բաֆֆի Սրկ. Տէր Սիմոնեան:

Չորս Աւետարանները, Գործք Առաքելոց գիրքը, առաքելական բոլոր նամակները, Յայտնութեան գիրքը եւ Սաղմոսները, անջատ ձայնասկաւառակներով եւ խտացեալ (MP3) ձեւով հրապարակուեցան Անթիլիասի մէջ, օգտակար հանդիսանալու մեր հաւատացեալներուն եւ Հայ Եկեղեցւոյ հովանիին տակ գործող բոլոր հոգեւոր խմբակներուն, արդիական միջոցներով եւս Աստուծոյ Խօսքը տարածելու համար:

Ամէնօրեայ դրութեամբ Աստուածաշունչէն մի քանի հատուածներ կարդալու խրատը տրուած է մեր Հայրերուն կողմէ եւ հաստատուած՝ Եկեղեցւոյ Հայրապետներուն տնօրինումով, որպէս «սնունդ հոգւոյ»: Հայ Եկեղեցւոյ մեծածաւալ հատորներէն հանդիսացող ձաշոց Գիրքը, իւրաքանչիւր օրուան արարողակարգին հետ, նշած է նաեւ այն հատուածները, որոնք եկեղեցւոյ մէջ պիտի կարդացուին:

Առ այդ, եկեղեցւոյ մէջ օգտագործուող «Գրպանի Օրացոյց»ը, շարականներուն ու սաղմոսներուն տեղերը ցոյց տալէ բացի, ինչպէս նաեւ տօնացուցային որոշ հրահանգներ կատարելէ ետք, նաեւ կը նշէ նոյն օրը ընթերցուելիք Աստուածաշնչական հատուածներու տեղերը:

Սոյն հաւաքածոյով ներկայացուածը, Աւետարաններէն սկսեալ մինչեւ Յայտնութեան Գիրքը, առաւել Սաղմոսներու Գիրքն է հերթականութեամբ ընթերցուած, որպէսզի ներկայ խճողեալ կեանքի ընթացքին, երբեմն տան կամ գրասենեակին մէջ, նոյնիսկ ինքնաշարժով ճամբորդած ժամանակ, առիթ ունենայ Հայ հաւատացեալը ունկնդիր դառնալու Աստուծոյ Խօսքին: Այս աշխատանքը կատարուած է նաեւ նկատի առնելով հայերէն կարդալու դժուարութիւն ունեցող սերունդը, ինչպէս նաեւ տարեց այն սերունդը, որ տեսողութեան դժուարութիւն ունի:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Երեքշաբթի 8 Փետրուար 2011-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին նախագահութեամբ Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցաւ միջ-եկեղեցական համդիպում: Ներկայ էին Պէյրութի մարտնիթ Առաջնորդ Մաթար Արքեպիսկոպոս՝ Կաթողիկ Եկեղեցիներուն կողմէ, Մեթրոպոլիտ Ճորճ Սալիպա՝ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներուն կողմէ, եւ Դոկտ. Հապիպ Պատրը՝ Աւետարանական Եկեղեցիներուն կողմէ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին առնչուած շարք մը կեն-

սական հարցեր: Նկատի ունենալով Միջին Արեւելքէն ներս տիրող ընդհանուր կացութիւնը ու յատկապէս՝ Եգիպտոսի դիմագրաւած դժուարութիւնները, որոշուեցաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Գործադիր Վարչութեան բացառիկ նիստ մը գումարել Կիպրոսի մէջ: Նաեւ՝ որոշուեցաւ յառաջիկայ Նոյեմբերին տեղի ունենալիք համաժողովի նախապատրաստական աշխատանքները արագացնել: Աշխատանքային հանդիպման ընթացքին նաեւ քննարկուեցան Խորհուրդի տնտեսական ու վարչական մարզերուն առնչուած հարցեր:



Զախէն աջ.- ԴՈԿՏ. ՀԱՊԻՊ ՊԱՏՐ, ՄԵԹՐՈՊՈԼԻՏ ՍԱԼԻՊԱ, ԿԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ՄԱԹԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՄԵԹՐՈՊՈԼԻՏ ԾՈՐԾ ՍԱԼԻՊԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻ

Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, Երեքշարթի, 8 Փետրոս 2011ի գիշերը, Ասորի Ուղղափառներու լեռնալիրանանի Առաջնորդարանի սրահին մէջ, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան եւ Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան ներկայ գտնուեցան Ասորի Ուղղափառներու լեռնալիրանանի Առաջնորդ Մեթրոպոլիտ Ճորճ Սալիպայի եպիսկոպոսական ձեռնադրութեան 30-ամեակի

գեղարուեստական հանդիսութեան:

Այս առթիւ, Վեհափառ Հայրապետը Օրհնութեան եւ շնորհաւորութեան Գիրք յղած էր, որուն մէջ կ'ընդգծէր մեծարեալին հովուական, վարչական, միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական բարեմասնութիւնները եւ անոր կը մաղթէր աստուածահաճոյ սպասաւորութեան շարունակման առաւել կորով:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ

16 Փետրոս 2011, Ժրնեւի իր կեդրոնատեղիին մէջ, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը սկսաւ գումարել իր Կեդրոնական Վարչութեան ժողովը:

Սոյն ժողովին, յանուն Հայ Եկեղեցոյ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութենէն մասնակցեցան Գերշ. Տ. Վիգէն Արք. Այբազեան եւ Երէցկին Փօլա Տելէճեան ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան եւ Դոկտ. Նորա Պայրազտարեան-Գապազեան:

Առաջին օրը, բացման հաւաքական աղօթքէն ետք, ժողովականներ լսեցին Ատենապետ Դոկտ. Ուոլթըր Օլթմանի եւ Ընդհ. Քարտուղար Դոկտ. Թվէյթ Օլավ Ֆիքսէի զեկոյցները ու կատարեցին համապատասխան քննարկումներ:

17 Փետրոսարի առաւօտեան նիստին, Նարեկ Սրբազան խօսք առնելով անդրադարձաւ «Փոփոխուող Եկեղեցա-

կան Իրավիճակը» նիւթին եւ ընդգծեց գաղթականութեան, համաշխարհայնացման, աշխարհականացման, առաքելութեան եւ միջ-եկեղեցական յարաբերութիւններուն ունեցած ազդեցութիւնը քրիստոնեաներու վկայութեան վրայ:

Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին կողմէ ժողովին մասնակցեցաւ Տիկ. Սեղա Խտըշեան, իսկ Հայ Եկեղեցոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան կողմէ՝ Ռազմիկ Միքայէլեան:

Քննարկելէ ետք 2013ին Քորիայի մէջ գումարուելիք Համաժողովին նախապատրաստական աշխատանքներն ու 2011ին Ճամէյգայի մէջ գումարուելիք Խաղաղութեան Միջազգային Հաւաքին վերջնական փուլերը, ժողովը ձեռնարկեց իր յանձնախմբային աշխատանքներուն: Այս բնագաւառէն ներս, Նարեկ Սրբազան վարեց Եկեղեցական Յարաբերութիւններու Յանձնախումբին ատենապետութիւնը, Նորա Պայրազտար-

եան-Պապագեան մասնակցեցաւ Միջազգային Հարցերու Յանձնախումբին եւ խաղաղութեան Միջազգային Հաւաքի Պատգամի Խմբագրման Յանձնախումբի քննարկումներուն եւ Սեդա Խտրչեան Միջին Արեւելքի Հարցերու Յանձնախումբի աշխատանքներուն:

21 Փետրուար 2011, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան եւ Դոկտ. Նորա Պայրազտարեան-Պապագեան հանդիպում ունեցան Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհ. Քարտուղար Դոկտ. Թվէյթ Օլավ Ֆիքսէի հետ եւ անոր փոխանցեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի ողջոյններն ու

միջ-եկեղեցական շարժման գծով ունեցած պատկերացումներն ու ակնկալութիւնները: Անոնք նաեւ ընդգծեցին, թէ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը պէտք է առաւել ուշադրութիւն ընծայէ Միջին Արեւելքի մէջ քրիստոնէութեան ներկայութեան եւ վկայութեան ու այս ուղղութեամբ գործնական առաջարկներ կատարեցին:

21-22 Փետրուար, յանձնախումբերու զեկոյցներու ներկայացումով եւ հաւաքական աղօթքով աւարտեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական Վարչութեան ժողովը:

ԱՍԻՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԲՈՐՍԱՆ ՄԻԱԲՈՐԻ ԺՈՂՈՎ

2010 թուականի Ապրիլ ամսուն Իրանի Հայոց ուղղափառ Առաքելական Եկեղեցին անդամակցեցաւ Ասիոյ Քրիստոնէական Եկեղեցիներու Խորհուրդին (Christian Conference of Asia - CCA):

Աւելի քան 53 տարուայ անցեալ ունեցող ասիական քրիստոնէական այս կազմակերպութեան անդամ են Ասիայէն 21 տարբեր երկիրներու եկեղեցիներ: Իրանի Հայոց Առաքելական ուղղափառ եկեղեցին իբրեւ նորամուտ անդամ մասնակցեցաւ երեք ներկայացուցիչներով: Յայտնենք, որ Իրանի երեք թեմերը որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը վայելող թեմեր, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հետեւողական ջանքերով անդամակցեցան CCA-ին:

Թեհրանի Հայոց թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Ս. Արք. Սարգիսեանը CCA-ի ընդհանուր յանձնաժողովի մնայուն անդամ է: Թեմէն երկու անձեր՝ Անաշէ Բեգիջանեանը, (հաւատք, առաքելութիւն եւ միութիւն) FMU Միաւորի եւ Արագ Խուղարախչեանը (միջ-եկեղեցական կազմաւորման, սեռային ար-

դարութեան եւ երիտասարդութեան զօրեղացման) EGY Միաւորի մնայուն անդամներն են:

2011 թուականի Փետրուար 9-12 Հնդկաստանի Նիւ Տելհի քաղաքին մէջ կայացաւ EGY միաւորի հանդիպումը: Այս ժողովին Իրանի Հայոց եկեղեցին կը ներկայացնէր EGY-ի մնայուն անդամ Արագ Խուղարախչեանը:

Չորս օրերու վրայ ձգուած այս ժողովը իր տեսակին մէջ իւրայատուկ էր, որովհետեւ լրջօրէն զբաղեցաւ իր հիմնական առաքելութեամբ եւ այս առիթով եղան լուրջ խորհրդակցութիւն եւ կարծիքներու փոխանակում:

Այս ուղղութեամբ առիթ տրուեցաւ իւրաքանչիւր մասնակցողի, որպէսզի ներկայացնէ իր երկիրը, եկեղեցին եւ քրիստոնեաներու դիմագրաւած մարտահրաւէրները եւ համապատասխան կիռարուած ելքերը: Արագ Խուղարախչեանը սահիկներու միջոցով ներկայացուց իր տեղեկագրական զեկոյցը՝ Հայ Առաքելական Եկեղեցոյ մասին, որ բաւական հետաքրքրութիւն ստեղծեց մասնակցողներուն մօտ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԱՍԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ «ՀԱԼԱՏՔ ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ» ՄԻԱԴՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ

Ասիոյ Քրիստոնէական Համաժողովի «Հալատք, Քարոզչութիւն եւ Միութիւն» Միաւորի ժողովը տեղի ունեցաւ Փետրուար 10-12 Թայլէնտի մայրաքաղաք Պանքոքի մէջ:

Սոյն ժողովին կը մասնակցէին ասիական եկեղեցիներէն գանազան երկիրներ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը ներկայացնէր Օրդ. Անաչէ Բեգիշանեանը իբրեւ մնայուն անդամ սոյն Միաւորին:

Ժողովական նիստերը կը սկսէին բացման աղօթքով, պաշտամունքով ու խորհրդածութեամբ, ինչպէս նաեւ Աստուածաշնչական սերտողութեամբ ու մեկնաբանութեամբ:

Համագումարի ընթացքին, մասնա-

կիցներէն իւրաքանչիւրը գեկուցում ներկայացուց իր երկրին իւրայատուկ հարցերուն մասին, եւ իր եկեղեցւոյ մօտեցումը՝ այդ հարցերու լուծման գծով:

Մասնակիցները նաեւ քննարկեցին «Հալատք, Քարոզչութիւն եւ Միութիւն» Միաւորին 2011-2015 տարիներու համար առաջարկուած պիւտճէն եւ առաջադրուած ծրագիրները:

Ժողովական նիստերու ընթացքին արծարծուեցաւ նաեւ Ասիոյ Քրիստոնէական Համաժողովի ակնկալիքը՝ անդամ եկեղեցիներէն: Յայտնենք, որ ժողովականներուն ամփոփ ծանօթութիւն տրուեցաւ Իրանահայութեան, Հայ եկեղեցւոյ ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասին:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԱՍԻՈՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

6-10 Մարտ 2011, Ասիոյ Քրիստոնէայ Եկեղեցիներու Ընդհանուր Յանձնաժողովը իր ժողովը գումարեց Զանգ-մայի մէջ (Թայլէնտ): Ժողովին իր գործօն մասնակցութիւնը բերաւ Թեհրանի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանը, որ ներկաներուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ողջոյններն ու յաջողութեան բարեմաղթութիւնները եւ ապա ներկայացուց Հայ Եկեղեցին ու իրանահայ համայնքը:

Ժողովին ներկայացուեցան Հալատք, Առաքելութիւն եւ Միութիւն եւ Միջ-եկեղեցական Կազմաւորում Միաւորներուն գործունէութեան գեկոյցները: Ընդհանուր Յանձնաժողովը նաեւ քննարկեց վարչական եւ տնտեսական Միաւորներու առաւել աշխուժացման օրակարգերը:

Ժողովական աշխատանքներուն առընթեր, Սեպուհ Սրբազան հանդիպում ունեցաւ Ասիոյ Եկեղեցիներու Համաժողովի Ընդհանուր Քարտուղար Վեր. Դոկտ. Հենրիէթ Հոլթապաթ Լեպանգի հետ:

Ասիոյ Քրիստոնէայ Եկեղեցիներու Համաժողովին կ'անդամակցին Ասիոյ 22 երկիրներու Եկեղեցիները: Համաժողովը կազմուած է 1957ին եւ երախտարժան գործ կը կատարէ Ասիոյ Եկեղեցիներու յարաբերութիւններու սերտացման եւ համատեղ գործակցութեան բնագաւառին մէջ: 2010ի Ապրիլին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հետեւողական ջանքերուն շնորհիւ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Համաժողովին անդամակցեցաւ Իրանի իր երեք թեմերուն միջոցաւ:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Երկուշաբթի 21 Փետրուար 2011-ի առաւօտուն պաշտօնական այցելութիւն մը տուաւ Լիբանանի Հանրապետութեան Նախագահ Զօր. Միշէլ Սուլէյմանին, Պաապտայի Նախագահական ապարանքին մէջ: Վեհափառ Հայրապետին կ'ընկերանար հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Պրն. Յակոբ Բագրատունի:



Հանդիպման ընթացքին Վեհափառ Հայրապետը տեղեակ պահեց Հանրապետութեան Նախագահը թէ ինք պիտի մեկնի Քաթար, հրաւերովը Քաթարի Էմիրին: Խօսակցութեան ընթացքին նաեւ արծարծուեցան կառավարութեան կազմին ինչպէս նաեւ Լիբանանի ընդհանուր կացութեան առնչուած հարցեր:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒՆԵՑ ՂԱՐԱՔԱՂԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ**

Երեքշաբթի 1 Մարտ 2011-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Վեհաբանին մէջ ընդունեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Վարչապետ Արա Յարութիւնեանը: Հանդիպման ներկայ էին նաեւ Վարչապետին ընկերացող պատուիրակուծիւնը, ինչպէս նաեւ՝ Ղարաբաղի օժանդակութեան Լիբանանի յանձնախումբը:



Վեհափառ Հայրապետը ողջունեց Ղարաբաղի Վարչապետին այցելութիւնը, շեշտելով՝ Ղարաբաղի տնտեսական հզօրացման Սփիւռքի հայութեան կողմէ կատարուող օժանդակութեան հրամայականը: Պարոն Վարչապետը իր կարգին գնահատանքով արտայայտուեցաւ Ղարաբաղի հզօրացման աշխատանքներուն մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գործօն դերակատարութեան:

Նոյն օրը, երեկոյեան, ի պատիւ Ղարաբաղի Վարչապետին տրուած ընդունելութեան ընթացքին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը կոչ ուղղեց հայ ժողովուրդին գործնապէս զօրավիգ կանգնելու Ղարաբաղին: Ան ըսաւ «Անկախութիւնը արիւնով ձեռք կը ձգուի, իսկ անկախութիւնը պահելը՝ զոհողութեամբ: Մեր հերոսները իրենց արիւնը թափեցին Ղարաբաղի ազատագրութեան համար: Այսօր մեզմէ իւրաքանչիւրին պարտաւորութիւնն է ձեռք ձգուած անկախութիւնը պահել ու ամրապնդել: Սա իւրաքանչիւր հայու սրբազան պարտաւորութիւնն է. ուր որ ալ գտնուի ան, ինչ պայմաններու մէջ ալ ապրի, իրեն համար նուիրական պար-

տականությունն պետք է նկատե գործնապես աջակից դառնալ Ղարաբաղի տնտեսական հզորության ձգտող բոլոր աշխատանքներում»:

Վեհափառ Հայրապետը շարունակելով իր խօսքը ըսավ՝ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսությունը իր միաբանությամբ իր թեմական իշխանություններով ու իր ժողովուրդով, միջոտ զօրավիզ կանգնեցաւ Ղարաբաղեան պայքարին: Այսօր Ղարաբաղի մեր բանակը գիշեր ու ցորեկ արթուն կը հսկէ մեր ժողովուրդի ապահովութեան: Մեր պարտականությունն է մասնակից դառնալ Ղարաբաղի տնտեսական հզորացման, գործնապես օգտակար ըլլալ մեր ժողովուրդի գաւակներուն, որպէսզի Ղարաբաղի մէջ մնան, իսկ տնտեսական պատճառներով Ղարաբաղէն հեռացած հայերը վերադառնան Ղարաբաղ: Հայրենիքը միայն հող չէ, այլ նաեւ ու մանաւանդ՝ ժողովուրդ: Ի՞նչ կ'արժէ հող ունենալ ուր ժողովուրդ չկայ: Մենք պետք է այնպէս ընենք որ մեր ժողովուրդի գաւակները կառչած մնան Ղարաբաղի հողին» եզրակացուց Վեհափառ Հայրապետը:

Նոյն մօտեցումով ու սպասումով իր խօսքը ուղղեց ներկաներուն Ղարաբաղի Վարչապետը: Ան ընդհանուր ակնարկ կատարեց Ղարաբաղի դիմագրաւած մարտահրաւերներուն, ապա ծանրացաւ Ղարաբաղի տնտեսական կարելիութիւններուն ու դժուարութիւններուն: Ան գնահատանքով անդրադարձաւ ընդհանրապէս Սփիւռքին ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Լիբանանի հայութեան ցուցաբերած աջակցութեան, յայտնելով որ իր այցելութեան հիմնական նպատակը Լիբանանի հայութեան տնտեսական զօրակցութիւնը ապահովել է: Ապա Վարչապետը յիշեցուց, որ յառաջիկայ երեք օրերու ընթացքին ան յաջորդաբար հանդիպումներ պիտի ունենայ Լիբանանի հայ գործարարներուն հետ, աւելի լայն կերպով պարզելով անոնց այն միջոցները, որոնցմով կարելի պիտի դառնայ ներդրում կատարել Ղարաբաղի տնտեսական կեանքի առաւել ծաղկման:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇՆՈՐՀԱԻՐԵՑ ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ՊԱՏՐԻԱՐԷ ԲԱԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի 24 Մարտ 2011-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետը պաշտօնական այցելութիւն մը տուաւ Պքերքէ՝ անձամբ շնորհաւորելու շուրջ շաբաթ մը առաջ ընտրուած Պատրիարք Պշարա Էլ-Բաային: Մարոնիթ Պատրիարքին կողքին ներկայ էին նաեւ նախկին Պատրիարք Նասրալլա Սֆէյր եւ մարոնիթ եկեղեցւոյ եպիսկոպոսներ: Իսկ Վեհափառ Հայրապետին կ'ընկերանային Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան՝ Լուսարարապետ Մայր Տաճարի, Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան՝ Առաջնորդ Թեհրանի Հայոց Թեմին, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան՝ Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմին, եւ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմէզեան՝ միջ-եկեղեցական յարաբերութեանց Վարիչ:

Վեհափառ Հայրապետը ջերմօրէն շնորհաւորելով Պատրիարք, Բաային մաղթեց որ գործակցութեան նոր էջ մը բացուի հայ եւ մարոնիթ եկեղեցիներուն միջեւ՝ գործնապէս արտայայտելով եկեղեցւոյ միութիւնը:



Պատասխանելով Վեհափառ Հայրապետին մաղթանքին, Պատրիարք Րաային ըսաւ, թէ մօտէն ծանօթ ըլլալով Վեհափառին լայն փորձառութեան միջ-եկեղեցական գործակցութեան ծիրէն ներս, խորհրդակցութեան ու գործակցութեան լայն հորիզոններ վստահաբար պիտի բացուին երկու եկեղեցիներուն դիմաց:

Ապա երկու հոգեւոր պետերուն միջեւ խօսակցութիւնը կեդրոնացաւ Լիբանանի վրայ: Անոնք շեշտեցին Լիբանանի Զրիստոնեայ-Իսլամ գոյակցութիւնը, պետական կառոյցներու կենսունակութիւնը ու Լիբանանի միութիւնը ու գերիշխանութիւնը աւելի ամրապնդելու հրամայականը եւ այս ուղղութեամբ՝ միասին գործակցելու անհրաժեշտութիւնը:

Վեհափառ Հայրապետը այս առիթով լայն ծանօթութիւններ փոխանցեց նորընտիր Պատրիարքին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վարչական կառոյցին ու անոր առաքելութեան մասին: Նորընտիր Պատրիարքը իր կարգին արծարծեց որոշ կրօնական ու միջ-եկեղեցական բնոյթ ունեցող խնդիրներ՝ իմանալու համար Վեհափառ Հայրապետին տեսակետը այդ գծով:

Յաջորդ օր, Ուրբաթ 25 Մարտ 2011-ին, Վեհափառ Հայրապետը յատուկ շքախումբով ներկայ գտնուեցաւ նորընտիր Պատրիարքի գահակալութեան արարողութեան, որ տեղի ունեցաւ Պքերքէի պատրիարքարանին մէջ, եւ անձնապէս փոխանցեց Հայ Եկեղեցոյ շնորհաւորութիւնները ու բազմաբեղուն գահակալութեան բարեմաղթութիւնները:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝
ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՆԵ-
ՐՈՒ ԵՒ ՀՈԳԵԼՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ**

Կիրակի 13 Փետրուար 2011-ի առաւօտուն Անթիլիասի Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ եւ անմահ պատարագէն յետոյ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Վեհափառ Հայրապետին, հոգեգանգստեան յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ Մայր Տաճարին կից գտնուող «Ջարեհեան Յուշարձան-Դամբարան»ին մէջ: Դամբարանը կառուցուած է 1964-ին եւ հոն ամփոփուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասկան շրջանի հայրապետներու եւ վախճանեալ միաբաններու աճիւնները:

Սուրբ Պատարագէն անմիջապէս ետք, Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ միաբան հայրերէ ու Դպրեվանքի ուսանողներէ կազմուած թափօրը ուղղուեցաւ Մայր Տաճարի հիւսիսակողմը ուր կառուցուած է դամբարանը:

Պատարագիչ Հայր Սուրբը իր քարոզին մէջ անդրադարձաւ հայոց հայրապետներու եւ հայ եկեղեցւոյ սպասաւորներու ճամբով ծաւայած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր առաքելութեան, որուն շարունակողն է Ս. Աթոռոյս այժմու գահակալը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, շրջապատուած Կիլիկեան Ս. Ուխտի միաբանութեամբ:

Դամբարանին մէջ կատարուած հոգեհանգստեան արարողութեան ընթացքին յիշուեցան Անթիլիասի մէջ հանգչող, թէ պայմաններու բերումով Մայրավանքէն դուրս թաղուած միաբան հայ-



րերու անունները: Այսպէս, երանաշնորհ Սահակ Բ, Բարգէն Ա, Պետրոս Ա, Գարեգին Ա, Ջարեհ Ա, Խորէն Ա. եւ Գարեգին Բ. Հայրապետները: Այլեւ՝ Ծահէ Արք. Գասպարեան, Արտաւազդ Արք. Սիրմէեան, Փառէն Եպս. Մելքոնեան, Սմբատ Ծ. Վրդ. Սայպաշեան, Եփրեմ Արք. Տոհմունի, Խորէն Վրդ. Թաշճեան, Եղիշէ Արք. Կարոյեան, Դերեմիկ Եպս. Փոլատեան, Խաղ Արք. Աջապահեան, Գէորգ Ծ. Վրդ. Կարպիսեան, Տաճատ Արք. Ուրֆալեան, Հրանդ Արք. Խաչատուրեան, Պարոյր Վրդ. Էքմէլքճեան, Ներսէս Արք. Բախտիկեան, Արտակ Արք. Մանուկեան, Սահակ Արք. Այվազեան եւ Մեսրոպ Արք. Աշճեան, Ջարեհ Արք. Ազնաւորեան, Վարդան Արք. Տէմիրճեան, Ղեւոնդ Արք. Չէպէլեան, Նշան Եպս. Թօփուզեան եւ Սմբատ Արք. Լափաճեան:

Տարեկան սովորութեամբ կատարուող հաւաքական սոյն հոգեհանգիստը առիթ հանդիսացաւ անդրադառնալու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճամբով կատարուող մեր եկեղեցւոյ ծառայական առաքելութեան:

Մամուլին համար իր արտայայտած խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը յատկապէս ըսաւ. «Այսօր երբ կ'աղօ-

թեմք մեր նախնիներու հոգիներուն խաղաղութեան համար, կը յիշենք անոնց ծառայութիւնը: Թէ՛ մեր նախորդ երանաշնորհ Հայրապետները, եւ թէ հոգելոյս Միաբանները իրենց ծառայութեան լուսն ձգեցին մեր ազգի ու եկեղեցւոյ գանձանակին մէջ: Այսօր իրենք չկան ֆիզիքապէս, սակայն իրենց յիշատակը կ'ապրի մեր հաւաքական առաքելութեան ճամբով: Եւ այսօր նոյն առաքելութիւնն է որ կը շարունակուի դարաւոր այս Աթոռի ճամբով. առաքելութիւն մը, որուն նպատակը մէկ եղած է եւ կը մնայ՝ ծառայել Աստուծոյ, հայ եկեղեցւոյ, հայ ժողովուրդին ու մեր հայրեհիքին»:

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԻՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԻՐ
ԵՐԿՐՈՐԳ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Երկուշաբթի 7 Մարտ 2011-ին, Հայ Եկեղեցւոյ ծիսական հարցերու յանձնախումբը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի օրհնութեամբ, իր երկրորդ հանդիպումը գումարեց Անթիլիասի մէջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ սոյն յանձնախումբի անդամներն են՝ Գերշ. Տ. Միքայէլ Եպս. Աջապահեան, Գերշ. Տ. Արշակ Եպս. Խաչատրեան եւ Գերպ. Տ. Վահան Ծ. Վրդ. Յովհաննէսեան: Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան եւ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան:

Ս. Էջմիածնի մէջ, անցնող տաժրուան Օգոստոս ամսուն գումարած իր անդրանիկ ժողովով, սոյն յանձնախումբը սկսած էր քննարկել Հայ Եկեղեցւոյ Սուրբ Մկրտութեան Խորհուրդին առնչուող հարցեր: Ծարունակելով աշխատանքները, ներկայ հանդիպման ընթացքին, յանձնախումբը սկսաւ հանգամանօրէն քննարկել հրատարակուած ծիսարաններու բնագիրները, բաղդատութեամբ հնագոյն ձեռագիրներու, միաձեւ բնագրի պատրաստութեան համար:

Ծիսական յանձնախումբի հանդիպումը յառաջիկայ երեք օրերուն վրայ պիտի տարածուի, ճիշտ ունենալով նաեւ Սուրբ Մկրտութեան Խորհուրդի արարողութեան հետ առնչուող կանոնական, խրատական, ուսուցողական եւ բարեպաշտական այլ հարցեր:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳՆԱՀԱՏԵՑ «ԳԱՅԻԱՆԵԱՑ»
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՔՈՅՐԵՐԸ**

Երեքշաբթի 1 Փետրուար 2011-ին, Անթիլիասի Վեհարանին մէջ ընդունելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Գայիանեաց» Կրօնաւորուհիներու Միաբանութեան քոյրերը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Հայրապետական զնահատանը յայտնեց անոնց, «Թռչնոց Բոյն»ի հայ մանուկներուն նկատմամբ իրենց ցուցաբերած նուիրեալ ծառայութեան համար:

«Գայիանեան» Կրօնաւորուհիներու Միաբանութեան անդամները զեկուցեցին Նորին Սրբութեան, իրենց առօրեայ կեանքին, հաստատութեանն ներս իրենց կրթադաստիարակչական ու վարչական աշխատանքին մասին: Սկսելով կրօնական-հոգեւոր կեանքէն, Միաբանութեան քոյրերը ներկայացուցին իրենց բնակարանի յատուկ աղօթասրահին մէջ տեղի ունեցող առաւօտեան եւ երեկոյեան հաւաքական ժամերգութիւնները, խորհրդածական պահերը եւ առանձնական աղօթքի յատկացուած յատուկ ժամերը: Ապա, առօրեայ աշխատանքային իրենց կեանքին մասին զեկուցելով, Միաբանութեան քոյրերը յայտնեցին Նորին Սրբութեան, որ «Թռչնոց Բոյն»ի մէջ



իրենց վստահուած պարտականութիւնները, թէ՛ վարչական եւ թէ կրթադաստիարակչական, իրենց կարողութեան չափով կը կատարեն, ազգի խնամքին յանձնուած մանուկներուն հոգեւոր կրթութեան հոգ տանելով: Այս առնչութեամբ, անոնք յատկապէս յիշեցին ամէն ամիս Սրբոց Գայիանեաց Մատուռին մէջ տեղի ունեցող սուրբ եւ անմահ պատարագներու ընթացքին աշակերտներուն երգեցողութիւնը եւ խորանին վրայ տղոց սպասարկութիւնը:

Քոյրերը նաեւ ներկայացուցին իրենց Կիրակնօրեայ Դպրոցի ծրագիրը, որ վերջին այս տարին տարբեր մօտեցումով կը կատարեն՝ երեք խումբերու բաժնետով մանուկները, իւրաքանչիւր խումբի տարիքային յարմար յայտագիր կիրարկելով: Անոնք ըսին, թէ մանկավարժական նոր մեթոտներու կիրառումով, Աստուածաշնչային դրուագները մանուկներուն բացատրելու այս աշխատանքը, բաւական ընդունելութիւն գտած է նոյնիսկ մանկապարտէզի երեխաներուն մօտ:

Վեհափառ Հայրապետը ունկնդրելէ ետք Քոյրերուն զեկոյցը վերոյիշեալ աշխատանքային բնագաւառներէն ներս, հայրական թելադրութիւններ կատարեց անոնց, յատկապէս շեշտելով «Թռչնոց Բոյն»ի մանուկներուն հոգեւոր աճման հսկելու անհրաժեշտութիւնը: Այս առիթով Նորին Սրբութիւնը գնահատեց Միաբանութեան Քոյրերը, վերջերս իրենց հրատարակած հոգեւոր բովան-

դակութեամբ գիրքին համար, ուր անոնք իրենց մտածումներն ու քրիստոնէական կեանքի վկայութիւնները բանաձեւած էին: Արամ Ա. Կաթողիկոս նաեւ խրատուեց Քոյրերը աճեցնելու Միաբանութիւնը, նոր անդամներու որդեգրումով, որոնք ծառայական ոգի ունին եւ կրօնաւորուհիի քօղը ստանալու երկնատուր կոչումը կը զգան իրենց հոգիին մէջ:

«Գայիանեաց» Կրօնաւորուհիներու Միաբանութիւնը շուրջ 20 տարիներէ ի վեր հաստատուած ըլլալով Ճիպէյլի «Թռչնոց Բոյն»ին մէջ, իր դռները միշտ լայն բացած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ իգական սեռէն անոնց, որոնք կը փափաքին անդամակցիլ, ու կրօնաւորուհի դառնալով ծառայել Մայրենի Եկեղեցւոյն:

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ՄԱՅՐ ՏԱԺԱՐԻՆ
ՄԷՋ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ԶՈՀԵՐՈՒ
ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Կիրակի, 27 Փետրուար 2011-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին նախագահութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ 1988 թուականի սումկայիթեան ջարդերու անմեղ զոհերուն:

Այնուհետեւ Մայրավանքի Վեհարանի դահլիճին մէջ կազմակերպուած հանդիսութեան ընթացքին խօսք առին Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան, ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան, եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:

Բոլոր խօսք առնողները անդրադարձան 23 տարի առաջ Ազրպէյճանի Սումկայիթ արդիւնաբերական քաղաքին մէջ տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւններուն: Մասնաւորապէս նշուեցաւ, որ 1988 թուականը Լեռնային

Ղարաբաղի պատմության մէջ եղաւ շրջադարձային: Արցախի ժողովուրդը ձայնը բարձրացուց սեփական իրաւունքներու եւ ազատութեան պաշտպանութեան օգտին: Քաղաքակիրթ եւ օրինական իւրաքանչիւր գործողութեան կը հետեւէր բռնութեան ծաւալում, հայ ազգաբնակչութեան իրաւունքներու գանգուածային եւ համատարած ոտնահարում, բռնութիւններ եւ կոտորածներ, տեղահանում, ժողովրդավարական բռնանաւանդում, տնտեսական շրջափակում: Հայ ազգաբնակչութեան նկատմամբ իրականացուեցաւ ամէնէն դաժան ազգային գտումներու տեղահանման քաղաքականութիւն եւ պետականօրէն կազմակերպուած յանցագործութիւն:

Ընդգծուեցաւ, որ միջազգային հանրութիւնը քաղաքական եւ իրաւական լիարժէք գնահատական չէ տուած կատարուածին: Մինչդեռ բոլոր կարելի միջոցները օգտագործուեցան յանցագործութիւններու հանգամանքները թաքցնելու եւ խեղաթիւրելու համար: Իսկ փաստագրական ապացոյցները, ակամատեսներու վկայութիւնները, հաւաքուած փաստերը կը յանգեցնէին միակ աներկբայ եզրակացութեան. ջարդերը, յանցագործութիւններն ու վայրագութիւնները իրականացուած էին Ազըրպէյճանի իշխանութիւններուն կողմէ:

Իր Հայրապետական պատգամին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս շեշտեց կատարուած ջարդերուն լաւապէս ծրագրուած ու գործադրուած ըլլալու երեւոյթը, որ միեւնոյն թուրք ժողովուրդի վարքագիծը կը ներկայացնէ: Վեհափառ Հայրապետը ըսաւ յատկապէս. «Սումկայիթի մէջ տեղի ունեցածը սովորական նախնիք չէր, ոչ ալ ներքին լարուածութեան հետեւանքը: Եղածը կազմակերպուած ցեղասպանութիւն էր հայ ժողովուրդին նկատմամբ: Անկաջարունակութիւնն էր 1915-ի մեծ ցեղասպանութեան»:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին ճամբով նաեւ շեշտեց մեր ժողովուրդի միասնականութիւնը, եւ կոչ ուղղեց յատկապէս ներկայ դժուարին ժամանակներուն, երբ Արցախեան գոյապայքարը դարձեալ հրատապ հարցի բնոյթ կը զգենու, յատկապէս Ատրպէյճանական կրկնուող սպառնալիքներով, ազգային միասնական ճակատ կազմել, մէկդի դնելով ամէն տեսակ տարբերութիւններ ու շահեր:

Հոգեհանգստեան արարողութեան եւ հանդիսութեան ներկայ էին նախարարներ, երեսփոխաններ, հիւրեր Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութենէն, Լիբանանի հայկական բոլոր քաղաքական, բարեսիրական եւ հասարակական կազմակերպութիւններուն ղեկավարները եւ անդամները, լիբանանահայ համայնքի հարիւրաւոր հաւատացեալներ, ներկայացուցիչներ ակադեմական եւ գիտական շրջանակներէն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԸ Կ՛ՈՂՋՈՒՆԷ
«ԱԼԻՔ»Ի 80-ԱՄԵԱԿԸ**

Թերանի մէջ հրատարակուող «ԱԼԻՔ» Օրաթերը այս տարի կը բոլորէ իր հիմնադրութեան 80-ամեակը: Ընդառաջելով այս առթիւ Թերանի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի եւ «ԱԼԻՔ»ի տնօրէնութեան խնդրանքին, Վեհափառ Հայրապետը յատուկ Կոմիտէով իր գնահատանքը յայտնեց «ԱԼԻՔ»ի կատարած առաքելութեան Իրանի հայութեան կեանքէն ներս:

Անդրադառնալով «ԱԼԻՔ»ի բերած կարելոր նպաստին Վեհափառ Հայրապետը իր Կոմիտէին մէջ կը գրէ.– «Արդարեւ սովորական հասկացողութեամբ օրաթերթ մը չեղաւ «ԱԼԻՔ»ը, եւ հետեւաբար, ընթացիկ գործունէութիւն չունեցաւ ան անցնող տարիներու ընթաց-

քին: «ԱԼԻՔ»ը դարձաւ մեծ ընտանիք իր յարակից կառոյցներով ու մարմիններով: «ԱԼԻՔ»ը դարձաւ առաքելութիւն իր մամուլով, հրատարակութիւններով եւ ազգային լայնածաւալ ծառայութեամբ: Եւ հետեւաբար, ան առանցքային ներկայութիւն դարձաւ ո՛չ միայն Թեհրանի այլ նաեւ ամբողջ Իրանի հայութեան կեանքէն ներս: «ԱԼԻՔ»ը եղաւ զօրիչ ամուր կապը Իրանի գանազան շրջաններուն մէջ հաստատուած հայ գաղութներուն միջեւ: Ան եղաւ Իրանի հայութեան կեանքի ազգային, եկեղեցական, կրթական, մշակութային, ընկերային, մարզական ու բարեսիրական երեսներու հարազատ հայելին: Վերջապէս, «ԱԼԻՔ»ը դարձաւ համահայկական իրագործումներուն, տագնապներուն ու ձգտումներուն թարգմանը Իրանի հայութեան կեանքէն ներս:

Ինչպէս ծանօթ է, վերջին տասնամեակներուն պարսկահայութեան կեանքը յատկանշուեցաւ լուրջ մարտահրաւերներով, որոնց յաղթահարման մէջ մեծ եղաւ մեր ազգային հաստատութիւններուն, որոնց շարքին նաեւ «ԱԼԻՔ»ին դերը: Վեհափառ Հայրապետի վկայութեամբ՝ «Հակատակ Իրանէն ներս տեղի ունեցած վերիվայրումներուն, ինչպէս նաեւ իր դիմագրաւած բազմաթիւ ու բազմազան դժուարութիւններուն ու մարտահրաւերներուն, «ԱԼԻՔ»ը մնաց կանգուն ու տոկուն՝ հաւատարմօրէն կառչած իր ազգային կոչումին ու մշակութային առաքելութեան: Արդարեւ, Իրանի հայութեան ժամանակակից պատմութեան մէջ մեծ եղաւ դերը «ԱԼԻՔ»ին: Փաստօրէն, կարելի չէ հասկնալ Իրանի հայութեան կեանքը վերջին ութսուն տարիներուն, առանց «ԱԼԻՔ»ին»:

Ապա Վեհափառ Հայրապետը կոչ կ'ուղղէ «ԱԼԻՔ»ին՝ վերանորոգ հաւատքով ու տեսիլքով շարունակելու իր ազգային առաքելութիւնը:

«ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՐՈՒ ՏԱՐԱԾՔՆԵՐԷՆ ՄԷԿՆ Է»
Ըսաւ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը հրատարակչական աշխատանքը միշտ նկատած է իր համազգային առաքելութեան կարեւոր մարզերէն մէկը: Անցնող տասնամեակներուն Վեհափառ Հայրապետներու նախածեռնութեամբ ու քաջալերանքով կարեւոր հրատարակութիւններ կատարուած են Անթիլիասի կողմէ: Արդարեւ, թէ՛ Մայրավանքի տպարանը, թէ՛ Գալուստ Կիլիպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը եւ թէ Կաթողիկոսարանէն ներս հաստատուած հրատարակչական հիմնադրամները անցնող տարուան ընթացքին լայն գործունէութիւն ունեցած են հրատարակչական աշխատանքի իմաստով:

Խօսելով այս մասին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Հայ գիրքը մեր Սուրբ Աթոռին համար կը մնայ սրբազան արժէք: Հետեւաբար, հայ գրքին տպագրութիւնը ու տարածումը մեր առաքելութեան առաջնահերթութիւններէն մէկն է: Հայ գրքին արժէքը բազմակողմանի է, անոր տեղը հայ կեանքէն ներս առանցքային է ու դերը՝ վճռական: Ահա թէ ինչու մեր Սուրբ Աթոռին հայրապետները յատուկ կարեւորութիւն տուած են հայ գրքին՝ հայ գիրք տպելով, ցուցահանդէսներ կազմակերպելով, հայ գրքի տարածումը քաջալերելով: Նաեւ Մենք կը փորձենք շարունակել մեր Կաթողիկոսութեան յանձնառութիւնը այս ուղղութեամբ: Մայրավանքի տպարանը միշտ կը գործէ. Գալուստ Կիլիպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը իր վաստակաշատ ու հայազէտ տնօրէնին՝ Դոկտ. Զաւէն Եկաւեանին առաջնորդութեամբ գործնապէս կը քաջալերէ

Կաթողիկոսարանի հրատարակչական աշխատանքները. Կաթողիկոսարանէն ներս հաստատուած հրատարակչական հիմնադրամները կը շարունակեն իրենց գործունէութիւնը: Պիտի ուզենք որ մեր մտաւորականները գիրք գրեն, ուսումնասիրութիւններ կատարեն. հրատարակութեան համար լուրջ գործեր պատրաստեն: Մենք պատրաստ ենք ընդառաջելու որակաւոր աշխատասիրութիւններու: Սակայն աւելին՝ մենք կ'ուզենք որ մեր ժողովուրդի զաւակները գիրք ունենան ու գիրք կարդան: Հայ տան կարելոր անդամներէն մէկը պէտք է դառնայ հայ գիրքը: Գիրքը գրադարանները զարդարելու համար չէ, այլ կարդացուելու համար. ան հոգեմտաւոր հարստացման աղբիւր է»:

Տպագրութեան առընթեր հայ գիրքի տարածումը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար հիմնական մտահոգութիւն է: Այս գծով, որպէս քաջալերանք հայ գիրքի տարածման, Կաթողիկոսարանի հրատարակութիւնները անվճար կը տրամադրուին բոլոր հաստատութիւններուն ու դպրոցներուն եւ զանազան առիթներով՝ մեր մտաւորականներուն:

**ԹԱՆԿԱՐԺԷՔ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ
ՀԱՒԱՔԱԾՈՅ ՆՈՒԷՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ
«ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻՆ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանը աւելի հարստացաւ թանկարժէք հին ժամացոյցներու հաւաքածոյով: Սոյն հաւաքածոն նուիրուեցաւ Միլանոյի (Իտալիա) մէջ հաստատուած ազգային բարերար Տէր եւ Տիկին Հրանդ Բամպակեանի կողմէ:

Յիշեալ հաւաքածոն կը բաղկանայ 73 թանկարժէք ժամացոյցներէ, որոնք կը պատկանին 16-19րդ դարերուն եւ կը կրեն այդ շրջաններու լաւագոյն վաճա-

ռանիշերը: Հանգուցեալ Հրանդ Բամպակեան մասնագէտ ըլլալով հին ժամացոյցներու անձամբ անոնց նկարահանումը կատարած է եւ ֆրանսերէն լեզուով մանրամասն տեղեկութիւններ հայթայթած իւրաքանչիւր ժամացոյցի մասին յստուկ քաթալոկով մը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ներկայութեամբ յիշեալ ժամացոյցները գետեղուեցան «Կիլիկիա» թանգարանին մէջ, որուն նաեւ մէկ սրահին բարերան է Հրանդ Բամպակեանը:

Վեհափառ Հայրապետը հանգուցեալ բարերարի եղբոր Տէր եւ Տիկին Վազգէն եւ Վարդ Բամպակեանին գրած նամակին մէջ ըսաւ. «Յատուկ ուրախութեամբ կ'ուզենք Ձեզի յայտնել, որ Ձեր սիրելի եղբոր եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սիրելի բարեկամ ու բարերար Հրանդին նուիրած թանկարժէք ժամացոյցները արդէն իսկ գետեղուած են Մայրավանքի «Կիլիկիա» թանգարանին մէջ: Վստահ ենք որ այցելուները հիացումով պիտի դիտեն հնագիտական մեծ արժէք ունեցող ժամացոյցներու հաւաքածոն: Արդարեւ, Մենք մօտէն ճանչցանք Հրանդը իր բազմակողմանի տաղանդներով ու իր մէջ միշտ գնահատեցինք հայ եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու մեր մշակութային արժէքներուն նկատմամբ իր ցուցաբերած բարձրագոյն աստիճանի հաւատարմութիւնը ու նախանձախնդրութիւնը: Թող Աստուած երկնքի թագաւորութեան մէջ հանգչեցնէ Հրանդին եւ իր Տիկնոջ՝ Անահիտին հոգիները»:

**ԳԵՐՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՓՐՈՖ.
ՄԱՐԹԻՆ ԹԱՄՔԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Երեքշաբթի 1 Փետրուար 2011-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ կայացած Միաբանական հանդիպման ներկայ գտնուեցաւ Գերմանիոյ Կէօթիկընի Հասակարանի Աստուածաբանական Բա-

ժանմուռքի 'Դեկան' Փրոֆ. Մարթին Թամբը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ եւ նախագահութեամբ տեղի ունեցած սոյն հանդիպման ընթացքին, որուն ներկայ գտնուեցան նաեւ Դպրեվանքի սարկաւազներ եւ կիսասարկաւազներ, Փրոֆ. Թամբը ներկայացուց յատկապէս Հայոց Յեղասպանութեան արխիւներու ուսումնասիրութեան գծով կատարած իր աշխատանքները:

Գերման աստուածաբանը, որ միաժամանակ մասնագէտ է Հայոց Յեղասպանութենէն թիւով ամէնէն շատ լուսանկարներ առած Արմին Թ. Վէկների կեանքին ու հայութեան բերած նպաստին, ներկայացուց անոր ներդրումը հայկական պահանջատիրութեան: Փաստօրէն այն պատմական լուսանկարները որոնք Հայոց Յեղասպանութեան ամէնէն զգայացուց պատկերները կը ներկայացնեն, առնուած են վերոյիշեալ գերմանացի անձին կողմէ, որ 1915-ին իբրեւ Կարմիր Խաչի պաշտօնեայ կը ծառայէր գերմանական բանակին մէջ: Դասախօսութեան միջոցին, Թամբը ցուցադրեց այն լուսանկարները, որոնք Վէկների ձեռամբ լուսանկարուած են, որոնցմէ իւրաքանչիւրին առնուած տեղին բացատրութիւնը տուաւ ներկաներուն: Փրոֆ. Թամբը նաեւ ներկայացուց Արմին Թ. Վէկների կատարած հարցազրոյցները Յեղասպանութենէն ճողոպրած անձերու հետ: Վկայութիւնները՝ որոնք պատմական անհերքելի փաստեր են:

Ան նաեւ յայտնեց, թէ նոյն համալսարանին կողմէ իր ջանքերով հրատարակուող մատենաշարին մէջ յատուկ տեղ յատկացուած է Հայ Եկեղեցւոյ ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ իր Աթոռանիստը ունի Միջին Արեւելքի մէջ:

Վեհափառ Հայրապետը այս առիթով իր բարձր գնահատանքը յայտնեց Փրոֆ. Մարթին Թամբըին, յատկապէս

Հայ Եկեղեցւոյ, ու ընդհանրապէս Ուղղափառ Եկեղեցիներու հանդէպ իր մասնագիտական հետաքրքրութեան համար: Նորին Սրբութիւնը նաեւ իր գնահատանքը յայտնեց անոր, Հայոց Յեղասպանութեան ի նպաստ իր կատարած ներդրումին, եւ յատուկ ուսումնասիրութիւններով, հայասէր գերմանացի Արմին Թ. Վէկների կատարած աշխատանքը լուսարձակի տակ բերելու ճիշտութեամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԾԻՍԱԳԷՏՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԳԻՒԱՆԸ

Ծարաթ 5 Փետրուար 2011-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոս իր գրասենեակին մէջ ընդունեց ծիսագէտներու միջազգային կազմակերպութեան Ատենապետ Դոկտ. Պասիլիոս Կրին՝ Աւստրիոյ Կրատ համալսարանէն եւ Դոկտ. Ստեֆանոս Ալեքսոփոլոս (ատենադպիր)՝ Աթէնքի համալսարանէն: Անոնք այցելած էին Վեհափառ Հայրապետին զինք հրաւերելու իր խօսքը արտասանելու 2012-ին Պէյրութի մէջ տեղի ունենալիք յիշեալ կազմակերպութեան միջազգային համագումարին:

Շուրջ տասը տարիներ առաջ կեանքի կոչուած այս կազմակերպութեան մաս կը կազմեն արեւի քան 100 կաթօլիկ, ուղղափառ թէ բողոքական ծիսագէտներ եւ համալսարանի դասախօսներ: Կազմակերպութիւնը կը գումարէ



իր տարեկան համագումարը եւ կը հովանաւորէ ընդհանրապէս աստուածաբանութեան եւ յատկապէս ծիսագիտութեան առնչուած ուսումնասիրութիւններ: Առաջին անգամ ըլլալով կազմակերպութիւնը իր համագումարը կը կազմակերպէ Միջին Արեւելքէն ներս:

ՄԵԹՐՈՊՈԼԻՏ ԺՈՐՃ ՍԱԼԻՊԱ ԱՅՅԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Չորեքշաբթի 16 Մարտ 2011-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետը իր գրասենեակին մէջ ընդունեց Լեռնալիբանանի Ասորի Ուղղափառ Առաջնորդ Մետր. Ծորճ Սալիպայիւն այցելութիւնը:

Մետր. Սալիպա Վեհափառ Հայրապետին փոխանցեց Հնդկաստանի Ուղղափառ եկեղեցւոյ հոգեւոր պետին եղբայրական ողջոյնները: Յայտնեմք, որ վերջերս Մետր. Սալիպա այցելութիւն տուած էր Հնդկաստան: Այս առիթով լայնօրէն քննարկուեցան Հնդկաստանի Ուղղափառ եկեղեցիէն ներս գոյութիւն ունեցող դժուարութիւնները ու մանաւանդ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ներքին միասնականութիւնը ամրապնդելու կարելիութիւնները:

Խորհրդակցութեան միւս դարձաւ նաեւ Միջին Արեւելքի եկեղեցիներու Խորհուրդին առնչուած շարք մը հարցեր: Ծաբաթ մը առաջ Վեհափառ Հայրապետը Կիպրոսի մէջ նախագահած էր ՄԱԵԽԻ Գործադիր Վարչութեան բացառիկ նիստին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՆԵՐ

Հինգշաբթի 31 Մարտ 2011-ի առաւօտուն, Կաթողիկոսարանի Վեհարանէն ներս ընդունելով խումբ մը գերմանացի աստուածաբաններ ու հոգեւորականներ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ շէշտեց քրիստոնէայ-

իսլամ գոյակցութեան կարեւորութիւնը. «նոր երեւոյթ մը չէ միաստուածեան կրօններու գոյակցութիւնը Միջին Արեւելքէն ներս,- ըսաւ Վեհափառը,- դարերու վրայ տարածուած իրողութիւն մըն է ան: Նոյնիսկ շրջանի պատմութեան ամենէն դժուար պահերուն այս երկու կրօնները միշտ կառչած են իրենց խաղաղ գոյակցութիւնը պահպանող հասարակաց արժէքներուն ու սկզբունքներուն: Ծիշդ է, այսօր պայմանները հիմնովին փոխուած են. նոր մարտահրաւերներու դիմաց կը գտնուին քրիստոնէութիւնն ու իսլամութիւնը. սակայն անհրաժեշտ է, որ հասարակաց արժէքներ ու ուսուցումներ ունեցող այս երկու կրօններուն միջեւ գոյակցութիւնը, երկխօսութիւնն ու համակեցութիւնը աւելի ամրապնդուին՝ հեռու մնալով այնպիսի մտածողութիւններէ ու արարքներէ, որոնք կրնան հարցականի տակ առնել դարերու մէջ արմատացած միջ-կրօնական գոյակցութիւնը»: Այս ծիրէն ներս, Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձաւ հայ եկեղեցւոյ դերին, յիշեցնելով, թէ պատմութեան ընթացքին իսլամութեան նկատմամբ հայ եկեղեցւոյ մօտեցումը եղած է խաղաղ գոյակցութեան պահպանումը՝ փոխադարձ յարգանքի ու իրաւունքներու ճանաչումով:

Վեհափառ Հայրապետը նաեւ ընդառաջելով ներկաներու փափաքին, ընդհանուր գծերով անդրադարձաւ հայ եկեղեցւոյ պատմութեան ու առաքելու-



թեան առնչուած շարք մը իւրայատուկ երեսոյթներու, ընդգծելով յատկապէս հին դարերէն ի վեր ժողովուրդին եկեղեցին ըլլալու եւ միջ-եկեղեցական երկխօսութեան մասնակից ըլլալու իրողութիւնը: Վեհափառը խօսեցաւ նաեւ Սփիւռքի մասին, եւ յատկապէս անդրադառնալով այդ ծիրէն ներս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան առաջնահերթութիւններուն:

Աւելի քան ժամ մը տեւող հանդիպման ընթացքին, Վեհափառ Հայրապետը նաեւ արծարծեց ցեղասպանութեան հարցը եւ այդ գծով հայ ժողովուրդի պահանջատիրութիւնը:

Հանդիպումէն ետք, գերմանացի հիւրերը այցելեցին Կաթողիկոսարանի զանազան բաժանմունքները եւ ավելի մօտէն տեղեակ դարձան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան զանազան երեսներուն:

ՎԵՀԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԳՈՒՆԵՑ «ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԵՒ ՆՈՐ ՏՆՕՐԷՆՆԵՐԸ

Երեքշաբթի 1 Մարտ 2011-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետը իր գրասենեակին մէջ ընդունեց Հաուըրտ Գարակէօզեան հաստատութեան Տնօրէն Վերապատուելի Ռոպեր Սարգիսեանը, ընկերակցութեամբ՝ նոր նշանակեալ Տնօրէն Տիար Սերոբ Օհանեանի:

41 տարինէ ի Վերապատուելի Սարգիսեանը կը վարէ Գարակէօզեան հաստատութեան տնօրէնի պաշտօնը: Վերապատուելիին հանգստեան կոչուելէն յետոյ, 1 Յուլիս 2011-էն սկսեալ յիշեալ պատասխանատուութիւնը պիտի ստանձնէ լիբանանահայ երիտասարդ համալսարանաւարտներէն՝ Սերոբ Օհանեան:

Վեհափառ Հայրապետը մեծապէս գնահատեց Վերապատուելիին կատարած նուիրալ ծառայութիւնը եւ յաջողութիւն

մաղթեց նոր տնօրէնին: Այս առթոյժ Վեհափառ Հայրապետը ողջունելով Գարակէօզեան հաստատութեան կարեւոր մարդասիրական ծառայութիւնը հայ կեանքէն ներս մաղթեց որ այդ ծառայութիւնը ավելի ծաւալի որպէսզի առաւելագոյն չափով կարենան օգտուիլ մեր ժողովուրդի զաւակները:

«ՃԻՆԻՇԵԱՆ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՊՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՆԹԻԼԻԱՍ

Երկուշաբթի, 21 Մարտ 2011, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանք այցելեցին Ճինիշեան Բարեսիրական Կազմակերպութեան նորանշանակ գործադիր տնօրէնուհի Տիկ. Էլիզա Մինասեան, օգնական տնօրէն Պրն. Տակ Ուէլշ, համակարգող տնօրէն Պրն. Ամճատ Պապաուի եւ Լիբանանի գրասենեակի տնօրէնուհի Տիկ. Սեդա Փամպուրեան:

Անթիլիասի մէջ, հիւրերը ընդունեց միջ-եկեղեցական յարաբերութիւններու վարիչ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեւմէզեան, որ յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին անոնց բարի գալուստ մաղթելէ ետք, ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բազմաձայ առաքելութիւնը, յատկապէս ծանրանալով ընկերային ծառայութեան բնագաւառին վրայ: Ան ըսաւ, որ մեր Սուրբ Աթոռին համար ընկերային ծառայութիւնը կը մնայ առաջնահերթ՝ ինչպէս Վեհափառ Հայրապետը միշտ կը յիշեցնէ իր խօսքով թէ գործով:

Ազունիէի հիւանդանոցը, Թռչնոց Բոյնը, ժողովրդային տուներու համալիրը, ծերանոցը եւ այլ ընկերային ծառայութեան կեդրոններ, կառոյցներ ու ծրագիրներ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընկերային ծառայութեան շօշափելի արտայայտութիւններն են:

**ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ
ԽՈՐՀՈՒՐԳԻ ԱՅՑՅԵԼՈՒԹԻՒՆԸ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Երկուշաբթի 7 Մարտ 2011-ի յետ-միջօրէին, Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, գլխաւորութեամբ՝ նորընտիր դիւանի ատենապետ Պրն. Յակոբ Գասարճեանին:

Հանդիպման ընթացքին խօսուեցաւ առհասարակ հայութիւնը հերաքրքրող ազգային թէ եկեղեցական զանազան միջոցներու շուրջ:



Այցելութեան իրել եզրափակում, Վեհափառ Հայրապետը տուաւ իր Հայրապետական օրհնութիւնը եւ յաջողութիւն մաղթեց Թէքէեան Մշակութային Միութեան եւ անոր ղեկավար անձնակազմին:

**ԿՈՐԻՒՆ ԱՐՔ. ՊԱՊԵԱՆ
ԿԸ ՎԵՐԱԳԱՌՆԱՅ ՄԱՅՐԱՎԱՆՔ**

Աւելի քան քառասուն տարիներու հովուական ու առաջնորդական պաշտօններէ ետք, Ս. Աթոռոյս երէց միաբաններէն Գերշ. Տ. Կորիւն Արք. Պապեան վերադարձաւ Մայրավանք, Անթիլիաս:

Վերջին ինը տարիներուն, 2002

Մարտէն 2011 Փետրուար, Սրբազանը Կաթողիկոսական Փոխանորդն էր Զուէյթի եւ Ծոցի երկրներու թեմին: Նուիրեալ իր ծառայութիւնը ասարտելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի արտօնութեամբ, Սրբազանը վերադարձաւ Մայրավանք, թէ՛ վանական կեանքի ներքին պատասխանատուութիւններ ստանձնելու եւ թէ՛ նուիրուելու գրական, ուսումնասիրական եւ հրատարակչական աշխատանքներու:

**ՇԱՀԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ ԿԸ
ՆՇԱՆԱԿՈՒԻ ՔՈՒԷՅԹԻ ԵՒ
ԾՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԹԵՄԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԳ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ Դպրեվանքի Տեսուչ Գերաշնորհ Տ. Շահէ Եպս. Փանոսեան նշանակուեցաւ Զուէյթի եւ Ծոցի երկրներու թեմի Կաթողիկոսական Փոխանորդ: 2003-էն Յունուար 2011 սոյն պաշտօնը վարած էր Գերշ. Տ. Կորիւն Արք. Պապեան:

Շահէ Եպիսկոպոս 1980-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Վարած է վանական պաշտօններ, եղած է Թռչնոց Բոյնի եւ Դպրեվանքի Տեսուչ, եւ ծառայած Յունաստանի, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Գանատայի թեմերէն ներս, որպէս հոգեւոր Հովիւ:

**ԲԱՐԵՋԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ**

ա.- ԲԱՐԵՋԱՐԴՈՒՄ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Անցնող վեց ամիսներու ընթացքին, Անթիլիասի Կաթողիկոսարանէն ներս յաջորդաբար իրագործուեցան բարեգարդումի շարք մը ծրագիրներ: Այս-

պէս, Մայր Տաճարի, Ապրիլեան Յուշարձանի, Կաթողիկոսաց դամբարանի եւ բոլոր շէնքերու արտաքին ճակատները մաքրուեցան, Վեհարանի եւ կարգ մը շէնքերու շինարարութեան կիսատ մնացած աշխատանքները ամբողջացան, նորոգութիւններ եղան նաեւ Թանգարանէն եւ Կաթողիկոսարանի այլ շէնքերէն ներս: Մայրավանքի բարեգարդման նիւթապէս օժանդակեց Տիար Գարրիէլ Չէմպէրճեան:

բ.- ԲԱՐԵՉԱՐԴՈՒՄ ՊԻՔՏԱՅԱՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՇՈՒՐՋ

Վեհափառ Հայրապետին անմիջական հսկողութեամբ, եւ Կաթողիկոսարանի Կալուածոց Յանձնախումբի հետեւողական աշխատանքով, բարեգարդման աշխատանքներ սկսած են նաեւ Պիքֆայայի Ապրիլեան Յուշարձանին շուրջ: Այս աշխատանքները կ'ընդգրկեն հետեւեալ ծրագիրները.— Յուշարձանին անմիջական շուրջը գտնուող բակի ընդարձակում, ժայռի վրայ բարձրացած Յուշարձանի շրջապատի վերադասաւորում, դէպի յուշարձան առաջնորդող վանքի բակի ընդարձակում եւ ծառատնկում, Յուշարձանի մաքրութիւն, ժողովրդային լուացարաններու շինութիւն, ինքնաշարժերու յատուկ կառատուն: Այս առիթով նաեւ Անթիլիասի Մայրավանքին մէջ գտնուող միաբանական դամբարանը պիտի փոխադրուի Պիքֆայա:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Երեքշաբթի 1 Փետրուար 2011-ի առաւօտուն, Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի Դեսպան Տիար Աշոտ Զոչարեանը: Հանդիպման ընթացքին արծարծուեցան առաւելաբար Հայաստան-Սփիւռք գործակցութեան, ինչպէս նաեւ՝ Լիբանանի ներքին կացութեան հետ աղերս ունեցող հարցեր:



Ընդառաջելով Հայաստանի դեսպանին առաջարկին, Կիրակի 27 Փետրուարին Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ Անթիլիասի Մայրավանքի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ հոգեհանգիստ՝ Սումկայիթի զոհերու հոգիներուն համար: Նոյն առիթով, հոգեհանգիստէն ամիջապէս յետոյ, Վեհարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ ոգեկոչման յիշատակի ձեռնարկ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Երկուշաբթի 28 Մարտ 2011-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս յաջորդաբար ընդունեց Հայաստանի ու Զուիցերիոյ դեսպանները:

Հայաստանի դեսպանը, Տիար Աշոտ Զոչարեան, եկած էր Վեհափառ Հայրապետէն իմանալու Ապրիլ 24-ի առթիւ

տեղի ունենալիք ձեռնարկներուն մասին, ինչպէս նաեւ տեղեակ պահելու Հայաստանի ու Լիբանանի միջեւ կազմուած տնտեսական ընկերակցութեան մասին: Այս առիթով նաեւ քննարկուեցան յառաջիկայ Հոկտեմբերին Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունենալիք Ֆրիճոֆ Նանսընին նուիրուած հանդիսութիւնը, ինչպէս նաեւ դեսպանատան կողմէ ծրագրուած կարգ մը ձեռնարկներ: Վեհափառ Հայրապետը ողջունելով Հայաստանի ու Լիբանանի միջեւ զարգացող գործակցութիւնը նաեւ շեշտեց, ընդհանրապէս Հայաստանի ու Սփիւռքի միջեւ աւելի կազմակերպուած գործակցութիւն ծաւալելու կարելիութիւնները:

Զուկցերիոյ դեսպանին, Տիկին Ռուֆֆիյնին առաջին այցելութիւնն էր Անթիլիաս: Նոր դեսպան ըլլալով, ան ուզեց որոշ տեղեկութիւններ ունենալ ընդհանրապէս Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու յատկապէս Լիբանանի հայութեան մասին: Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ տեղեկութիւնները ու լուսաբանութիւնները հայթայթելէ յետոյ ընդգծեց Լիբանանի հայութեան կարեւոր դերը, որպէս եօթը գլխաւոր համայնքներէն մէկը Լիբանանի քաղաքական կեանքէն ներս: Ան նաեւ յիշեցուց որ Լիբանանի հայութիւնը առանցքային տեղ ունի սփիւռքի հայութեան կեանքին մէջ: Հանդիպման ընթացքին նաեւ արծարծուեցաւ ցեղասպանութեան ու պահանջատիրութեան հարցը: Վեհափառ Հայրապետը յստակօրէն իր կարծիքը յայտնեց նաեւ այս առիթով անդրադառնալով Թուրքիոյ ու Հայաստանի միջեւ կնքուած փրոթոքոլին, ուր Զուկցերիան որոշ դեր ստանձնած էր: Դեսպանը ժընելէն ըլլալով խօսակցութեան ընթացքին նաեւ անդրադարձ եղաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին ու այդ գծով Վեհափառ Հայրապետին դերակատարութեան:

ԿՐՕՆԻ ՄԻԱՑԵԱԼ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎ

Երեքշաբթի, 1 Փետրուար 2011, Մարոնիներու Պէյրութի Առաջնորդարանին մէջ, տեղի ունեցաւ կրօնական դասագիրքերու պատրաստութեան համատեղ յանձնախումբին ժողովը, որուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողքին մաս կը կազմեն Մարոնի, Յոյն Ուղղափառ, Յոյն Կաթոլիկ, Բողոքական եւ Լատին Եկեղեցիներու ներկայացուցիչները: Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ յանձնախումբի ժողովին մասնակցեցաւ Հոգջ. Տ. Մասիս Վրդ. Զօպուեան:

Այս յանձնախումբը կազմուած է 1996-ին Միջին Արեւելքի քրիստոնէայ Հոգեւոր Պետերուն կողմէ եւ ցարդ լոյս ընծայած արաբերէն եւ ֆրանսերէն լեզուներով Լիբանանի նախակրթարանի եւ երկրորդական վարժարաններուն համար մանկավարժական մօտեցումով եւ էքիմէնիք ոգիով պատրաստուած պատկերազարդ կրօնի դասագիրքեր:

«ԽԱԶԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն ներս հաստատուած «Խաչիկ Պապիկեան Հիմնադրամը», Հրատարակչական աշխատանքներուն առընթեր, նաեւ լծուած է կրթամշակութային գործունէութեան: Վեհափառ Հայրապետին հովանաւորութեամբ յատուկ



յանձնախումբեր կը հսկեն յիշեալ աշխատանքներուն:

Այս ծիրէն ներս անցեալ տարի տեղի ունեցան երգի, հայ լեզուի, հայոց պատմութեան ու կրօնի յատուկ մրցաշարքեր՝ մասնակցութեամբ բոլոր հայ վարժարաններուն: Մրցաշարքի ակարտին, մրցանակակիրներուն տրուեցան նիւթական նուէրներ եւ բոլոր մասնակիցներուն՝ յատուկ յուշանուէրներ:

Կրթական այս տարեշրջանին եւս նոյն աշխատանքները կը շարունակուին: Այս տարի, փոխան երգի տեղի պիտի ունենայ ասմունքի մրցում: Հետագային համար կը մշակուին նոր ծրագիրներ: Այս աշխատանքներուն նպատակն է առաւելագոյն չափով օգտակար հանդիսանալ մեր նոր սերունդի հայակերտումին: Կը մտածուի նաեւ հանգրուանային կերպով համասփիւռքեան տարողութիւն տալ յիշեալ մրցանքներուն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԿԱՆԱՀԱՐՈՒՄԸ

Կիրակի 27 Մարտ 2011-ի կանուխ առաւօտեան, Ջահլէի ասորի ուղղափառ եկեղեցւոյ դէմ ականահարման ոճրային արարքին առիթով Արամ Ա. Կաթողիկոս հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցաւ ասորի ուղղափառ եկեղեցւոյ Իգնատիոս Ջագգա Իուսս Պատրիարքին հետ՝ խստիւ դատապարտելով ասորի եկեղեցւոյ դէմ ոճրային արարքը եւ նշելով, որ քրիստոնէայ-իսլամ գոյակցութիւնը դարերու վրայ տարածուած իրողութիւն է եւ նման ոճրային արարքներ չեն կրնար խանգարել այդ գոյակցութիւնը, որ Միջին Արեւելքի ամէնէն յատկանշական երեւոյթներէն է: Վերափառը նաեւ իր զօրակցութիւնը յայտնեց ասորի ուղղափառ քոյր եկեղեցւոյ:

**ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՋ
Ս. ԱԹՈՒՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ**

ԿԻՐԱԿԻ, 6 ՓԵՏՐՈՒԱՐ 2011: Դ. զկնի Ծննդեան:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Վարդան Աբղ. Թաշճեան:

ԿԻՐԱԿԻ, 13 ՓԵՏՐՈՒԱՐ 2011: Ե. զկնի Ծննդեան:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Արտակ Աբղ. Արապեան:

ԿԻՐԱԿԻ, 20 ՓԵՏՐՈՒԱՐ 2011: Զ. զկնի Ծննդեան:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Հրանդ Աբղ. Թաշճեան:

ԿԻՐԱԿԻ, 27 ՓԵՏՐՈՒԱՐ 2011: Է. զկնի Ծննդեան:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Ղեւոնդ Վրդ. Բէնդէզեան:

ԿԻՐԱԿԻ, 6 ՄԱՐՏ 2011: Ա. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան:

սաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեան:

ԿԻՐԱԿԻ, 13 ՄԱՐՏ 2011: Է ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Բ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՐՏԱՔՍՄԱՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Մակար Վրդ. Աշգարեան: Քարոզեց՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեան:

ԿԻՐԱԿԻ, 20 ՄԱՐՏ 2011: ԺԴ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Գ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՆԱՌԱԿԻՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթճեան: Քարոզեց՝ Հոգչ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 27 ՄԱՐՏ 2011: ԻԱ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Դ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ՏՆՏԵՍԻՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգչ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան: Քարոզեց՝ Հոգչ. Տ. Մասիս Վրդ. Զօպուլեան: